

Ա Ղ Տ Ա Մ Ա Ր



Ա Ղ Թ Ա Մ Ա Ր Ի
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



ՀՐԱՄԱՆԱԻ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա Ղ Թ Ա Մ Ա Ր Ի
Պ Ա Տ Մ Ա Մ Շ Ա Կ ՈՒ Թ Ա Յ Ի Ն
Ժ Ա Ռ Ա Ն Գ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Հեղինակ-կազմող՝ դոկտոր Կարեն Մաթևոսյան



Ար. ԷԶՄԻԱԾԻՆ - 2013

ՀՏԳ- 941 (479.25) : 72 : 008
ԳՄԳ- 63.3(2Հ)+85.11+71
Մ151

**Տպագրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ**

Մաթևոսյան Կ.

Մասնակից հեղինակներ՝ Լուսինե Թումանյան, Արփիմե Ասրյան

Մ151

Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը / Հեղինակ-կազմող՝ Կարեն Մաթևոսյան.
– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012 - 176 էջ:
Գրքում ներկայացվում է Վանա լճի Աղթամար կղզին իր պատմության կարեւոր դրվագներով եւ մշակութային հարուստ ժառանգությամբ, որի բաղկացուցիչներն են Գագիկ Արծրունի թագավորի կառուցած, մեծարվեստ պատկերաքանդակներով զարդարված Սուրբ Խաչ եկեղեցին, կղզու մյուս եկեղեցիներն ու կառույցները, աղթամարյան հարյուրից ավելի ձեռագրերը և մշակութային այլ արժեքներ:

Նախատեսված է Հայոց պատմությամբ ու մշակույթով զբաղվող մասնագետների եւ ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԳ- 941 (479.25) : 72 : 008
ԳՄԳ- 63.3(2Հ)+85.11+71

իձ՝նիձՍ չ Ս»Ի»Կ՞եձՁՁՍՍՍ

Պ՞՝ձԵ՞Ե ձ՞Ձձ՞ՁՍՍՍ

ISBN 978-9939-59-101-8

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012թ.
© Կարեն Մաթևոսյան, 2012թ.



Վանա լճի Աղթամար կղզուն 915-921թթ. Գագիկ Արծրունի թագավորի կառուցած Սուրբ Խաչ եկեղեցին իր բացառիկ պատկերաքանդակների շնորհիվ դասվում է հայ եւ համաշխարհային արվեստի գլուխգործոցների շարքին: Աղթամարն ինչպես եկեղեցու կառուցման ժամանակ, այնպես էլ դրանից հետո՝ ընդհուպ մինչեւ Առաջին աշխար-



Սուրբ Խաչ
եկեղեցին հարավից

համարտի եղերական տարիները, եղել է Հայոց ամենամշանավոր հոգեւոր եւ մշակութային կենտրոններից մեկը: Միջնադարում այն Վասպուրականի Արծրունյաց թագավորության մայրաքաղաքն էր (10-11-րդ դդ.)՝ կառուցապատված հստակ նախագծով, պաշտպանական համակարգերով, զարդարված թագավորական շքեղ պալատով եւ այլն: 12-րդ դարից կղզին դարձավ Աղթամարի կաթողիկոսության կենտրոնը, որի գործունեությունը հատկապես 14-16-րդ դարերում պատմական մեծ հետաքրքրություն է



Սուրբ Ստեփանոս
եկեղեցու ներքը

ներկայացնում: Կղզում այդ շրջանում եվրոպացի այցելուների վկայությամբ շուրջ 600 տուն զուտ հայ բնակչությամբ քաղաք կար, որը նրանք կոչում են «Արմենիկ»: Աղթամարում այս շրջանում եւս կառուցվել են եկեղեցիներ ու այլ շինություններ, իսկ կաթողիկոսներից ոմանք, որոնք Արծրունյաց տոհմի ժառանգներ էին, փորձում էին իրենց գործունեությամբ հավատարիմ լինել նախնյաց ավանդներին, վառ պահել պետականության գաղափարը:



Աղթամարը եղել է հայ մշակույթի, գրչության, մանրանկարչական արվեստի եւ ձեռագրապահպանման խոշոր կենտրոն, որի հարյուրավոր նմուշներ հասել են մինչեւ մեր օրերը: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ պահվում է Աղթամարում գրված ու նկարազարդված շուրջ ինը տասնյակ ձեռագիր մատյան, Սուրբ Էջմիածնի Գանձատանը ցուցադրվում է Աղթամարի մեռոնի արծաթյա զարդարուն կաթսան, Հայաստանի մյուս եւ արտասահմանյան թանգարաններում նույնպես կան աղթամարյան եկեղեցածիսական առարկաներ ու նյութեր:

Չնայած իր հարուստ պատմական անցյալին ու մշակութային հսկայական ժառանգությանը՝ Աղթամար անունն այսօր սովորաբար զուգորդվում է միայն Սբ. Խաչ եկեղեցու հետ: Պատմական հանգամանքների բերումով այժմ Թուրքիայի տարածքում գտնվող Աղթամարը դարձել է այդ երկրի զբոսաշրջության գրավիչ կետերից մեկը, որի շնորհիվ համապատասխան գերատեսչության միջո-

ցով 2003-2007թթ. իրականացվել է եկեղեցու նորոգումը: Անկասկած Սբ. Խաչի նորոգումը նաեւ համաշխարհային քաղաքակրթական ժառանգության նկատմամբ հարգանքի արտահայտություն է եւ զնահատելի քայլ: Սակայն պետք է ցավով արձանագրել, որ Սուրբ Խաչի հարյուրավոր քույր եկեղեցիներ (նրան տարեկից, ավելի հին կամ նոր) Վանալճի շրջակա գավառներում տասնամյակներ ի վեր ոչնչացման են ենթարկվել...

Հայ ժողովրդի համար Աղթամարը սուկ ճարտարապետական հրաշալիք է, այլեւ պատմություն, բազմաշերտ մշակութային ժառանգության աղբյուր, նաեւ ավանդական սրբավայր: Սույն ժողովածուի նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել Աղթամարի պատմության կարեւոր դրվագները, Սուրբ Խաչը եւ աղթամարյան պատմամշակութային թանկագին ժառանգությունը:

◀ Սուրբ Խաչ եկեղեցին արեւելքից



ՎԱՆԱ ԼԻՃԸ ԵՎ ԱՂԹԱՍԱՐ ԿՂԶԻՆ

«Սուրբ կղզի, սուրբ ծով, սուրբ երգ,
ամենասուրբ տեղիք, համով հոտով լիք»
Գարեգին ՍՐՎԱՆՉՏՅԱՆ (1840-1892)


Վանա լիճը գտնվում է Հայկական լեռնաշխարհի սրտում՝ Տարոն-Տուրուբերան եւ Վասպուրական աշխարհների միջեւ, ծովի մակերեւոյթից 1720 մ բարձրության վրա: Լճի մակերեսը 3760 քառակուսի կիլոմետր է (ավազանը՝ մոտ 17, 8 հազ. քառ. կմ), երկարությունը՝ շուրջ 125 կմ, առավելագույն լայնությունը՝ 51 կմ, խորությունը՝ մինչեւ 145 մ: Լիճը սնվում է մթնոլորտային տեղումներից, ստորերկրյա ջրերից եւ գետերից (լիճ են թափվում ավելի քան 30 գետ եւ գետակ): Անհոսք, աղի լիճ է, ձմռանն ամբողջովին չի սառցակալում: Օրգանական աշխարհն աղքատ է, ունի տառեխ մանրածուկը: Լճի մակարդակը պարբերաբար տատանվում է: Հայտնի է, որ 1838-1840թթ. լճի մակարդակը բարձրացել է 3-4 մետրով եւ այժմ էլ գտնվում է բարձրացման փուլում: Դրա հետեւանքով ջրի տակ են մնացել հին Արճեշ քաղաքը, ինչպես նաեւ երեք կղզի:



Վանա լիճը հայկական աղբյուրներում կոչվել է ծով եւ տարբեր սկզբնաղբյուրներում հիշատակվում է տարբեր անուններով, ինչպես՝ «Նաիրի երկրի ծով» (Աքքադական սեպագրերում), «Տոսպա ծով» (համանուն գավառի անունով), «Բզնունյաց ծով» (համանուն գավառի ու նախարարության անունով), «Ռշտունյաց ծով», «Արծրունյաց ծով» (նույնանուն նախարարական տոհմերի անունով), «Վասպուրականի ծով» (նահանգի անունով), «Արճեշի ծով» (Արճեշ քաղաքի անունով), «Աղթամարի ծով» (Աղթամար կղզու անունով):

Վանա լճի ափամերձ շրջանում գտնվող ամենահին եւ նշանավոր բնակավայրը Վանն է (Ուրարտու-Արարատի մայրաքաղաք Տուշպա), որի անունն էլ այժմ կրում է լիճը: Իսկ միջնադարում նշանավոր են եղել նաեւ լճի հյուսիսարեւմտյան կողմում գտնվող Արճեշը, արեւմուտքում՝ Խլաթն ու Բաղեշը, հարավարեւմուտքում՝ Ոստանը, բազմաթիվ այլ մեծ ու փոքր բնակավայրեր եւ վանքեր, որոնցից ամենահայտնին հարավային ափամերձ Նարեկավանքն է:

Լճի ափերը երիզող լեռնաշղթաներն ու լեռները նրա ջրերի կապուտակ հայելու հետ հոգեզմայլ տեսարաններ են կազմում: Հարավում Կորդվաց լեռներն են, որի գեղեցիկ գագաթներից է Արտոսը, արեւելքում բարձրանում է Վասպուրականի խորհրդանիշ երկգագաթ Վարագը, հյուսիսային մասում վեր է խոյանում փառավոր Սիփանը, արեւմուտքում գտնվում է Նեմրուքը:



Վանա լիճը և կղզիները Ե. Չելեպիի բարտեզում (17-րդ դ.)

Վանա լիճն այժմ ունի չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Կտուց և Առտեր, որոնք բոլորն էլ միջնադարում բնակեցված և պատմական ու մշակութային հարուստ անցյալ ունեցող կենտրոններ են եղել: Ամենափոքրն Աղթամարից ոչ հեռու՝ դեպի արեւմուտք և Նարեկ գյուղի դիմաց գտնվող Առտերն է, որն ունի Սբ. Աստվածածին անունով եկեղեցի: Կղզու անունը երկու ձևով է մեկնաբանվում. մեկն այն է, որ Աղթամարի վանքին պատկանող այս կղզում եղել են վանքապատկան արտերը, որի պատճառով կոչվել է «Արտեր» (հնչյունափոխությամբ՝ Առտեր):

Մյուս բացատրությունը ծագում է ավանդապատումից, ըստ որի՝ Սուրբ Գրիգոր Նարեկացին ճգնության և Աստվածածնի բարեխոսությունը հայցող ջերմեռանդ աղոթքի պահին մի ձայն է լսում և աչքերը ծովի կողմը բարձրացնելով՝ կղզու վրա տեսնում է Մարիամ Աստվածածին՝ մանուկ Յիսուսը գրկին, իսկ երկնային ձայնն ասում է. «Գրիգոր, եկ առ Տէր, որում ցանկանալով ցանկանայիր» (այստեղից էլ՝ «Առ Տէր», Առտեր



Առտեր կղզու եկեղեցին

անունը): Այդ ձայնի կանչով նա ծովի վրայով գնում և կղզում ծունկի է գալիս պաշտելի Տիրամոր և Մանկան առջև:

Ավելի մեծ և նշանավոր են Լիմ և Կտուց կղզիները, որոնք գտնվում են լճի հյուսիսարևելյան կողմում: Երկուսն էլ միջնադարում եղել են նշանավոր վանք-անապատներ և ըստ ավանդության՝ հիմնադրվել են Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռամբ: Լիմը չափերով Վանա լճի ամենամեծ կղզին է: Անունը երբեմն գրվում է «Լիմն» և ենթադրաբար առաջացել է հունարեն Լիմնի (լիճ) կամ «լիմեն» (նավահանգիստ) բառերից: 14-րդ դարից այստեղ հիշատակվում են Սբ. Գեւորգ, Սբ. Կարապետ, Սբ. Աստվածածին եկեղեցիները: Բայց տեղի անապատը հիշվում է ավելի վաղ՝ 884թ., երբ այստեղ մի ձեռագիր է գրվել: 1305թ. Աղթամարի Չաքարիա Ա Սեֆեդինյան կաթողիկոսը Լիմի վանահայր Յովհաննես Եպիսկոպոս Արծրունեցու աջակցությամբ հիմնովին վերաշինել է Սբ. Գեւորգ եկեղեցին, կրոնավորների բնակատեղիները, նվիրել կալվաքծներ: 1621թ. Սյունյաց Մեծ անապատից այստեղ է տեղափոխվել Ներսես Մոկացի վարդապետն իր աշակերտների հետ և վերսկսել 16-րդ դարում անկում ապրած անապատական կյանքը:



Լիմ անապատ

Կտուց կղզու (գտնվում է Վան քաղաքից մոտ 19 կմ հյուսիս-արեւմուտք) անունն առաջացել է նրա դիրքից, քանի որ այն լճի մեջ մխրճված, կտուց հիշեցնող նույնանուն հրվանդանի մի մասն է, որը լճի մակարդակի բարձրա-

նալու պատճառով վերածվել է կղզու: Այստեղ միջնադարում կառուցվել են Սբ. Խաչ, Սբ. Կարապետ եկեղեցիները: Կտուց անապատի գործունեության, նրա գրչության կենտրոնի մասին հստակ տեղեկությունները պատկանում են 15-րդ դարին: 17-րդ դարում Լիմ անապատից մի խումբ միաբաններ տեղափոխվում են Կտուց: 1712թ. վանահայր Սիմեոն արքեպիսկոպոսը հիմնովին վերակառուցում է Սբ. Կարապետ եկեղեցին: 17-20-րդ դդ. այստեղ կար միայն Սբ. Կարապետ եկեղեցին, որի Ավագ խորանը կոչվում էր Սբ. Աստվածածին, աջակողմյանը՝ Սբ. Կարապետ, ձախակողմյանը՝ Սբ. Ստեփաննոս, տաճարից արեւմուտք կար ընդարձակ գավիթ՝ Սբ. Մինաս եւ Սբ. Հակոբ սեղաններով, իսկ գավիթից հյուսիս՝ Սբ. Հրեշտակապետաց մատուռը:

17-18-րդ դարերում Լիմ եւ Կտուց անապատները համատեղ գործունեություն են ծավալել, որի մասին է վկայում այժմ Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող շրջաբերական նամակը՝ «Լիմ եւ Կուտուց կոչեցեալք ծովապատ սրբոց անապատաց»՝ (հայտնաբերել է Վ. Փունարջյանը)՝ գրված



Կտուց կղզին եւ Ս. Կարապետ եկեղեցին



18-դ դարի վերջին, որտեղ նաեւ պատկերված են երկու կղզիներն իրենց հիմնադրմանն ու միաբանության կյաքին վերաբերող տեսարաններով:

Լիմ եւ Կտուց անապատները եղել են գրչության եւ ձեռագրապահպանման նշանավոր կենտրոններ, որոնցում գրվել, ընդօրինակվել, նկարազարդվել ու կազմվել են բազմաթիվ ձեռագրեր: Մենաստաններն ամայացել են Մեծ եղեռնի ժամանակ, բայց այստեղ պահված հարյուրավոր ձեռագրերի մեծ մասը՝ Լիմից՝ 300, Կտուցից՝ 202 ձեռագիր, բարեբախտաբար, հնարավոր է եղել տեղափոխել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Աղթամար կղզին գտնվում է Վանա լճի հարավ-արեւմուտքում, տարածությունը մոտ 0.7 քառակուսի կմ է, հեռավորությունը ցամաքից՝ 3-3.5 կմ, ավերի ընդհանուր երկարությունը՝ մոտ 4 կմ: Կղզու ամենաբարձր կետը «Բարձր քարն» է (ծովի մակերեսից բարձր է 1912 մ): Աղթամարի հարավային եւ հարավարեւմտյան ավերի ժայռոտ են, երբեմն՝ զառիթափ (լճի մակարդակից 200-250 մ բարձր): Դեպի արեւելք



ցածրանալով կղզու մակերեսույթը վերածվում է հարթության: Կղզին առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում, կազմված է կրաքարերից եւ ավազաքարերից: Մթնոլորտային տեղումները տարեկան հասնում են մինչեւ 500 մմ: Հիմնականում ծածկված է տափաստանային բուսականությամբ, թփուտներով, նշենիներով: Քաղցրահամ ջրի աղբյուր չունի, սակայն հնում ունեցել է ջրհոր: Կղզու եւ Սբ. Խաչ վանքի 20-րդ դարի սկզբի նկարագրության մեջ Ս. Էփրիկյանը գրում է. «Վանքի պարսպէն դուրս կայ նորատունկ խաղողի որթատունկ մը եւ սակաւ ծառեր, եւ ջրհոր մը, որ կը մատակարարէ ամբողջ վանքի ջուրը»¹: Պարզ է, որ միջնադարում եւս, հատկապես այն ժամանակ, երբ կղզին բազմամարդ բնակչություն ուներ, այստեղ օգտվել են ջրհորից: Հիշատակման արժանի է նաեւ այն, որ ըստ Անանուն Արծրունու, երբ Գագիկ

¹ Ս. Էփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 103:

◀ Լիմ եւ Կտուց անապատների շրջաբերական նամակի ճակատը (18-րդ դ.)



Արծրունին կղզու վրա քաղաք հիմնեց, այնտեղ աղբյուր կար. «Տնկվեցին նաև բազմաթիվ ծառեր, որոնք ոռոգեցին անուշահամ աղբյուրի անհատնում ջրերով, որ նախախնամող Աստծո կամքով կա քաղաքի մեջ»¹:

Աղթամար կղզիս արևելքից

¹ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, (աշխարհաբար թարգմ., ներածութ. եւ առաջաբան Վ. Վարդանյանի), Երեւան, 1999, էջ 264: Հատվածի գրաբարը՝ «Եւ ծառատունկ բազում, զոր ոռոգեալ արբուցանեն ի բարեհամ եւ անսպառ աղբերէն, որ ականարկելովն խնամողին Աստուծոյ կայ ի մէջ քաղաքին» (Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, 2006, էջ 324):



Կղզու անունն առայժմ չունի գիտական հիմնավոր ստուգաբանություն¹, բայց այդ մասին պահպանվել է հայկական ժողովրդական մի ավանդություն²:

¹ Առաջ են քաշվել կղզու անվան «յաղթող Մարաց» բառակապակցությունից կամ «աղխ» (ժողովուրդ) բառից առաջացած լինելու տեսակետները (տե՛ս Յ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 87): Թուրքերը վերջին տարիներին սկսել են կղզին կոչել «Ակղանար»՝ այն թուրքերեն թարգմանելով «Սպիտակ երակ», որը ոչ միայն իմաստազուրկ է, այլև անհեթեթություն (նոնսենս), քանի որ «Աղթամար» անունը հայկական աղբյուրներում հիշատակվում է 5-6-րդ դարերում, իսկ թուրքերն այդ տարածքում հայտնվել են 11-րդ դարում:

² Աղթամար կղզու անվան ծագման մասին («Ախթամար» տարբերակով) ժողովուրդը հյուսել է մի գեղեցիկ ավանդություն, որը պատմում է այն մասին, թե ինչպես ամեն գիշեր սիրահար մի պատանի (ըստ տարբերակներից մեկի՝ Ռշտունյաց իշխանագուն), լողալով հասել է կղզի՝ իր սիրած աղջկա՝ Թամարի մոտ: Տղային գիշերվա խավարում դեպի կղզի է առաջնորդել Թամարի վառած խարույկը: Օրերից մի օր այս մասին տեղեկանալով՝ չարական մարդիկ մարում են Թամարի վառած խարույկը, եւ սիրահար տղան, լույսը չտեսնելով, մոլորվում է ծովում ու խեղդվում՝ վերջին շնչուն հառաչելով Թամարի անունը՝

Աղթամար կղզին բնակելի է եղել հնագույն ժամանակներից: Նրա հյուսիսարեւմտյան անկյունում պահպանվել են կիկլոպյան ամրոցի պարսպապատերի հետքեր, որոնք, ըստ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, մինչուրարտական բնակավայրի մնացորդներ են:

Պատմահայր Մովսես Խորենացու (5-րդ դար) մի վկայությունից երևում է, որ Աղթամարում 4-րդ դարում եղել է Ռշտունյաց տոհմի նախարարների ամրոց: Ըստ պատմիչի՝ Տիրան թագավորի (338-350) ժամանակ նրա հրամանը մերժած Ռշտունյաց տեր եւ «Հայոց հարավային գնդի զորապետ» Ջորայի ընտանիքն ապաստանած է եղել Աղթամարում՝ «գամուն նոցին զԱղթամար», որը զրավվել է թագավորի հրամանով¹:

10-րդ դարում ապրած Անանուն Արծրունին կղզու անցյալի մասին հայտնում է. «ասում են, թե սրանից առաջ այստեղ շինություն են կատարել Դավիթ Սահառունին, Ռաշան Ռշտունին եւ Բարզավիրանը»²: Ինչպես Սեբեոսի պատմությունն է վկայում (7-րդ դ.), հեղինակի ժամանակակից Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին Աղթամարն ամրացրել է այստեղ ապաստարան ու զորակայան է հաստատել («շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զբազում գաւառս»)՝ Սակայն Աղթամարի իրական ծաղկունը կապվում է Արծրունյաց թագավորության հիմնադրման եւ Գագիկ Ա Արծրունի թագավորի գործունեության հետ:

«Ա՛խ, Թամար...» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ 83-84): Իբրեւ թե այս բառերն էլ դարձել են կղզու անունը՝ «Ախթամար»: Սիրային այս գողտրիկ պատմության հիման վրա Հովհաննես Թումանյանը գրել է «Ախթամար» բալլադը, որի բառերը նաեւ դարձել են սիրված երգ:

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1991, էջ 273-274, հմմտ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1997, էջ 221:

² Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 263:

³ Պատմիչն ուզում է ասել, որ իշխանը, ամրացնելով Աղթամար կղզին, վտանգի պահին այնտեղ ապաստարան էր բազմաթիվ գավառների բնակիչներին: Սեբեոսի պատմության մեջ Աղթամարը հիշատակվում է եւս մի քանի անգամ՝ կապված Թողորոս Ռշտունու գործունեության հետ: Տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությանը Գ. Աբգարյանի, Երեւան, 1979, էջ 134, 166, 169, 172, Հայ ժողովրդի պատմություն, հ II, Երեւան, 1984, էջ 312, 320:



ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆ ԱՂԹԱՄԱՐՈՒՄ



Հայոց պատմության մեջ Արծրունյաց թագավորության հիմնադիր Գագիկ Արծրունու (889-943) դերը երկինաստ է: Մի կողմից նա Բագրատունիների գլխավորությամբ արաբական լուծը թոթափած ու 885թ. վերականգնված Հայոց պետականության առաջին պառակտողը եղավ, բայց մյուս կողմից նրա հիմնած Վասպուրականի թագավորությունը դարձավ ամուր պետություն, որը, Հայաստանի հարավային շրջանները միավորելով, հարյուր տարուց ավելի տեղի հայության ապահովության ու բարգավաճման երաշխավորը դարձավ¹: Ինքը՝ Գագիկը, կյանքն անց է կացրել փորձությունների, պայքարի ու պատերազմների մեջ, բայց նաեւ իրագործել այդ ժամանակաշրջանի հայ իրականության մեջ աննախադեպ եւ ծավալուն շինարարական աշխատանքներ:

Այս շրջանի պատմական հայտնի իրադարձությունների ներկայացումը դուրս է մեր նպատակից, ուստի միայն համառոտակի հիշատակենք առավել կարեւոր մի քանի դրվագ, մանավանդ որ դրանով պարզ է դառնում նաեւ, թե ինչու Գագիկն իր նորահռչակ թագավորության մայրաքաղաքը հաստատեց Աղթամար կղզում:

Հայոց Սմբատ Ա Բագրատունի (890-914) թագավորի գահակալության սկզբում հայկական պետության սահմաններն ավելի ընդարձակվեցին: Գրեթե ամբողջ Մեծ Հայքը մտավ Բագրատունյաց միասնական թագավորության մեջ, եւ պատահական չէ, որ այս գահակալը ստացավ «Տիեզերակալ» տիտղոսը²: Սակայն նրա օրոք հակամարտութ-

¹ Իր գոյության ավատին Բյուզանդիային անցնելու պահին (շուրջ 1020թ.), Վասպուրականի թագավորության կազմում կար 8 քաղաք, 4 հազար գյուղ, 72 ամրոց, 115 վանք: Վասպուրականում թագավորական գահի գոյությունն իր դրական ազդեցությունն ունեցավ նաեւ հետագա ժամանակներում, պետականության ավանդույթի պահպանման փորձերի տեսանկյունից:

² Հ. Մարգարյան, Բագրատունի թագավորների «տիեզերակալ» տիտղոսը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 99-106:

◀ Գագիկ Արծրունի, գծանկարը՝ Փանոս Թերլեմեզյանի (1914 թ.)



Սուրբ Խաչ եկեղեցու գավթի ներսը

յուն սկսվեց Հայաստանի եւ Ատրպատականի ամիրայութեան միջեւ: Բանն այն է, որ թեւս վերականգնվել էր Հայոց թագավորությունը, սակայն պահպանվել էր նրա՝ արաբական խալիֆայության նկատմամբ ունեցած հարկատուի կարգավիճակը: Հարկն ուղարկվում էր Ատրպատականի ամիրայության միջոցով, եւ այդ հանգամանքը շահարկելով՝ տեղի ամիրաները միջամտում էին Հայաստանի գործերին: 890-ական թվականներից սկսվեցին ռազմական ընդհարումները Հայաստանի եւ Ատրպատականի ամիրայության միջեւ, որոնք ընթանում էին փոփոխական հաջողություններով:

Ատրպատականի ամիրա Յուսուֆը որոշում է օգտվել Հայաստանի ներքին հակասություններից: Հիշյալ շրջանում Վասպուրականի Արծրունի եւ Սյունյաց իշխանների միջեւ վեճ էր ծագել Նախիջեւան քաղաքի համար, որն աշխարհագրականորեն Վասպուրականի մաս էր կազմում:

Սկզբում Սմբատ Բագրատունին վեճը լուծում է հօգուտ Արծրունիների, սակայն հետո որոշումը փոխելով՝ քաղաքը հանձնում է Սյունյաց իշխաններին: Դրանից չափազանց դժգոհ մնացած Արծրունի զահերեց իշխան Գագիկին, որը Սմբատի քրոջորդին էր, Յուսուֆը խոստանում է ոչ միայն վերադարձնել Նախիջեւանը, այլեւ խալիֆից նրա համար արքայական թագ բերել, ինչը եւ կատարում է 908 թվականին¹: Հաջորդ տարի Յուսուֆի եւ Գագիկ Արծրունու միացյալ զորքերը հարձակվում են Սմբատ թագավորի վրա, որի բանակը պարտության է մատնվում, իշխաններից շատերը լքում են նրան:

¹ Գագիկը խալիֆից երկրորդ անգամ թագ է ստանում 919 թ.:

Երկիրը մատնվում է ավերի ու կողոպուտի: Հասկանալով, որ Սմբատի դեմ իր ընդվզումը վեր է ածվել հայրենի երկրի նկատմամբ դավաճանության, 912 թվականին Գագիկը, հարմար պահ ընտրելով, իշխաններով ու զորքով հեռանում է Յուսուֆից եւ քաշվում Վասպուրական¹: Շուրջ մեկ տարի Կապույտ բերդում պաշարված Սմբատը երկրի ավերածությունը կանխելու համար անձնատուր է լինում, սակայն Յուսուֆը նրա հետ չի բանակցում, այլ 914թ. Դվինում դաժան մահապատժի է ենթարկում (նրան գլխատում են եւ մարմինը խաչում քաղաքի դարպասներից մեկի վրա): Այդ եղեռնագործությունը վերջնականապես փոխում է Գագիկ Արծրունու դիրքորոշումը, որը, գիտակցելով իր սխալը, զենքն ուղղում է արաբների դեմ: Իսկ բուն երկրում հակաարաբական պայքարը գլխավորում է թագաժառանգ Աշոտ Բ Երկաթը, որը հաջողության է հասնում միայն տարիներ անց: Հետագայում Արծրունիների եւ Բագրատունիների հարաբերությունները կարգավորվում են այնքան, որ Աշոտ Բ-ին հաջողած նրա եղբորը՝ Աբասին, 928թ. թագադրում է հենց Գագիկ Արծրունին: Ավելացնենք, որ վերջինս իրեն համարում էր «Հայոց թագավոր» եւ այդպես էլ 921 թվականին գրում է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու ձախակողմյան ավանդատան պատին հատվածաբար պահպանված արձանագրության մեջ. «...կտակի իմով ձեռամբ՝ Գագկա Հայոց արքայիս...»²: Իսկ նրա կինը՝ Մլքեն, իր ստացած շքեղագարդ Ավետարանը Վարագա վանքին նվիրելով, արդեն 908թ. իրեն հորջորջում է «Հայոց թագուհի»³:

¹ Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021թթ., Երեւան, 1969, էջ 86-88:
² Ե. Լալայեան, Վասպուրական, Բանահյուսություն, Նշանաւոր վանքեր, պր. Ա, Թիֆլիս, 1912, էջ18: «Հայոցի» բառի «Հաոց» գրության ձեւը հանդիպում է այդ եւ ավելի վաղ շրջանի բազմաթիվ վիճագրերում: Գագիկ Արծրունու ժամանակ մեկ այլ արձանագրություն, ցավոք եղծված, պահպանվել է արտաքուստ, հարավային պատին, տանիքի տակ. «[յաշ]խարհակալ թագաւորութ[ան]... Հայկազեան [շինե]ցի գգունբեթ... Հայոց» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներտիկ, 1864, էջ 277):
³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 49:


Ահավասիկ վերը նշված դեպքերի եւ խռովահույզ ժամանակի թելադրանքն էր, որ Գագիկին ստիպեց հայացքն ուղղել դեպի Աղթամար, որը հատկապես արաբների վերահաս վրեժխնդրությունից ազատվելու համար անփոխարինելի ապաստարան էր: Հատկանշական է, որ նա սկզբում որպես նստավայր բարեկարգել ու ամրացրել էր ծովահայաց Ոստան քաղաքը, այստեղ պալատ կառուցել, պարսպել «զորավոր վեմերով»¹: Հայտնի է նաեւ, որ ամրացրել էր Վանի բերդը: Սակայն հավանաբար Սմբատի տխուր ճակատագիրն աչքի առաջ ունենալով՝ նախընտրում է թեկուզ ավելի մեծ ծախսերով, սակայն ավելի անմատչելի նստավայր ունենալ: Պատահական չէ, որ Աղթամարում քաղաքի շինարարության մասին պատմող Անանուն Արծրունին նույնպես ընդգծում է անվտանգության խնդիրը՝ նշելով, որ Գագիկը «հրաման տվեց, որպեսզի այն լինի բոլոր թշնամի հրոսակախմբերից փախած եկածների ապաստանի տեղ», իսկ պարիսպները նկարագրելիս նշում է, որ դրանք «ահեղակերպ» էին, «լայնամիստ բուրգերով ու բարձր աշտարակներով»²: Պատմիչը նաեւ հայտնում է, որ թագավորական հրամանով կղզու հարավային մասում, լիճը լցնելով ծանր եւ դժվար փոխադրելի ժայռաբեկորներով՝ ստեղծել են մոտ հինգ կանգուն (2.6 մ) բարձրությամբ ամբարտակ: Դրա վրա է բարձրացել պարիսպը՝ լայնամիստ ութ կոնտրֆորսերով եւ բազմաթիվ աշտարակներով: Մեծ պարիսպն ունեցել է հինգ ասպարեզ երկարություն (554 մ): Հաստահեղույս պատերին կից կառուցվել են նաեւ ընդարձակ շտեմարաններ, զինանոցներ եւ այլ օժանդակ շենքեր: Իսկ բուն ամբարտակի կառուցումով լճի մի հատվածն արհեստականորեն առանձնացվել է իբրեւ պաշտպանված փոքրիկ ծովածոց-նավահանգիստ (այն այժմ ջրի տակ է անցել):

Աղթամար քաղաքի շինարարության վերաբերյալ պատկերացում կազմելու համար դիմենք ժամանակակից պատմիչին՝ Անանուն Արծրունուն, որն այս մասին գրել է հենց

¹ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 262:
² Նույն տեղում, էջ 264:

Գագիկ Արծրունու հանձնարարությամբ, որով էլ պայմանավորված է գրության չափազանցություններով լի փառաբանական ոճը: Նա նախ նշում է թագավորի անմիջական մասնակցության մասին՝ գրելով. «...ինքը՝ թագավորը, հույժ խելացի ըմբռնմամբ բազմաթիվ ճարտարապետների հետ, վարպետի լարը ձեռքին, լեռան ստորոտում, որը կղզու գագաթն է, միաժամանակ տեղը նշանակեց եւ գծագրեց վայելուչ զբոսատեղեր, զցեց թագավորական հանգստավայրին վայելուչ պարիսպներ, փողոցներ, բուրաստաններ, պարտեզներ, թագավորավայել նստատեղեր»: Ինչպես տեսնում ենք, քաղաքը կառուցվել է նախապես մշակված հատակագծային հորինվածքով, կղզու բարձրադիր մասում կառուցվել է արքունական ապարանքը, եղել են փողոցներ, զբոսատեղիներ, ծառուղիներ:

Ապա պատմիչը գրում է ճարտարապետի ու վարպետների մասին: Այս հատվածում Մանվելի մասին գրելով՝ նրա անունը չի տալիս, այլ նշում է ավելի ուշ՝ Սբ. Խաչ եկեղեցու կառուցումը նկարագրելիս. «...արքայի դռանը հավաքվել էին բազում արհեստավորներ, պատվավոր մարդիկ՝ ժողովված երկրի տարբեր ազգերից, որոնք կարող էին անել արքայի կամեցածը եւ իսկույն գործը կատարում են համաձայն հրամանի: Թագավորը հրամայեց նրանցից մեկին՝ ճարտարապետ, իմաստուն եւ հանճարեղ մարդուն, շինելու քառանկյունի պալատ, որի լայնության եւ երկարության չափը քառասուն կանգուն էր (20.8 մ, խմբ.) նույնչափ էր եւ բարձրությունը»:



Սուրբ Խաչ եկեղեցու հատակագիծը



Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարի հատված

Ավելի մանրամասն է նկարագրվում պալատական կառույցը. «Սրա որմերի լայնությունն ուներ 3 մեծաքայլ չափ տարածություն: Որմերն անապակ կրի ու քարի զանգված էին, որ իրար էին խառնված, ինչպես կապարի ու պղնձի համաձուլվածքը: Պալատի շինվածքը՝ հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն՝ առանց սյուների, ինչը, արդարեւ, մտքից վեր է ու զարմանքի արժանի: Պալատն ուներ նաեւ կամարակապ խորաններ, անկյուններ եւ գեղապաճույճ բոլորապատեր, որոնց ո՛չ միտքը կարող է թվարկել, եւ ո՛չ էլ աչքերը զննել: Այն ուներ նաեւ երկնքի պես բարձր, ոսկեզարդ ու լուսաճաճանչ գմբեթներ, որոնց եթե մեկը կամենար նայել, իբր թագավորին պատիվ անելով՝ նախ պետք է հաներ գլխից խույրը եւ ապա տանջելով պարանոցը՝ հազիվ կարողանար նշմարել զանազան ներկերով նկարված պատկերները»¹:

Աղթամարի պալատում եղած որմնանկարների նկարագրությունն Անանուն Արծուրունու երկի ամենակարեւոր հատ-

վածներից է, քանի որ միջնադարյան Հայաստանի աշխարհիկ, հատկապես պալատական որմնանկարչության նմուշներ գրեթե չեն պահպանվել: «Պալատի շինվածքն այնքան ահեղ է ու զարմանալի, այնքան բարձր եւ մտքի համար անհասանելի, որ, օրինակ, եթե որեւէ իմաստուն մարդ մի խորանի բազում ժամեր նայի, դուրս գալուց հետո որեւէ մեկին ոչինչ չի կարող պատմել իր տեսածի մասին: Քանի որ նրանում [նկարված] է ոսկեզարդ գահույք, որի վրա երեւում է պատվական ճոխությամբ բազմած արքան՝

¹ Նույն տեղում, էջ 265: Աղթամարի պալատի ճարտարապետության մասին տե՛ս Ստ. Մնացականյան, Աղթամարի պալատը, Պատմաբանասիրական հանդես, 1980, էջ 58-74:

շրջապատված լույսի նման պատանիներով, ուրախարար սպասավորներով: Այստեղ են նաեւ գուսանների խումբը եւ աղջիկների՝ հիացքի արժանի խմբապարը, ինչպես նաեւ սուսերամարտիկների խմբերը, ըմբշամարտիկների կռիվները, առյուծների եւ այլ գազանների խմբեր, տեսակ-տեսակ պաճուճանքներով զարդարված թռչունների երամներ: Եթե որեւէ մեկը կամենա հաշվել այն բոլոր գործերը, ինչ կան այնտեղ, բազում չարչարանքներ հարկավոր կլինեն թե՛ իրեն եւ թե՛ լսողների համար»:

Կատարված աշխատանքի ահռելի ծավալը ցույց տալու համար պատմիչը գրում է. «Քաղաքում աշխատող գործավորներից վստահելի մի վերակացու մեզ պատմեց, որ պալատի շինության վրա բանեցվել է 200 հազար լիտր երկաթ. նա հավանորեն ու ճշմարտապես ավելի շուտ պակաս է ասել, քան թե առատությամբ ավելացրել է ու բազմապատկել: Իսկ փառաց պալատի դիրքը քաղաքի մեջ երեւում էր որպես մի մեծ բլուր, գավառի բոլոր կողմերից: Այն իր բարձրությամբ ավելի ցածր չէր, քան կղզու ժայռոտ ծայրը»:

Նկարագրական եւ փառաբանական իր շարադրանքը պատմիչը եզրափակում է՝ ուղիղ խոսքով դիմելով Գագիկ Արծուրունուն. «Ամներձենալի ամրություններով արքան պարսպեց նաեւ ամրոցի ծայրերը եւ նրա մեջ շինեց մեծամեծ շտեմարաններ ու համբարանոցներ, ինչպես նաեւ զանձերի, անհուն ու բազմաթիվ զենքերի ու ձիու զարդերի համար պահեստներ: Եվ եթե մեկը կամենա ըստ արժանավույն, մանրամասնաբար գովաբանել կառույցի բոլոր զարդերը, ոսկենախշ փողոցները եւ գմբեթածակ հարկերը եւ առավել ճոխությամբ մեկը մյուսից գերահրաշապես փայլող գահույքների տեղերը, կարծում եմ, որ անհասության ձգտելով՝ կտատանվի, որովհետեւ, իրոք, այն անհասանելի է: Բայց որքան մեր կարողությունն է, հարմարն ու պատշաճը կատարելով՝ կատարեցինք քո գեղեցիկ ցանկությունը, ո՛վ քաջագգի, մեծ Տան արդյունավոր եւ նախնական մեծ»¹:

¹ Նույն տեղում, էջ 263-266:



Ահա այսպիսին էր թագավորական նստոց Աղթամարը, որը պիտի ունենար նաեւ իր ճոխությանը համապատասխանող հոգեւոր պսակը՝ արքայաշէն եկեղեցին, որն էլ դարձավ Սուրբ Խաչը:

Քանի որ ստորեւ Սուրբ Խաչի ճարտարապետությանը եւ պատկերաքանդակներին անդրադառնալու ենք ավելի հանգամանորեն, համառոտակի նշենք նաեւ Գագիկ Արծրունու գահակալության շրջանի՝ Աղթամարին առնչվող մյուս հանգամանքների մասին: Դրանցից գլխավորը Հայոց կաթողիկոսական աթոռի ժամանակավոր հաստատումն է Աղթամարում:

Հայաստանյան վերը նշված անցքերի խռովահույզ տարիներին կաթողիկոս եւ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին (898-929) չկարողացավ մնալ արաբների ձեռքում գտնվող կաթողիկոսանիստ Դվինում եւ ուրիշ ապահով վայր չգտնելով՝ 927թ. գնում է Վասպուրական եւ կյանքի վերջին տարիներն անց կացնում Գագիկ Արծրունու հովանավորության ներքո: Դրանով կաթողիկոսական աթոռն էլ ժամանակավորապես հաստատվում է այստեղ: Այդ մասին Հայոց եկեղեցու պատմաբանը՝ Մաղաքիա պատրիարք Օրմանյանը գրում է. «Գագիկ Արծրունին փառաւոր կաթողիկէ մը հիմնած էր իր թագաւորութեան մէջ եւ քանի որ արքունական մեծագործ եւ անրացեալ պալատն

◀ Սուրբ Խաչ եկեղեցու ներսը



Սուրբ Խաչ եկեղեցու
գմբեթը ներսից

ալ Աղթամար կղզիին մեջն էր, անտարակոյս այստեղ ալ եղաւ Յովհաննէսի յատկացուած նոր հայրապետանոցը¹»: Մահից հետո Յովհաննէս Դրասխանակերտցին թաղվում է Վասպուրականի Չորավանքում, եւ նրան մեկ տարով հաջորդում է Ստեփանոս Բ Ռշտունի կաթողիկոսը (929-930): Վերջինիս, ինչպես նաեւ նրա հաջորդի՝ Թեոդորոս Ա Ռշտունու (930-941) գործունեության մասին տեղեկություն-

ները գրեթէ բացակայում են²: Իսկ Թեոդորոսի եղբոր՝ կաթողիկոս Եղիշե Ա Ռշտունու (941-946) մասին հայտնի է, որ նա ուղեկցել է Գագիկ Արծրունուն արաբների դեմ կատարված ռազմերթի ժամանակ եւ Խոր Վիրապի մոտ տեղի ունեցած հաղթական ճակատամարտի օրը մոտակա «Գինո» կոչվող բլրի վրա աղոթել է հայկական զորքի հաղթանակի համար³: Այդ ճակատամարտը տեղի է ունեցել 938թ.⁴, հետեւաբար Եղիշեի աթոռակալության սկզբի վերաբերյալ պատմագրության մեջ ընդունված թվականը (941) վերանայելի է: Սամվել Անեցին կաթողիկոսի աթոռակալությունը դնում է 937 թվականից՝ «Տէր Եղիսէ ամս է (7)» (որոշ ձեռագրերում՝ Եղիա)⁵: Սակայն շատ ավելի հետաքրքրական է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ հետագայում կատար-

¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Սբ. Էջմիածին, 2001, էջ 1243:

² Նոյն տեղում, էջ 1249-1260:

³ Թովմա Արծրունի եւ Անանու, Պատմություն Արծրունյաց տան, էջ 269:

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երեւան, 1976, էջ 63:

⁵ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 99:

ված մի ընդմիջարկության պարունակած տեղեկությունը: Մատենադարանի թիվ 1899 ձեռագրում Հայոց ՅՁԸ (939) թվականի դիմաց գրված է. «Ի տէր Եղիայէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա գիլի, շինեաց եւ կատարեաց անդ զեկեղեցին եւ է թաղած ի Բերդաձոր»:

Աղթամար կղզու դիմաց՝ Արտոս լեռան ստորոտում, Իլի բնակավայրում, Գագիկ Ա Արծրունի թագավորի կառուցած Քառասուն խորան Սբ. Աստվածածին եկեղեցու մասին քիչ տեղեկություններ են պահպանվել, եւ հայտնի էլ չէր, թե թագավորն ինչ նպատակով է կառուցել այն: Սույն ընդմիջարկության շնորհիվ կարծես պարզվում է իրողությունը: Գագիկն Աղթամարի եկեղեցին, որն իր մայրաքաղաքի գլխավոր եկեղեցին էր, բայց 927 թվականից՝ Յովհաննէս Դրասխանակերտցու գալուց հետո, դարձել էր նաեւ բազմանդամ սպասավորությամբ կաթողիկոսարանի եկեղեցին, վերցրել է Եղիշե կաթողիկոսից եւ նրան նոր նստավայր տվել կղզուց ոչ հեռու գտնվող Իլիում, ուր եւ հիմնել է գեղա-



Ռոմանկարների հատված

շեն եկեղեցի եւ համապատասխան միաբանական կացարաններ: Ուշագրավ է նաեւ այս կաթողիկոսի՝ Բերդաձորի վանքում (գտնվել է Առտեր կղզու դիմացի ծովեզերքից 2-3 կմ խորք) թաղված լինելու մասին նշումը, քանի որ ցայժմ ենթադրվել է, թե նա թաղվել է Աղթամարում¹:


Ստույգ հայտնի չէ, թե ինչն է եղել պատճառը, որ Գագիկը կաթողիկոսարանը տեղափոխել է Իլի², սակայն սա ուշագրավ փաստ է հետագա դեպքերի քննության տեսանկյունից, քանի որ, ինչպես հայտնի է, Եղիշեի հաջորդը՝ Անանիա Ա Մոկացին (946-968), հեռացավ Վասպուրականից, գնաց Աբաս Բագրատունու մոտ՝ նախ Կարս, ապա Շիրակի Արգինա ավան, իսկ նրա հաջորդներն աթոռը փոխադրեցին Բագրատունյաց մայրաքաղաք Անի:

Գագիկի վերաբերյալ ավելացնենք, որ նա, իր թագավորության ճակատագրով մտահոգված, փորձել է ջերմացնել հարաբերությունները հզոր քրիստոնյա հարեւանի՝ Բյուզանդական կայսրության հետ, որի համար մի թուղթ է հասցեագրել Ռոմանոս Ա (920-944) կայսրին. «Թուղթ Գագկայ Վասպուրականի Յայոց թագաւորի առ կայսրն Յունաց Ռոմանոս, վասն հաւատոյ»: Նամակի նպատակն էր վերացնել երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ եղած դավանական անջրպետը («զցանկն քակել եւ զմիջնորմն յատակել»)՝ վերականգնելով առաջին երեք տիեզերական ժողովների ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական բնականոն հարաբերությունները³: Գուցե քա-

¹ Յայ եկեղեցու հանրագիտարան, պր. Ա, Ամենայն Յայոց կաթողիկոսներ, Սբ. Էջմիածին, 2008, էջ 80:
² Յնարավոր է, որ կաթողիկոսարանի բազմանդամ միաբանության առկայությունն է, որ անհանգստություն է պատճառել Գագիկին, որի կառուցած պալատական եկեղեցին այնքան էլ հարմար չէր միաժամանակ որպես կաթողիկոսարանի եկեղեցի ծառայելու համար: Աղթամարի ուշ շրջանի մի կոնդակում ասված է, որ Իլու վանքում հաստատվածներից 200-ը միայն արեղա էին (Յ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, էջ 159), հասկանալի է, որ մինչ այդ նրանք բնակվել են Աղթամարում, եւ եթե բոլորը ծեսի մասնակցեին, եկեղեցուն ուրիշ մարդկանց համար տեղ չէր մնա:
³ Մատենագիրք Յայոց, հ. Ժ, Ժ դար, Անթիլիաս, 2009, էջ 793-797:

ղաքական այս նոր կողմնորոշումն էր պատճառը, որ Գագիկի համար այլևս ձեռնտու չէր Յայոց կաթողիկոսին անմիջապես իր կողքին ունենալու վիճակը, որի պատճառով նա կաթողիկոսարանը տեղափոխեց Իլի:

Ամփոփելով խոսքը Գագիկ Արծրունու մասին՝ պետք է ասել, որ նա միջնադարյան Յայաստանի երեւելի գործիչներից մեկն էր, բուռն կենսագրությամբ մի մարդ, որը հասավ նրան, ինչին որ ձգտեց՝ թագ ու թագավորություն, համահայկական առաջնորդի համարում, որն ունեցավ 10-րդ դարի 20-30-ական թվականներին, ռազմական ու դիվանագիտական հաջողություններ եւ, իհարկե, շինարարական մեծագործություններ, որոնց պսակը դարձավ Աղթամարը՝ մինչ օրս կանգուն իր փառահեղ տաճարով:



◀ Գագիկ Արծրունու բանդակը Ս. Խաչ եկեղեցու որթազալարի գոտում



«Այլ է առողւ Առթարայ,
Որ քրտաւորը Խաչն է տաւ,
Ջոր է ճեղայ Գագայ Մեօրն,
Եւ ո՛ն՝ գստի տաւ սարն,
Ի ջեռապետս յարդպան սեռն,
Ո՛ն է Հայասանն էլ ո՛ն է Լեւհն»:

Գործ ՄԻՆԱՆ, 1739Թ.

Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցին Գագիկ Արծրունին կառուցել է 915-921թթ. ժամանակամիջոցում, տաղանդավոր ճարտարապետ ու քանդակագործ Մանվելի ձեռամբ, որի մասին հանգամանորեն պատմում է Թովմա Արծրունու շարունակողը՝ Անունուն Արծրունին:

Ճարտարապետական հորինվածքով Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցին¹ կրկնում է Արծրունիների տոհմական գերեզմանատան Ջորադիրի Սբ. Էջմիածին (6-րդ դ.) եկեղեցուն՝ որպես քառախորան, անկյուններում երեք քառորդ շրջանագծի խորշերով, որոնցով արելեյաններից մուտքեր են բացվում դեպի Ավագ խորանի երկու ավանդատները: Եկեղեցական այս տիպի հնագույն ամենահատկանշական օրի-

¹ Աղթամարի Սբ. Խաչի ճարտարապետությանն անդրադարձել են հայկական ճարտարապետության բոլոր նշանավոր հետազոտողները, եւ ստեղծվել է եկեղեցուն ու նրա պատկերաքանդակներին նվիրված ծավալուն գրականություն (տես Ս. Գեջյան, Հայկական ճարտարապետություն. մատենագիտություն, Երևան, 1997, էջ 269): Եկեղեցու նորոգման եւ վերաբացման մասին տես Մ. Հասրաթյան, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին հիմնադրման 1100 ամյակի նախաշեմին, «Հայ արվեստ», 2007, թիվ 2, էջ 25-27:

**ՍԲ. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ
ԿՂԶՈՒ ՄՅՈՒՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ**




Սուրբ Խաչ եկեղեցու գավիթը արեւմուտքից եւ գավթի մուտքը

Նակներն են Ավանի եւ Վաղարշապատի Սբ. Յովսիսիմեի, այսպես կոչված «հռիփսիմեատիպ» եկեղեցիները: Սակայն այստեղ էական փոփոխությունների են ենթարկվել անկյունային հատվածները, իսկ ծավալային ձեւերը մշակվել են խաչածեւ տաճարների տարածական սկզբունքներին համապատասխան: Արտաքին ճակատները խիստ մասնատված են, որն ավելի է շեշտվում անկյունային մասերի բազմանիստ,

աշտարակածեւ ելուստների առկայությամբ: Սա իր հերթին հնարավորություն է տվել կառույցի ողջ պարագծով՝ շուրջանակի ստեղծված կոթողային պատկերաքանդակները դիտարկել ոչ միայն հստակ ուրվագծվող առանձին շարքերով, այլեւ ճակատային եւ հատվածական հորինվածքային խմբերով:

Աղթամարի եկեղեցին թեւ մոնումենտալ, բայց չափերով մեծ չէ (երկարությունը՝ 17 մ, լայնությունը՝ 14 մ, բարձրությունը՝ գմբեթով 24 մ): Այն պսակված է լայնանիստ, ներսից շրջանածեւ, արտաքուստ 16 նիստ ունեցող թմբուկի վրա բարձրացող գմբեթով: Եկեղեցին ունի երեք դուռ, 16 պատուհան, եւս 8 պատուհան գմբեթի վրա: Վերջինս հավանաբար երկրաշարժի հետեւանքով քանդվել է եւ վերաշինվել 1556թ.:




Թագավորական օթյակի աստիճանավոր մուտքը (վերակազմություն)

Տաճարի ներսում՝ հարավային թեւում, մուտքից վեր եւ գմբեթարդից ցած տեղադրված է եղել Գագիկ Արծրունու թագավորական օթյակը, որտեղ բարձրացել են արտաքին կողմի քարե երկկողմ աստիճաններով, որոնք հետագայում հանել են այդ մասում զանգակատուն կառուցելու համար: Յովսեփ Օրբելին կատարել է պատի այդ հատվածի նախնական տեսքի վերակազմությունը: Երկրորդ հարկ բարձրացող այդօրինակ աստիճաններ հայ արվեստում հետագայում տեսնում ենք Նորավանքի ու Եղվարդի երկհարկ եկեղեցիներում, սակայն հնագույն

նմուշն Աղթամարն է: Օթյակն առանձնացված է եղել քարե կամարակապ բազրիքով եւ արտաքուստ հարդարված ուշագրավ կենդանապատկեր քանդակներով (այժմ բազրիքը չկա, պատկերը պահպանվել է հին լուսանկարներում):

Քանի որ եկեղեցին արտաքուստ հարդարող պատկերաքանդակները ստորեւ ներկայացվելու են բավականին մանրամասնորեն, այստեղ համառոտակի ներկայացնենք ներքին պատերը զարդարող որմնանկարները: Դրանք ժամանակակից են կառույցին, իմաստային առնչություն ունեն եկեղեցու արտաքին հարդարանքի հետ, սակայն ուշ շրջանում որոշ միջամտություններ են կրել, որոշ հատվածներ նորոգվել կամ վերանկարվել են:





ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1. Ս. Խաչ եկեղեցի (915-921թթ.)
2. Ս. Սարգիս մատուռ (1296թ.)
3. Ս. Սարգիս մատուռի նախասրահ (1296թ.)
4. Գավիթ (1763թ.)
5. Զանգակատուն (18-րդ դ. վերջ)
6. Ս. Ստեփանոս եկեղեցի (1293թ.)



Թագավորական
օթյակը Ներսից
(այժմյան տեսքը)

Եկեղեցու պատերը ներքուստ որմնանկարագարդ են ամբողջովին՝ ներկայացնելով մասամբ Հին և հիմնականում Նոր Կատակարանի բազմաթիվ թեմաներ՝ եռաշարք դասավորությամբ¹: Եկեղեցու գմբեթում տեղ են գտել արարչագործության, իսկ թմբուկի վրա՝ Ադամի և Եվայի աստվածաշնչային պատմությունը ներկայացնող պատկերներ:

Ավետարանական նկարաշարը (ցիկլը) սկսվում է հարավային խորանի վերին գոտուց և շարունակվում մյուս պատերի վրա: Ներկայացված են Ավետումը, Մարիամի այցը Եղիսաբեթին, Ծնունդը, Քրիստոսի ընծայումը տաճարին, Հովսեփի երազը,

¹ Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 70-116:

Փախուստը դեպի Եգիպտոս, Մանկանց կոտորածը, Մկրտությունը, Այլակերպությունը (Պայծառակերպություն), Կանայի հարսանիքը, Քրիստոսի քարոզը, Ղազարոսի հարությունը, Մուտքը Երուսաղեմ, Քրիստոսի օծումը, Ունևվան, Քրիստոսը Պիղատոսի մոտ, Խաչելությունը, Յուդաբեր կանայք գերեզմանի մոտ, Համբարձումը, Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագթաղենացուն, Աստվածամոր նիւնջը:

Սիրարփի Տեր-Ներսեսյանը Աղթամարին նվիրված մեծարժեք ուսումնասիրության մեջ անդրադառնալով որմնանկարի պատկերագրական, ոճական առանձնահատկություններին՝ գրում է. «Աղթամարի որմնանկարները նոր լույս են սփռում արեւելյան քրիստոնեական արվեստի բազմաթիվ յուրահատկությունների վրա: Գմբեթի թմբուկի վրա պատկերված ծննդոց ցիկլը ներկայացնում է եկեղեցական պատկերագրության մի տիպատեսակ, որը մինչեւ այժմ իր նմանը չունի վաղ միջնադարյան արվեստում...: Եզակի երեսույթ է Վերջին ընթրիքի փոխարինումը Քրիստոսի օծման տեսարանով: Դա ցույց է տալիս, որ տեսարանի սովորական ցիկլը փոփոխվել է, որպեսզի շեշտվի հայկական եկեղեցական ծիսակատարության յուրահատկությունը: Այն կոմպոզիցիան, որտեղ Քրիստոսը երեւում է Մարիամ Մագթաղենացուն եւ որտեղ... ընդգրկված է Գագիկ թագավորը, ցույց է տալիս ավելի հետաքրքիր շեղում սովորական փորձից»¹:

Աղթամարի որմնանկարներն ստեղծվել են հայ մոնումենտալ արվեստի լավագույն ավանդներով, աչքի են ընկնում կատարման բարձր վարպետությամբ, պատկերագրական առանձնահատկություններով եւ, իրավամբ, միջնադարյան քրիստոնեական արվեստի բացառիկ արժեքավոր ստեղծագործություններ են:

Դժվար է ասել, թե Գագիկի եւ Մանվելի ժամանակներում ինչպիսին է եղել եկեղեցու ներսի կահավորում-հարդարանքը: Պատմիչը նշում է «ոսկեհում» եւ «մարգարտահյուս» զարդերի, «ոսկեզօծ պատկերների», «երեւելի ու պայծառ» սպասքի մասին: Իսկ

¹ Նույն տեղում, էջ 110, 115:

ուշ միջնադարում ավագ խորանում՝ բեմի վրա, դրված է եղել զարդարուն խաչկալ՝ պատրաստված 1756թ.¹, իսկ նրան կից եկեղեցու արեւելյան անկյունային զույգ ավանդատուն խորաններն ունեցել են պատարագի սեղանը²:

Աղթամարի եկեղեցու գլխավոր առանձնահատկությունը, ճարտարապետության հետ ներդաշնակեցված, աստվածաշնչային եւ աշխարհիկ թեմաներով պատկերաքանդակներն են: Դրանք հետագայում ազդել են հայկական քանդակագործության զարգացման, նաեւ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ծեւավորման վրա: Աղթամարի Սբ. Խաչն իր ճարտարապետությամբ, պատկերաքանդակներով եւ

¹ Աղթամարի խաչկալի վրա եղել է հետեւյալ արձանագրությունը. «Ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյ Տեառն Գրիգորի կաթողիկոսի, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի, կառուցի խաչկալս արդեամբք Աղթամարայ մեծի եւ փոքու եւ բաղականից ոսկերչոնց եւ աշխատութեամբ եւ մասնակցութեամբ Տեառն Սահակայ վարդապետի Խարբերոցոյ, որք պատահիք լի բերանով «Աստուած ողորմի» ասացէք նոցա, Ի թվոց Հայոց ՌՄԵ (1756) ամեն» (Ե. Լալայեան, Վասպուրական..., էջ 17):

² Ե. Լալայեան, Վասպուրական..., էջ 8:



Որմնանկարի հատված. Ղազարոսի հարությունը, Մուտք Երուսաղեմ, Համբարձում

որմնանկարներով արվեստների զուգորդման բացառիկ ու անկրկնելի օրինակ է հայ արվեստում:

Աղթամարի Սուրբ Խաչն այն եզակի եկեղեցիներից է, որի հիմնադրման, կառուցման մասին պահպանվել է դեպքերին ժամանակակից պատմիչի մանրամասն նկարագրությունը: Արծրունիների տոհմի պատմությունը շարադրած Թովմա Արծրունի պատմիչի շարունակողը՝ Անանուն Արծրունին, հենց Գագիկ թագավորի հանձնարարությամբ թղթին է հանձնել այդ պատմությունը, որը պարունակում է չափազանց հետաքրքիր մանրամասներ, օրինակ՝ տաճարի քարերի՝ Կոտոն բերդից տեղափոխման փաստի արձանագրումը, Մանվել (Մանուել) ճարտարապետի՝ պատկերաքանդակների ստեղծման ժամանակ մի կրոնավոր խորհրդատու ունենալու հանգամանքը, պատկերների որոշ թեմաների հիշատակումը եւ այլն: Ստորել մասնակի մեջբերումների փոխարեն նպատակահարմար ենք գտնում Անանունի երկի այդ հատվածը ներկայացնել ամբողջովին, որով պատմական տեղեկություններն ընթերցողին կփոխանցվեն «առաջին ձեռքից»՝ միաժամանակ պահպանելով միջնադարյան պատմիչի ոճը եւ հաղորդելով այն հեռավոր ժամանակի շունչը:

«ՓԱՌԱՅԵՂ ՈՒ ՊԱՆՍԱԼԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐՆ ԱՂԹԱՄԱՐ ՔԱՂԱՔՈՒՄ Է ԵՎ ՈՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՐԵՐԸ ԲԵՐԵՑ ՅԵՌԱՎՈՐ ԵՐԿՐԻՑ...»¹

Նոյակասպ, հոջակավոր եւ բարձրանշան Աղթամար քաղաքի շինության ժամանակ մեր Փրկիչը՝ Նիսուսը, գորացրեց Իր օձյալ Գագիկի բագուկը՝ նեղելու Իսմայելի գազանաբարոցեղը, որին Գագիկն իր ձեռքով կասկեց, կաշկանդեց հաստար նստարակադրումով եւ պա-

¹ Աշխարհաբար թարգմանությունը պատկանում է Վրեժ Վարդանյանին (տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1978, էջ 299-301, երկրորդ հրատ.՝ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1999, էջ 266-268): Կատարվել է խմբագրական փոքր միջամտություն: Գրքի այլ հատվածներում մեջբերումները երկրորդ հրատարակությունից են:



տերազմելու գորավոր արիությանը: Ասես սանձերով նրանց կզակը ճմլեց, թռչնեցրեց՝ սկսած Մարասրանից, Պարսկաստանից եւ ամբողջ Արարկաստանից մինչեւ Խուժաստան: Ում որ կամենում էր, հոգին ավանդել էր տալիս, իսկ որին չէր ցանկանում, ազար էր արձակում, ուրիշներին միմյանց վրա էր գրգռում, իսկ նրանցից հազարներին ու տասնյակ հազարներին սպանում էր իմաստության սրով, մյուսներին հանդիպելով պարերազմում՝ տալիս էր սրի բերանը եւ անխնա կտորտում՝ երբեմն անձամբ եւ երբեմն գորքի միջոցով:

Այս ստեղծուց հետո պարերազմի ելավ նաև Ասորեստանի դեմ եւ գրավեց բագում գավառներ՝ ամբողջներով հանդերձ: Ասորեստանի մատուցներում տեսավ Աղձնիքի իշխանական տան մի ամբողջ՝ Կոտոն՝ անունով գյուղում, որին տիրել էր Զուրարիկը՝ կոջված

¹ Գյուղ Տուրուբերան նահանգի Երեւաթք գավառում՝ Վանա լճի հարավարեւմտյան ափամերձ շրջանում:
² Հայաստան գաղթած արաբական ցեղերից, որոնք հաստատվել էին Աղձնիք նահանգում:

ցեղը: Մրան իսպառ ջնփեց, կորցրեց, հիւժրից տապալեց ամբողջ շինությունը, նրա քարերը, բարձեց (նավերը) և բերեց ծովի վրայով, րվեց սուրբ եկեղեցու շինության համար: Եւ կռատան ձեւ ունեցող պղծայից շենքի փոխարեն կանգնեցրեց փառաց տաճարը: Այսպէս կարարվեց մարգարեի ասածը. «Եթե պարտականք անարժանից զարի, իմ բերանի պէս կդառնա» (Երեւ. ԺԵ 19), ուր միշտ հանգչում է Սուրբ Նոգին՝ մարդկանց ընծայելով անարվեր լույսը:

Եվ քանզի ճարտարապետն էր Մանվելը՝ իմաստաստներ լի և իր գործում զորավոր մի մարդ, որին հիշատակեցինք վերևում, հրաշակերտեց եկեղեցին զարմանալի արվեստով: Կրոնավորը, որին հիշեցինք նախապէս¹, օգնեց նկարելու քարերի վրա ճշգրիտ նմանությամբ՝ սկսած Արրահամից և Դավթից մինչև մեր փեր Նիսուս Բրիտոսը: Նորինեց նաև մարգարեների ու առաքյալների դասերը՝ զարմանալի փերով, ըստ յուրաքանչյուրի դիրքի: Եկեղեցու շինվածքի շարքերում արեղծագործեց, շարակարգեց երեսների խումբը և թոշունների երամները, ինչպէս նաև զազանների, խոզերի ու առյուծների, ցուլերի ու արջերի խմբերը՝ քանդակագործով միմյանց դեմ դիմաց՝ հիշեցնելով ապրելու համար նրանց կոփվը, ինչը հույժ ըղձալի է իմաստուններին: Եկեղեցու իրանը գոյությունը գովեստի արժանի շրջանակով, որը զարդարեց նուրբ կտրվածքներով, վրան նկարեց խաղողի որթեր, այգեգործների, զազանների ու սողունների հետ միասին: Նրանց կերպարանք՝ այլևայլ զանազանությամբ, ամեն մի մասում նմանվում է իր փեսակին:

Իսկ չորս կողմերից սուրբ խորանների վերևում ճշգրտորեն նկարեց չորս ավերարանիչների պարկերները, որոնք արժանավորապէս սուրբ եկեղեցու ուրախության պատկեր են և ավելի բարձր են, քան բոլոր սրբերը:

Նկարեց նաև խաչի հետ Փրկչի պարկերը, որը մեզ համար մարմնացավ, երեսաց որպէս մարդ: Այն արեւմտյան խորանի կամարի վրա է: Փրկչի դիմաց, ճշգրիտ նմանությամբ

¹ Անանուն Արծրունին թեւ ալստեղ ցշուն է կրոնավորին «նախապաս» հիշած լինելու մասին, սակայն նախընթաց տեքստում նրա անունը կամ այլ կարգի հիշատակություն չկա:

Քազիկ արքայի փառասեղ պարկերը, որը հպարտ հավարթով բարձրացրել է եկեղեցին բազուկների վրա, ինչպէս մանանայով լի ոսկե սափոր կամ որպէս անուշահոտությամբ լցված որկե փուփ: (Քազիկը) Տիրոջ առաջ կերպագրված է այնպէս, որ ասես թողություն է խնդրում իր մեղքերի համար: Թեպէտև խոսքը վերաբերում է մեր օրերի պարմությանը, սակայն թագավորը չմերժեց խնդրված վարձը՝ հուսալով զայիբ հարուցման:

Դարձյալ խորանի հարավային կողմից՝ եկեղեցու դռան ետևում, հորինեց գահի տեղ, որը բարձրից դեպի ներքև է իջնում կամարաձև սափրձաններով, որպէսզի դառնա թագավորի աղոթքի տեղը, մարդկանցից հեռու, որով նա կլինի իր մտքերի հետ և անգրադապէս կխոսի Աստծու հետ:

Իսկ սուրբ խորանի ներսի կողմը հրաշալիորեն կարգավորեց նկարապատճոյճ գույներով, արծաթապատ դռներով և լի ոսկեհոտ զարդերով, ոսկեգօծ պարկերներով, պարտականակներով, մարգարտախոս զարդերով և պէսպէս, երեսելի ու պայծառ սպասքով: Այդպիսով նա հրաշափառապէս մեզ ցույց տվեց երկրորդ Երուսաղեմը, ինչպէս և վերին Սիոնի դուռը:



Որմանկարի հատված

Այսպեղ կատարվեց մարգարեության ավերիսը, թե՛ «ուրախ լևր, ծարավ անապատ» (Եսայ. ԼԵ 1) եւ դարձյալ, որ «Երկիրը պիտի ցնծա, եւ ուրախ պիտի լինեն բազում կղզիներ» (հմմտ. Սաղմ. ՂԵ 11): Արդարեւ, սա երբեմն ծարավ անապատ էր, իսկ այժմ՝ մեծ Ասործու քաղաք, որը հոսում է երկու մշտաբուխ աղբյուրներից, սուրբ ավազանից եւ Ասործու Որդու անապական արյունից՝ արբեցնելով հոգով ծարավիս:

Իսկ սրա նավակարիքի օրը եպիսկոպոսների եւ իշխանների խմբերով փառավորեցրեց, կատարեց ուրախության մեծ տոն՝ մեծասանձ հիշատակ թողնելով սերնդեսերունդ: Ահա սասցինք ինչ որ կար սուրբ եկեղեցու մասին:

Քանի որ Աբ. Խաչի հանրահայտ պատկերաքանդակները ստորեւ ներկայացվելու են հանգամանորեն, այստեղ եկեղեցու ճարտարապետության մասին հատվածն ամփոփելով՝ համառոտակի կներկայացնենք նաեւ Աղթամար կղզու մյուս կառույցները, մանավանդ որ դրանցից մի քանիսը կից են Աբ. Խաչին: Աղթամարում գազկաշեն կառույցներից բացի՝ մեզ հայտնի մյուս շինությունները բավական ուշ են կառուցվել:

1293թ. Աբ. Խաչ եկեղեցու հարավարեւելյան կողմում կառուցել է Աբ. Ստեփանոս միանավ, թաղածածկ եկեղեցին: Դռան ճակատին պահպանվել է շինարարական արձանագրությունը. «ՉԽԲ (1293) ի հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբասնեալ կրանաւորացն Սարգսի եւ Ստեփանոսի որդեացն Զոռոնշահի, յարդար վաստակոց իւրեանց եւ ծնողացն եւ ազգականացն, որք հանդիպիք յիշեցէք ի Քրիստոս»¹:

1296թ. Աբ. Խաչ եկեղեցուն հյուսիսից կցել են Աբ. Սարգիս մատուռը՝ նախասրահով, որը պահպանվել է մինչ օրս:

Մատենագրական վկայություն կա այն մասին, որ կաթողիկոս Ջաքարիա Ա Սեֆե-

¹ Գ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա մաս, էջ 101:

դինյանը (1296 -1336), Խլաթի կողմերից քարեր բերելով, Աբ. Խաչի մոտ կառուցել է ամառային եւ ձմեռային ժամատներ¹:

1763թ. եկեղեցու արեւմտյան կողմում կառուցել են քառանկյոք գավիթ: Ըստ Գ. Ոսկեանի. «Գաւիթը հասարակ շենք մըն է եւ ունի երկու պարզ դուռ եւ ինը պատուհան: Զարաւային դռան վրայ գրուած է՝ «ի ՌՄԺԲ (1763) եւ շնորհօքն Քրիստոսի շինեցաւ դարպաս ձեռամբ Թումայի կաթողիկոսի Աղթամարայ, որք աղօթէք, տուրք զողորմիս»²:

18-րդ. դ. վերջին եկեղեցու հարավային ճակատին կից զանգակատուն է կանգնեցվել, որի պատճառով, ինչպես վերելում նշվեց, քանդել են Գազիկ Արծրունու թագավորական օթյակ տանող արտաքին քարե աստիճանները:


Աղթամար կղզու ծայրերում գտնվող մատուռների մասին Գ. Ոսկեանը գրում է. «Կղզիին արեւելեան հիւսիսային ծայրը կայ փոքրիկ մատուռ մը, որ կը համարուի Թամար թագուհիին աղօթատեղին: Կաւանդուի թէ հոս եւ ոչ Չորոյ վանքի մեջ ամփոփուած ըլլայ Յովհաննէս ՉԴրասխանակերտցիի մարմինը: Իսկ կղզիին արեւելեան-հարաւա-



Ս. Ստեփանոս եւ Ա. Խաչ եկեղեցիները արեւելքից

¹ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 288:

² Գ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, էջ 100:



Ս. Սարգիս մատուռը եւ նախասրահը Ս. Խաչի հյուսիսարեւելյան կողմում

յին ծայրը կան երկու մատուռներ՝ Սբ. Գեորգի եւ Սբ. Աստուածածնի նուիրուած: Վերջինս կարմիր քարերով շինուած է եւ կը կոչուի նաեւ Կարմիր եկեղեցի»¹:

Աղթամարում գրված ձեռագրերի հիշատակարաններում հիմնականում նշվում է, որ դրանք գրվել են «ընդ հովանեաւ Սուրբ Խաչի», սակայն որոշ հիշատակարաններում հիշատակվում են նաեւ մյուս եկեղեցիների ու մատուռների անունները: Օրինակ՝ Սբ. Խաչի անունից հետո «ընդ հովանեաւ... Սուրբ Սարգսի եւ Սուրբ Գեորգայ...»² կամ «...ամենայաղթ Սուրբ Խաչիս եւ Սուրբ Նշանիս

¹ Նույն տեղում, էջ 101-102: Այստեղ հիշված «Թամար թագուհին» համարվել է Գագիկ Արծրունու կինը, սակայն այդ մասին պատմական հավաստի վկայություն հայտնի չէ: Այդ անունը հիշատակվում է Աղթամարի ուշ շրջանի մի կոնդակում, ուր ասվում է, թե Գագիկն ապրեց 90 տարի, որից 60 տարին թագավորեց (որն իրականությանը չի համապատասխանում), եւ ավելացվում, որ Թամար թագուհին ամուսնու մահից հետո երեք տարի սուգ պահեց («Բագմավէպ», 1897, էջ 412): Թվում է, որ այդ անունն ինչ-որ կերպ առնչվում է Աղթամար կղզու անվան շուրջ առաջացած ժողովրդական ավանդությանը (Աղթամար-Ախթամար-Ախ Թամար):

² Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 58:



Վեհարանը եւ եկեղեցու հարակից շինությունները 20-րդ դարի սկզբին

եւ Սուրբ Յարութեան անապատիս»¹, «ամենաաւրինեալ Աստուածածնին»², «Սուրբ Փրկչի տաճարիս եւ Սուրբ Գեորգ զաւրաւարիս»³ կամ «ընդ հովանեաւ գերահռչակ եւ երկնանման Սուրբ Խաչ տաճարիս եւ Սուրբ Փրկչիս եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սարգիս զաւրավարիս...»⁴:

1864-1895թթ. Սբ. Խաչ եկեղեցու հարավարեւմտյան կողմում կառուցել են Վեհարանի, թանգարանի եւ տպարանի երկհարկանի շէնքը, որն այժմ ավերված է, իսկ պատկերը պահպանվել է հին լուսանկարներում:

¹ Նույն տեղում, էջ 284:
² Նույն տեղում, էջ 65:
³ Նույն տեղում, էջ 211:
⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 608-609:



ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՊԱՏԿԵՐԱՔԱՆՊԱԿՆԵՐԸ

Աղթամարի Սուրբ Խաչ տաճարը, ժամանակաշրջանը նկատի ունենալով, նոր խոսք է ողջ քրիստոնեական մշակույթի համար, հատկապես սիմվոլիկ մտածողության առումով, որն առավել ցայտուն կերպով արտահայտվել է եկեղեցու արտաքին հարդարանքում:

Դեռևս 19-րդ դարի կեսերին տաճարին անդրադարձել է անգլիացի հնագետ, ճանապարհորդ Ա. Լայարդը¹, 20-րդ դարասկզբին առավել մանրազնին ուսումնասիրություններ են իրականացրել Ե. Լալայանը² եւ Վ. Բախմանը³՝ նկարագրելով տաճարն ու նրա հարդարանքը: Վերջինս նաև կատարել է չափագրումներ եւ մի շարք արժեքավոր լուսանկարներ: Այդ աշխատությունները հիմք հանդիսացան ավստրիացի Յոզեֆ Ստրժիգովսկու ուսումնասիրության համար, որը հայ ճարտարապետությանը նվիրված երկհատոր աշխատության մեջ արժանի տեղ է հատկացնում Աղթամարին⁴: Ստրժիգովսկին անդրադառնում է հարթաքանդակների խորհրդաբանությանն ու ակունքներին՝ առավել խորը գիտական հիմքերի վրա դնելով Աղթամարի ուսումնասիրությունը:

¹ A. Layard, Discoveries in the Ruins of Nineveh and Babylon with travels in Armenia, Kurdistan, London, 1853.
² Ե. Լալայան, նշվ. աշխ. ...:
³ W. Bachmann, Krichen und Moscheen in Armenian und Kurdistan, Leipzig, 1913.
⁴ I. Strzygowski, Die Baukunst des Armenier und Europa, t. 1, Wien, 1918.

Հովսեփ Օրբելին հնարավորություն է ունեցել ի մոտո ուսումնասիրելու տաճարը եւ անդրադարձել է ոչ միայն արտաքին հարդարանքին, այլև բուն ճարտարապետությանը, միաժամանակ ներկայացրել մի շարք արժեքավոր գծապատկերներ¹: Նա հարթաքանդակների ուսումնասիրությունը դնում է նոր հարթության վրա՝ դրանք դիտարկելով տվյալ ժամանակաշրջանի պատմական, սոցիալ-քաղաքական եւ մշակութային խորքի վրա²:

Աղթամարի ուսումնասիրության գործում մեծ է Սիրարփի Տեր-Ներսեսյանի ավանդը: Նա բազմիցս անդրադարձել է տաճարին³, սակայն ավելի հանգամանորեն անգլերեն աշխատության մեջ, որտեղ կատարել է տաճարը երիզող գոտիների հստակ բաժանում, լուսաբանել հարթաքանդակների թեմատիկան, ակունքներն ու ոճական առանձնահատկությունները⁴: Այս աշխատության մեջ առաջին անգամ պատշաճ կերպով ներկայացվել են նաեւ տաճարի որմնանկարները:

¹ И. Орбели, Избранные труды, Памятники армянского зодчества на острове Ахтамар, т. 1, Москва, 1968.
² Չնայած այս աշխատության վերջին՝ ամփոփիչ գլուխը բացակայում է, սակայն գործը թերի չէ եւ արտահայտում է հեղինակի առաջադրած բոլոր տեսակետերը: Օրբելին աշխատությունը կատարել է 1912թ.-ին՝ Աղթամար կատարած իր այցելությունից հետո, սակայն տպագրվել է միայն 20-րդ դարի երկրորդ կեսին:
³ S. Der-Nersessian, Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1947, S. Der-Nersessian, L'art armenien, "Etudes byzantines et armeniennes", Louvain, 1973, եւ այլն:
⁴ S. Der-Nersessian, Agh'tamar, Church of holy Cross, Cambridge, 1963. Հետագայում այս աշխատությունը թարգմանվում է հայերեն եւ հեղինակի այլ ուսումնասիրությունների հետ տեղ գտնում մեկ ժողովածուի մեջ. Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975:

Աղթամարի մասին գրել են նաև Լիդիա Դուրնովոն¹, Լևոն Ազարյանը², այլ ուսումնասիրողներ³: Աղթամարի մասին վերջին ծավալուն մենագրությունը պատկանում է ճարտարապետ Ստեփան Մնացականյանին, ինչը մինչ այդ եղած աշխատությունների յուրատեսակ ամփոփումն է⁴:

Հայ միջնադարյան ճարտարապետության մեջ քանդակն ի հայտ է եկել բավականին վաղ շրջանում, սակայն հիմնականում որպես զարդաքանդակ, որով հարդարում էին տաճարների պատուհանների կամար-աղեղները, բարավորներն ու թմբուկները, իսկ մնացյալ պատերը մնում էին հարթ մակերեսով: Այս սկզբունքը հիմնավորապես փոխվում է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում, ուր պատկերաքանդակը միանգամայն ինքնուրույն է կարելուր դեր է ստանում:

Աղթամարի ոչ մեծ չափերի տաճարն արտաքուստ ամբողջովին պատված է քանդակներով, որոնք մոնումենտալություն են շքեղություն են հաղորդում նրան: Այստեղ միահյուսվում են արևելյան եւ արևմտյան քանդակագործական ավանդույթները, իսկ թեմատիկ առումով՝ Հին եւ Նոր Կտակարանի սյուժեները: Միաժամանակ հայտնվում

¹ Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979.
² Л. Азарян, Հայ արվեստը IX-XI դարերում, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3-րդ, Երևան, 1976:
³ T. Rice, Art of the Byzantine Era, London, 1970, M. Ipsiroglu, Die Kriche von Achtamar, Bauplastik im Loben des Lichters, Berlin und Mainz, 1963, Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, Ստ. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանիշերը միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Պատմաքանդակաբանական հանդես, 1970, № 3, եւ այլն:
⁴ Ստ. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983: 21-րդ դարում Աղթամարի նկատմամբ հետաքրքրությունը չի մարում, երեւան են գալիս նոր հետազոտություններ. Հ. Պետրոսյան, Հայ միջնադարյան պատկերաքանդակները իդեալական աշխարհի եւ տարածության մասին. Երկիրը որպես այգի, «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2002, 3. Акоюн, Символоческий образ Небесного Иерусалима в рельефных изображениях Звартноца, Искусство христианского мира, Выпуск 3, Москва, 2009, L. Jones, Abbasid Suzerainty in the Medieval Caucasus: Appropriation and Ideology, Gesta, № 2 Vol 43, 2004, p. 143-150.

են պատմական, դիցաբանական եւ խորհրդաբանական կերպարներ: Պատկերաքանդակների հեղինակը ճարտարապետ-քանդակագործ Մանուելն է, որին, ըստ Անանուն Արծրունի պատմիչի, օգնել է մի կրոնավոր՝ հավանորեն խորհուրդներ տալով թեմաների ու կերպարների ընտրության հարցում:

Հարթաքանդակները տաճարը բոլորում են հինգ (ըստ ոմանց՝ վեց) հիմնական գոտիներով: Առաջին գոտին, որ տեղակայված է տաճարի ստորին հատվածում, ունի մոտ 2 մ բարձրություն եւ ներկայացնում է թեմատիկ հարթաքանդակներ: Երկրորդ գոտին բաղկացած է կենդանագլուխներից, որոնք, ի տարբերություն մյուս գոտիների քանդակների, միայն ետին փոքր ելուստով են միանում պատին: Երրորդը որթագալարի գոտին է, որտեղ ևս հանդիպում են սյուժետային տեսարաններ: Որթագալարից վեր՝ յուրաքանչյուր խաչաթևի կենտրոնական մասում, ամբողջ հասակով, ավանդական պատկերագրությամբ (գրքով, օրհնող աջով) ներկայացված են չորս ավետարանիչների մեծադիր ֆիգուրները: Չորրորդ գոտին, որ ձգվում է խաչաթևերի եւ ճակոտնապատերի քիվերի երկայնքով, ներկայացնում է դեմք-դիմակներ, զինանշաններ եւ տոհմանշաններ: Հինգերորդ գոտին թմբուկի քիվի վրա տեղակայված կենդանավազքի գոտին է, որը եզրափակում է քանդակների ողջ համակարգը:

Պատկերագրական շարքն սկսվում է արևմուտքից եւ բոլորում տաճարը: Շարժումն անընդհատ զարգանում է դեպի աջ եւ պայմանավորված է արևի շարժումով¹:

Եկեղեցին նվիրված է Սբ. Խաչին, Աստծու եւ Քրիստոնեության փառաբանմանը, հավատի մեծարմանը՝ կառուցված Գագիկ արքայի հոգու փրկության համար: Համաքրիստոնեական պատկերաքանդակներով այն խորհրդանշում է Դրախտը, ուր իրենց արժանի տեղն են գտել հին եւ նորկտակարանային հերոսները, նաեւ Գագիկ արքան

¹ Ստ. Մնացականյան, Աղթամարի բարձրաքանդակների պատկերագրական համակարգը, «Սովետական գրականություն», Երևան, 1975թ., № 1, էջ 144:



Արեւմտյան ճակատ. առաջին գոտի. սերովքներ

ու իր ժողովուրդը¹: Թեև պատկերաքանդակներում ավետարանական տեսարաններ չեն պատկերվել, սակայն բազմաթիվ են անդրադարձները դրանց հինկտակարանային զուգահեռներին: Անանուն Արծրունու հաղորդմամբ՝ այս շինության կառուցմամբ Մանուելը «հրաշափառապես մեզ ցույց տվեց երկրորդ Երուսաղեմը, ինչպես եւ վերին Սիոնի դուռը»:

Ստորին հատվածում տաճարն ամբողջովին երիզված է զարդանախշ մի գոտիով, որը յուրատեսակ հիմք է առաջին գոտում պատկերված քանդակների համար: Ջարդագոտին ամբողջովին բաղկացած է նռնենուց եւ պտուղներից: Ավելի վեր պատկերված ֆիգուրները չեն դիպչում զարդագոտուն, սակայն հեռվից դիտելու դեպքում դրանք թվում են ամուր հիմքի վրա կանգնած: Այս զարդագոտին (որով գոտիների թիվը դառնում է վեց) որոշ ուսումնասիրողներ կապում են արարչագործության վեց օրերի խորհրդի հետ²:

Ծանոթանանք եկեղեցու ճակատների գոտիներին եւ հարդարանքին:

ԱՌԱՋԻՆ ԳՈՏԻ. ԱՐԵՎՍՏՅԱՆ ՃԱԿԱՏ.

Ամենահանդիսավոր ճակատն է, որը պատկերում է կտիտորական տեսարան եւ գրավում է ողջ պատը: Տեսարանի երկու եզրերին ներկայացված են երկու վեցաթև հրեշտակներ՝ սերովբեներ, որոնց թևերի վրայի բազմաթիվ աչքերն ուղղված են դեպի վեր: Սերովբեների կենտրոնում՝ պատուհանի տակ, տեղադրված է մեդալիոնի

¹ З. Акопян, Воплощение образов «Рая» и «Мира» в средневековой пластике Армении и Древней Руси, Диалог в пространстве художественной культуры Матер. Международного симпозиума (тезисы), Москва, 15–16 ноября 2010, стр. 6-7.

² Աս. Մնացականյան, Նոր փորձ Աղթամարի վանքի որմնանկարների մեկնաբանության, Հայաստանի մշակույթի եւ արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական հինգերորդ գիտական կոնֆերանս, (Ձեկուցումների թեզիսներ), Երևան, 1982, էջ 150:



Սուրբ Խաչ եկեղեցու արեւմտյան ճակատը

մեջ առնված ոճավորված հավասարաթև խաչ, որը երկու կողմից բարձրացնում են հրեշտակները¹: Հրեշտակներից վեր՝ պատուհանի աջ կողմում, տեղ է գտել Հիսուս Քրիստոսի դիմահայաց բարձրաքանդակը՝ խաչադաջ լուսապսակով: Քրիստոս պատկերված է ավանդական պարեգոտով, բոկոտն: Նա Աջով օրհնում է, իսկ ձախ ձեռքում գիրք է՝ «ԵՍ ԵՍ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ» գրությամբ:

¹ Այս հավասարաթև խաչն այժմ գոյություն չունի, այն հանվել է 2003-2007թթ. թուրք մասնագետների ձեռքով կատարված «վերանորոգման» արդյունքում: Խաչի պատկերը կրկնում է մինչ 7-րդ դարը Հայաստանում տարածված հավասարաթև խաչերի ձևը (Երերույք, Տեկոր, Պեմզաշեն եւ այլն), որոնք այդուհետ փոխեցին իրենց համաչափությունները: Այն, որ երկու հրեշտակների կողմից խաչի փառաբանումը այստեղ է տեղադրված, պատահական չէ. սա միակ պատկերն է, որն արտահայտում է եկեղեցու «Սուրբ Խաչին» նվիրված լինելը (Կ. Օրբելի, Избранные..., стр. 64):



Գագիկ Արծրունիի եկեղեցու մանրակերտով

Պատուհանի ձախ կողմում՝ Քրիստոսի պատկերաքանդակին զուգահեռ, ներկայացված է Գագիկ Արծրունու հարթաքանդակը, որը եկեղեցու մանրակերտը պարզել է դեպի Քրիստոս: Գագիկը ներկայացված է արքայական շքեղ հագուստով՝ երկար պարեգոտով եւ թռչնազարդ ծիրանիով, որը կրծքի վրա ամրանում է վարդյակածն ճարմանդով: Արքան եւ՝ թագակիր է, եւ՝ լուսապսակով: Ալիքածն մազերից ներքև՝ ծոծրակի մոտ, երևում են գլխին կապված ժապավենի երկու ծայրերը: Նրա ողջ մարմինը եւ գլուխը դիմահայաց են, եւ միայն ոտքերի աջ թեքվածությունն է վկայում նրա ուղղվածությունը դեպի Քրիստոս: Գագիկի թագի եւ լուսապսակի վրայի բազմաթիվ անցքերը վկայում են, որ ժամանակին այն ազուցված է եղել կիսաթանկարժեք քարերով կամ բազմազույն խճահատիկներով¹:

Քրիստոսի եւ Գագիկի ֆիգուրների չափերը համապատասխանում են մարդկային հասակին, սակայն արքայի ֆիգուրը փոքր-ինչ բարձր է: Եկեղեցու մանրակերտը, որը պատվիրատուն բռնել է ձախ ձեռքի մատների ծայրով, բավականին մանրամասն մշակում ունի: Այն ներկայացնում է տաճարի արևմտյան կողմն իր երկու պատուհաններով: Մանրակերտը աննշան անճշտություններով կրկնում է տաճարի իրական ձևերը: Ինչպես իրավացիորեն նկատում է Յ. Օրբելին, այն տաճարի մանրակերտերի քանդակման լավագույն վերարտադրությունն է²: Անանուն Արծրունու նկարագրության մեջ այն ներկայացվում է որպես «մանանայով լի ոսկե սափոր կամ որպես անուշահոտությամբ լցված տուփ»: Յ. Օրբելին ենթադրում է, որ մանրակերտն ավարտվել է ոսկեզօծ խաչով³:

¹ И. Орбели, Избранные ..., стр. 83.

² И. Орбели, Избранные ..., стр. 84.

³ Ենթադրության համար հիմք է ծառայել մանրակերտի վրայի անցքը: Օրբելին ավելացնում է, որ խաչը

Ըստ ուսումնասիրողների՝ կոիտորական տեսարանը թեմատիկայի պատկերագրական տիպի առումով բյուզանդական ազդեցություն է կրում, իսկ մանրամասների եւ պատկերման տեխնիկայի առումով՝ արևելյան: Եթե Անանուն Արծրունի պատմիչը մանրամասն նկարագրել է Գագիկ Արծրունուն, ապա Մանուելը նկարագրությունից ոչ պակաս փառահեղ քանդակել է նրան: Ամեն բան արված է, որպեսզի դիտողի ողջ ուշադրությունը գրավի Գագիկի ֆիգուրը. անգամ Քրիստոսի պատկերից հասակով բարձր է ներկայացված¹: Գագիկի քանդակը, չնայած մասամբ վնասված լինելուն, ներկայացնում է ակնհայտ դիմանկարչական գծեր, հագուստի ուշագրավ մանրամասներ²: Գագիկի կրած ծիրանին հայկական օրինակներում շրջանակների մեջ վերցված կենդանիների (տվյալ դեպքում բադիկների տեսքով) պատկերների առաջին ճոխ մնուշն է: Ավելի ուշ դրա զուգահեռները տեսնում ենք մանրանկարչության մեջ՝ Գագիկ Կարսեցի արքային եւ Կիլիկիո Լևոն Դ թագավորին ներկայացնող պատկերներում՝ հանդերձների մեկնաբանության մեջ (Երուսաղեմ, ձեռ. թիվ 2556, ձեռ. թիվ 2660)³:

Ուշադրություն է գրավում նաև Գագիկի թագը, որը հավանաբար նրա համար խալիֆից բերված թագի վերարտադրությունն է⁴: Բացի շքեղ թագից՝ Գագիկ Արծրունին

գողացվել է, ինչի համար պատճառ է հանդիսացել պատմիչի նկարագրությունը: Այս ամենի արդյունքում վնասվել է նաև մանրակերտը (И. Орбели, Избранные..., стр. 64):

¹ Այս երևույթի շուրջ կան մի շարք կարծիքներ. Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով դա մի սխալ է, որը թույլ են տվել վարպետները, քանի որ բոլոր քանդակները ստեղծվել են տեղադրվելուց առաջ (Ս. Տեր-Ներսեսյան, Չայ արվեստը ..., էջ 96), Յ. Օրբելու կարծիքով այդ հարցում սխալմունք չէր կարող լինել, եւ նա այն դիտարկել է որպես կանխամտածված քայլ (И. Орбели, Избранные..., стр. 84):

² Այս ամենը կարևոր է, քանի որ Վասպուրականի արքաները դրամահատությամբ չեն զբաղվել, եւ քանդակն այս շրջանի միակ տեսողական նյութն է (S. Der-Nersessian, Aght'amar, Cambridg, 1965, p. 30):

³ Նմանօրինակ հագուստների առավել վաղ օրինակներ առկա են Սասանյան ժամանակաշրջանի որմնաքանդակներում. Տակ-ի-Բոստանի բարձրաքանդակներից մեկում շահնշահը ներկայացված է շրջանակների մեջ առնված թռչնապատկեր հագուստով: Նման հանդերձանքը լայն տարածում է ունեցել եւ բյուզանդական արքունիքում:

⁴ S. Der-Nersessian, Aght'amar ...,p. 31.

պատկերված է լայն լուսապսակով: Լուսապսակը Սասանյան արքաների պատկերազրական անբաժանելի տարրերից էր եւ աստվածային ծագում ունեցող շահնշահերի խորհրդանիշը կամ այլ կերպ ասած՝ «փառքի» խորհրդանիշ¹ եւ հավանաբար այդ իմաստով է կիրառված Գագիկի քանդակում, մանավանդ եթե նկատի ունենանք նրա՝ «Հայոց արքա» (Արշակունիների հաջորդ) լինելու հավակնությունները: Ինչ վերաբերվում է Գագիկ Արծրունու ծոծրակի մոտ կապված «կուշտի» կոչվող ժապավենին, ապա դա ևս Սասանյան շրջանից եկող խորհրդանիշ է, որը սրբության նշան էր²:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏ.

Այստեղ ներկայացված են հինկտակարանային մի շարք տեսարաններ, նորկտակարանային կերպարներ եւ աշխարհիկ սրբացված անձինք: Արևմտյան խաչաթևի ողջ պատը զբաղեցնում է Հովնան մարգարեի պատմությունը՝ մի քանի տեսարանով: Այն դասվում է փրկության թեման արծարծող քանդակների շարքին³: Առաջին դրվագում ներկայացված է բացված առագաստով նավ, որի միջից երեք մարդ մերկ Հովնանին նետում են հսկա ձկան բաց երախը⁴: Ծովը պատկերված չէ, փոխարենը նավի տակ ողջ երկայնքով պառկած է ծովահրեշը⁵:

¹ И. Орбели, Избранные..., стр. 83.

² А. Лелеков, Искусство Древней Руси и Востока, М., 1978, стр. 9, Сп. Մնացականյան, Աղթամար, 1983թ., երևան, էջ 79:

³ Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 79:

⁴ Հովնանը մերկ է պատկերված, ինչպես հանդիպում է վաղքրիստոնեական սարկոֆագների վրայի տեսարաններում, իսկ քրիստոնյա արևելքում թե՛ վաղ, թե՛ ուշ օրինակներում նա հագուստով էր ներկայացվում:

⁵ Ծովահրեշը պատկերագրությամբ նմանվում է Սասանյան արվեստում իր վառ դրսևորումը գտած սենմուրվ առասպելական կենդանուն: Աղթամարում այն ունի ձկան իրան, սակայն բացակայում են լողակները, իսկ գլուխը նման է չորքոտանու՝ շան կամ արջի գլխի: Այստեղ նկատելի է անդրադարձը հայկական դիցաբանությանը եւ հատկապես ձկնակերպ աստվածություններին՝ վիշապներին (И. Орбели, Избранные..., стр. 91)»



Հովնան մարգարեի պատմությունը


Հաջորդ տեսարանում ձուկը ներկայացված է ծովառյուծի նմանությամբ՝ ձկան իրանով, շան գլխով, թաթերով եւ թռչնաթևերով: Նա արդեն երախից դուրս է նետել Հովնանին: Այս կենդանուց ցած ներկայացված է հակառակ ուղղությամբ լողացող փոքր ձուկ, որը շեշտում է առասպելական կենդանու ծովային ծագումը: Մյուս պատկերում մարգարեն՝ մերկ եւ ճաղատ, պատկերված է դրմածառի տակ հանգստանալիս¹:

Վերջին երկու տեսարաններից վեր քանդակագործը տեղադրել է Հովնանի կյանքի մեկ այլ տեսարան, որտեղ լուսապսակով մարգարեն արևելյան արքաներին բնորոշ դիրքով իր խոսքն է ուղղում բարձերի վրա ծալապատիկ նստած Նինվեի թագավորին: Ավելի աջ՝ չորս մեդալիոնների մեջ, ձեռքերը դեմքերին դրած մարդկային ֆիգուրներ են, որոնք խորհրդանշում են Նինվեի ժողովրդին²: Նավից վեր՝ չորս այլ մեդալիոնների մեջ, սրբեր են քանդակված³:

¹ Ըստ պարականոն տեքստերի՝ Հովնանը ճաղատացել եւ առանց հագուստի է մնացել կետի փորի բարձր ջերմաստիճանից (Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 90):

² Բյուզանդական օրինակներում ժողովուրդը քաղաքի դարպասների մոտ խմբված ամբոխի ձևով էր ներկայացվում (Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 90):

³ Դրանք անմիջական կապ չունեն Հովնանի պատմության հետ (Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 81): Համաձայն կից արձանագրությունների՝ առաջին երկուսը ներկայացնում են Ստեփանոս Նախավկային եւ Ջեփանիային, չորրորդը Եղիան է, իսկ երրորդ երիտասարդ սրբի ինքնությունը արձանագրված չէ: Ստ. Մնացականյանի կարծիքով մեդալիոնների մոտ եղած արձանագրությունները հետագա ավելացումների արդյունք են, իսկ մեդալիոնների մեջ եղած անձինք սերտորեն կապված են Հովնանի պատմության հետ (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 80), սակայն Ս. Տեր-Ներսեսյանն ու այլ



Գահակալ Քրիստոս

Հարավարևմտյան կողմի ոչ լայն միստին ընդունված պատկերագրական սխեմայով տեղադրված է Աբրահամի զոհաբերության տեսարանը: Աբրահամը ձախ ձեռքով բռնել է իր առջև զոհասեղանի վրա ծնկաչոք Իսահակի մազերը, իսկ աջով պահել դանակը: Նա ներկայացված է գլուխը ետ՝ դեպի Տիրոջ Աջը շրջված, ավելի ցած պատկերված է ծառի ճյուղերից եղջյուրներով կախված խոյը¹:

Շարունակելով պատկերագրական շարքը՝ որմնախորշին կից պատի վրա ամբողջ հասակով պատկերված է մեծ լուսապսակով մի ֆիգուր, որն իր քողարկված ձեռքերում ինչ-որ իր է կրում (արձանագրություն չունի): Նրան հաջորդում է բարձրահասակ հրեշտակի ֆիգուրը, որը լուսամուտի մյուս կողմում է ել կարծես ուղեկցում է այդ կերպարին, որը ենթադրաբար Մովսեսն է՝ օրենքի տախտակներով²:

Որպես շարքի շարունակություն՝ ներկայացված են գահին բազմած Քրիստոս եւ ոչ հեռու Տիրամայրը՝ Մանկան հետ: Նրանց գահերը տաճարներ են հիշեցնում, որոնք զարդարված

են բուսական եւ երկրաչափական զարդերով: Գահակալ Քրիստոսը ներկայացված է խաչադաջ լուսապսակով եւ ձախ ձեռքում բռնած գրքով (Ավետարանով), իսկ Աջով օրհնում է: Տիրամոր գրկում պատկերված մանուկ Հիսուսը ևս օրհնող Աջով եւ գրքով

ուսումնասիրողներ արձանագրությունները համաժամանակյա են համարում:
¹ Ըստ Ն. Մառի՝ խոյի՝ եղջյուրներով ծառից կախված լինելը սիրիական պատկերագրության տարր է: Ծառը ներկայացված է արմավենու տեսքով, ինչը ևս սիրիական ակունքների հետ է կապված (տե՛ս Ատ. Մնացականյան, Աղթամար, էջ 81, 83):
² Ա. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 81:



Գահակալ Տիրամայրը մանկան հետ

է ներկայացված: Նրանց երկու կողմերում բավական փոքր չափերով ներկայացված են Գաբրիել եւ Միքայել հրեշտակապետերը, որոնց անունները գրված են իրենց ձեռքում գտնվող բացված մագաղաթագալարների վրա¹:

Տիրամոր եւ Քրիստոսի խմբից վեր՝ մեղալիոնների մեջ, չորս ֆիգուրներ են, որոնցից երկրորդի եւ չորրորդի մոտ գրված են անունները՝ Հովել եւ Նավուն (մարգարեներ): Հարավային ճակատի կենտրոնական հատվածը՝ խաչաթևի կենտրոնական միստը, որտեղ այժմ վեր է խոյանում զանգակատունը, նույնպես քանդակազարդ էր: Նախկինում այստեղ էր գտնվում Գագիկ արքայի աղոթարանի մուտքը՝ վերնահարկի քանդակազարդ բազրիքով, որից աջ եւ ձախ եղել են Արծրունյաց նշանավոր իշխանների քանդակները²: Հարավային մուտքի բարավորի վրա երևում է ոճավորված մի վարդյակ, որի երկու կողմերում խաչաքանդակներ են ներկայացված³:

Ջանգակատնից աջ՝ կից միստերի վրա, ներկայացված են Համագասպ եւ Սահակ Արծրունի իշխանների՝ ամբողջ հասա-

¹ Ատ. Մնացականյանի կարծիքով այս պատկերաշարը (անհայտ անձը, հրեշտակը, գահանիստ Քրիստոս եւ Տիրամայրը) մեկ խումբ են ներկայացնում: Նա անհայտ կերպարը ներկայացնում է որպես սուրբ եւ դասում Վասպուրականի նահատակ հոգևորականների դասին, որը որպես սրբայնության նշան ձեռքերի վրա զցած ծածկոցով կա՛մ ավետարան, կա՛մ մասնատուփ է բռնել եւ այն ուղղել Քրիստոսին, դեպի ուն մրան ուղեկցում է հրեշտակը (Ատ. Մնացականյան, Աղթամար, էջ 59):
² Ատ. Մնացականյան, Աղթամար, էջ 58:
³ Եկեղեցիների մուտքերը զարդարող խաչապատկերներով շրջապատված վարդյակներն ու աստղերն ունեին պահպանող, չար ուժերը վանող նշանակություն:



Սահակ իշխան

կով կանգնած ֆիգուրները: Արևելյան կողմում Համազասպն է, ապա Սահակը¹: Նրանք այն իշխաններն են, որոնք 786 թվականին նահատակվել են Պարտավուն կրոնափոխ չլինելու պատճառով եւ սրբացվել են Հայ Եկեղեցու կողմից: Սահակի ձեռքերը կրծքի մոտ են, իսկ Համազասպը ձախ ձեռքում խաչ է պահում, աջով կարծես դիտողի ուշադրությունը հրավիրում դեպի սուրբ նշանը: Հետաքրքրական է Սահակի թանկարժեք քարերով եռակախիկ (երեք կախիկ ունեցող) գոտին, որն ունի առաջավորասիական ծագում²:

Հարավային ճակատի արևելյան կողմի վերջին տեսարանը ներկայացնում է Դավթի պատմությունը, որտեղ շեշտը դրված է Դավթի եւ Գողիաթի մենամարտի վրա: Չախ կողմում ներկայացված է Սավուղ թագավորը³: Դավիթը ներկայացված է աստվածաշնչյան նկարագրության համաձայն, առանց Սավուղ արքայի տված զենք

¹ Առաջինի գլխավերևում գրված է. «Տ(Է)Ր ՍՈՒՐԲ ՀԱՄԱԶԱՍՊ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆ», երկրորդի մոտ՝ «Տ(Է)Ր ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՂԲԱՅՐ ՀԱՄԱԶԱՍՊԱ ՄԱՐՏԻՐՈՍՔ ԵՒ ՎԿԱՅՔ ՔՐ(ԻՍՏՈՍԻ)»: ² Տե՛ս В. Тревер, Г. Луконин, Сасанидское серебро, илл. 29; 31. ³ Սավուղը մորուքով է, չալմայով եւ երեք քառորդով դեպի աջ թեքված. գլխավերևում արձանագրված է անունը: Նա կրում է Արծրունյաց իշխաններին բնորոշ հագուստ եւ գոտի, ինչպիսին տեսնում ենք Սահակ Արծրունու հարթաքանդակում: Սավուղի ֆիգուրը բավական ցածրահասակ է, որը Հ. Օրբելու կարծիքով պատահականության արդյունք է, քանզի քանդակագործն այն ստեղծել է ոչ որպես արքայի ֆիգուր, իսկ հետագայում հաշվի չի առել ընդհանուր հորինվածքը (И. Орбели, Избранные..., стр. 97)»



Դավիթ եւ Գողիաթ

ու զրահի (Ա Թագ. ԺԷ, 38-40, 45, 49): Նա մարտի է ելել իր հովվական հագուստով, աջ ձեռքով հետ է տարել պարսատիկը եւ կենտրոնացած հայացքով նայում է սաղավարտակիր ու սուսերակիր Գողիաթին, որի վրա պատրաստվում է նետել քարը: Վերջինիս հսկայական ֆիգուրն ավելի բարձր է, քան գլխավոր գոտու որևէ այլ կերպար:

Սավուղի ֆիգուրից վեր՝ մեդալիոնի մեջ, ներկայացված է Սամուել մարգարեն (ըստ արձանագրության): Նրա պատկերը հավանաբար այստեղ է՝ ցույց տալու համար, որ նա է օգնել Սավուղին դառնալու թագավոր⁴: Ավելի ձախ երկար մազերով եւ մորուքով մարդու կիսաֆիգուր է, որը հայացքն ուղղել է Սամուելին եւ մատով ցույց է տալիս այդ ուղղությամբ: Դա հավանաբար այն հոգևորականն է, ում տանը մեծացել է Սամուել մարգարեն⁵: Հորինվածքի ստորին մասում՝ Դավթի եւ Գողիաթի մեջտեղում, եզ է պատկերված, իսկ նրանից վեր՝ երկու վարդյակ⁶:

⁴ И. Орбели, Избранные..., стр. 97. ⁵ И. Орбели, Избранные..., стр. 97. ⁶ Ստ. Մնացականյանը գտնում է, որ եզը շեշտում է Դավթի հովիվ լինելու հանգամանքը (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ. 86), Օրբելին ավելացնում է, որ եզից վեր երկու վարդյակները խորհրդանշում են արև եւ լուսին (И. Орбели, Избранные..., стр. 97):



Արեւելյան ճակատի
առաջին գոտու
ընդհանուր տեսքը

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏ.

Այստեղ գլխավոր գոտին ունի մեկ ընդհանուր գաղափար՝ քրիստոնեության տարածումը Հայաստանում, սակայն պատկերաքանդակների խորհրդաբանության վերաբերյալ կան տարակարծություններ: Ներկայացված են ամբողջ հասակով կանգնած



Թաղեռու առաքյալ
եւ Հակոբ Մծբնեցի

Ֆիգուրներ: ճակատի երկու եզրային հատվածների պատկերագրությունը նման է միմյանց. մեկական միանման դիրքով սրբեր են, որոնց գլուխների մոտ կան ցցուն քարերի վրա արված արձանագրություններ՝ եղիա եւ Հովհաննես Մկրտիչ: Նրանցից ոչ հեռու տեղակայված են մեկական ոչ մեծ չափերի, գրեթե նույն դիրքով ներկայացված սրբեր: Հյուսիսային կողմի ֆիգուրը չունի արձանագրություն: Նա ներկայացված է առաքյալներին հատուկ հագուստով, որից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ այստեղ Բարդուղիմեոս առաքյալն է¹: Եզրային սրբի մոտ ծնրադիր կնոջ ֆիգուր է զետեղված, որը, ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, Սարեպտայի այրին է², որի որդուն բուժել է Եղիան³ (Բ Թագ. Դ 8-37):

Պատի այս մասում ներկայացված են երկու սրբերի կիսանդրիներ, որոնց ինքնությունն անհայտ է: Արևելյան ճակատի հարավային մասում ամբողջ հասակով պատկերված է Գրիգոր Լուսավորիչը (կից գրված է անունը)՝ եպիսկոպոսական հանդերձով, ձախ ձեռքում խաչադրոշմ Ավետարան: Նրանից ձախ՝ մեղալիոնի մեջ, մի սրբի կիսանդրի է (առանց արձանագրության): Խաչաթևի կենտրոնական մասում՝ լուսամուտի երկու կողմերում, միևնույն բարձրության վրա ներկայացված են երկու սրբեր: Ձախակողմյան ֆիգուրը կրում է առաքյալներին բնորոշ հանդերձանք, իսկ աջ կողմինը՝ եպիսկոպոսական հագուստով է եւ ձեռքին պահում է խաչապատկեր գիրք: Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի՝ կենտրոնական լուսամու-

¹ S. Der-Nersessian, Aght'amar ..., pg. 16.
² Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 83:
³ Հ. Օրբելին նշում է, որ դա լուսապսակով եւ մորուքավոր տղամարդ է (И. Орбели, Избранные..., стр. 98).

տի երկու կողմերում ներկայացված են Թադևոս առաքյալը, որի անունը կապված էր Արծրունյաց տոհմի հետ¹, եւ Յակոբ Մծբնեցին, որը, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորչի եղբոր որդիներից էր, եւ նրա մասին եղած ավանդությունները որոշակիորեն առնչվում են Վասպուրականի հետ:

Այսպիսով, Յովհաննես Մկրտիչը եւ Եղիա մարգարեն ներկայացված են որպէս քրիստոնեության նախակարապետները ողջ աշխարհում, Գրիգոր Լուսավորիչը եւ Բարդուղիմէոս առաքյալը՝ հավատքի տարածողը Յայաստանում, իսկ Թադևոս առաքյալը եւ Յակոբ Մծբնեցին ներկայանում են որպէս Վասպուրականում քրիստոնեության տարածողներ ու անրապնդողներ:

Յ. Օրբելու եւ հետագայում Ստ. Մնացականյանի կարծիքով այս պատի արձանագրությունները հետագայի հավելում են²:

ՅՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՃԱԿԱՏ.

Պատի արևելյան հատվածում պատկերված առաջին տեսարանում ներկայացված է Փղշտացուն սպանող Սամփսոնը (Դատ. ԺԵ 15): Նա ձախ ձեռքով բռնել է իր առջև ծնկած փղշտացու մազերից, իսկ աջով բարձրացրել է ավանակի ծնոտը եւ կարծես պատրաստվում է հարվածել: Սամփսոնի ֆիգուրն իր համաչափությամբ գրեթե չի զիջում

¹ Ս. Տեր-Ներսեսյան, Յայարվեստը ..., էջ 83, 88: Թադևոս առաքյալն է, որ մկրտել է Խուրանին՝ Արծրունյաց նախահորը, ով առաջիններից էր, որ հավատացել եւ ընդունել էր քրիստոնեությունը (Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց ... էջ 68-69):

² Ենթադրության համար հիմք էր հանդիսացել Գրիգոր Լուսավորչի ոտքերի տակ քանդակված խաչի արձանագրության տառածները: Այն կատարվել է 1721 թվականին եւ նվիրվում է ոմն Կիրակոսի հիշատակին (И. Орбели, Избранные..., стр. 112), Ստ. Մնացականյանը գտնում է, որ արևելյան ճակատին վերարտադրված է Վասպուրականում քրիստոնեության տարածումն ու պատկերված են Արծրունյաց տոհմի այն ներկայացուցիչները, ովքեր ներդրում են ունեցել այդ գործում (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 101):



Փղշտացուն սպանող Սամփսոնը եւ երկու սրբեր


հարավային ճակատին պատկերված Գողիաթի ֆիգուրին: Այնուհետև պատկերված են ամբողջ հասակով կանգնած երկու սրբեր. առաջինը պահում է փակ գալարակ, իսկ երկրորդը՝ երկար բացված գալարակ, որի վրա փորագրված է նրա անունը՝ Եզեկիել մարգարե: Նրանցից վեր երեք սրբերի պատկերներ են, որոնց անուններն արձանագրված չեն:

Յաջորդիվ ներկայացված է առյուծին դաշունահարող մի կիսամերկ ծնրադիր ֆիգուր՝ երկուսն էլ ստատիկ վիճակում. առյուծը, որին ծնկաչոք մարդը փորձում է գլխատել, հանգիստ նստած է նրա առջև: Որոշ ուսումնասիրողներ (Սիրարփի Տեր-Ներսեսյան, Երվանդ Լալայան) տղամարդուն նույնացնում են Սամփսոնի հետ¹:

Դեպի աջ ամբողջ հասակով կանգնած երկու ֆիգուրներ են, որոնցից առաջինը, ըստ արձանագրության, կռապաշտությունը վերացրած թագավոր Եզեկիան է (Դ Թագ. ԺԸ 1-37, 19): Նա ներկայացված է արևելյան իշխանին բնորոշ հագուստով՝ ասեղնագործ վերնազգեստով ու չալմայով: Արքան կրում է նաև եռակախիկ գոտի, ինչպիսին տեսնում ենք Յամազասպ իշխանի եւ Սավուղ թագավորի պատկերներում: Այս ֆիգուրը զետեղված է հյուսիսային ճակատի նույն այն մասում, որի հարավային կողմում քանդակված են Յամազասպ եւ Սահակ իշխանները²:

¹ Ստ. Մնացականյանն այստեղ տեսնում է Արծրունի իշխաններից որևէ մեկին եւ գտնում, որ այս պատկերագրությունը որևէ ընդհանրություն չունի Սամսոնի հետ, այլ գալիս է տոհմային հնավանդ կնիքների վրա պատկերված մանրակերտ քանդակներից՝ ներկայացնելով տոհմային ավանդույթների գեղարվեստական մեկնաբանումներ (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 76):

² Ըստ Ստ. Մնացականյանի՝ այս ֆիգուրը ներկայացնում է Գագիկ արքայի ավագ եղբորը՝ Աշոտ



Եզեկիա թագավորը
և Եսայի մարգարեն

Ըստ արձանագրության՝ մյուս ֆիգուրը Եսայի մարգարեն է, որը զգալիորեն ավելի բարձր է պատկերված նախորդ կերպարից:

Հյուսիսային ճակատի կենտրոնական մասում՝ խաչաթևի կենտրոնական լուսամուտի աջ եւ ձախ կողմերում, ներկայացված են Ադամն ու Եվան: Լուսամուտի ձախ կողմում մեղսագործության տեսարանն է. Ադամն ու Եվան երեք քառորդ թեքվածությամբ կանգնած են բարու եւ չարի գիտության ծառի երկու կողմերում եւ պատրաստվում են փորձել պտուղը: Լուսամուտի աջ կողմում զետեղված

Արձրունուն, իսկ նրա մոտ եղած մակագրությունը՝ Եզեկիա թագավոր, թվագրում 1721 թվականով, այնպես, ինչպես թվագրվում է արևելյան ճակատին ոմն Կիրակոսի կողմից փորագրված խաչը: Ֆիգուրն առանց լուսապսակի է, ձեռքին չունի խաչ, իսկ չալմայի առկայությունը վկայում է արաբների կողմից իշխանին ցույց տրված շնորհների մասին (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 62, 64):



Ադամի եւ Եվայի մեղսագործությունը,
Եվայի փորձությունը



Երեք սուրբ զինվորները
եւ առյուծին
տեգահարող մարդը

են Եվան եւ օձը (խիստ վնասված). Եվան ծնկի է իջել եւ խոսում է օձի հետ: Վերջինս ներկայացված է ծառին փաթաթված եւ միևնույն ժամանակ Եվայի դիմաց հորիզոնական դիրքով է: Աղթամարի հնարամիտ վարպետն օձին պատկերել է չորս կարճ ոտքերի վրա կանգնած¹: Ինչպես նշել ենք, Աղթամարի բոլոր քանդակները պահպանում են պատկերագրական որոշակի կարգ, եւ շարժումը կատարվում է ձախից աջ՝ իրադարձությունների զարգացման հերթականությամբ: Միայն Ադամի եւ Եվայի խմբում է, որ կատարվել է որոշակի շեղում. Եվայի փորձությունը պատկերվել է Մեղսագործությունից հետո:

Հյուսիսային ճակատի կենտրոնական խաչաթևի արևմտյան նիստի վրա պատկերված են երեք հեծյալ սուրբ զինվորները՝ Թեոդորոսը, Սարգիսը եւ Գևորգը (անուններն արձանագրված են նրանց գլխավերևում): Զինվորները կրում են ծածանվող թիկնոցներ, ձախ ձեռքով բռնել են իրենց ձիերի սանձերը, իսկ աջով՝ խաչագլուխ նիզակներ: Սբ. Թեոդորոսը մորուքավոր է, նրա ձիու սնբակների տակ քանդակված է հանգուցագալար օձ՝ վեր ցցված պոչով եւ բաց բերանով, դեպի որն ուղղված է զինվորի նիզակը: Սբ. Սարգիսը ներկայացված է Թեոդորոսի նմանությամբ, բայց նրա ձիու սնբակների տակ ընկած է ծաղկաձև պոչով եւ փարթամ բաշով առյուծ: Սբ. Գևորգը երիտասարդ է, անմորուս: Նրա ձին միայն մեկ ոտքով է կանգնած գետնին, իսկ մյուս երեքով սնբա-

¹ Ըստ Օրբելու՝ Աստծու անեծքից հետո օձը դարձել է սողուն, իսկ մինչ այդ, կարելի է ենթադրել, որ օձը ոտքեր է ունեցել (И. Орбели, Избранные..., стр. 100):



Երեք մանկուք հնոցում
եւ Դանիելը
առյուծների գբում

կահարում է ձեռքերն ու ոտքերը կապված մի մարդու, որը հավանաբար Դիոկղետիանոս կայսրն է¹:

Հեծյալ սուրբ զինվորների պատկերագրությունը լայն տարածում ուներ բյուզանդական արվեստում, նաև Հայաստանում եւ խորհրդանշում էր հավատի հաղթանակը: Հեծյալներից վեր՝ երեք մեդալիոնների մեջ, սրբեր են պատկերված, որոնցից առա-

ջինը, ըստ արձանագրության, սբ. Կիրակոսն է, երկրորդի ինքնությունն անհայտ է, իսկ երրորդը ներկայացնում է Ովսեն մարգարեին:

Սբ. Ջինվորներին անմիջապես հաջորդում է փոքր չափերի մարդկային մի ֆիգուր, որը տեգահարում է ետին ոտքերի վրա ծառս եղած առյուծին: Տղամարդը կրում է մինչև ծնկները հասնող պատմուճան, ուսերի վարդյակաձև բազկազարդեր են պատկերված, որոնք խորհրդանշում են նրա ազնվական ծագումը²: Վերջինիս հաջորդում է ծնկաչոք մեկ այլ ֆիգուր, որը պատռում է իր առջև չորս ոտքի վրա հանգիստ կանգնած առյուծի երախը: Ըստ արձանագրության՝ սա Դավիթ մարգարեն է: Այս տեսարանի նմանությունը մեծ է վերոհիշյալ առյուծին դաշունահարող մարդու տեսարանի հետ³:

¹ S. Der-Nersessian, Aght'amar ..., pg. 24. Պևրդի ձիու պոչը չի ծածանվում, ինչպես նախորդ երկուսինը, այլ կապված է «Սասանյան կապով» (И. Орбели, Избранные..., стр. 89)s

² И. Орбели, Избранные..., стр. 106.

³ Ստ. Մնացականյանն այս երեք տեսարաններում էլ տեսնում է Արծրունյաց իշխանների, իսկ առյուծին տեգահարող մարդու կերպարում՝ Գագիկ արքայի կրտսեր եղբորը՝ Գուրգեն Արծրունուն (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 68):

Հյուսիսային ճակատի արևմտյան պատին ներկայացված են Երեք մանկուք հնոցում եւ Դանիելն առյուծների գբում տեսարանները: Ողջ հասակով կանգնած լուսապսակով երեք մանուկները ներկայացված են օրանտի (ձեռքերը վեր բարձացրած աղոթող) դիրքով: Յուրաքանչյուրի մոտ գրված է անունը: Բացակայում են հրեշտակը, կրակի բոցերը եւ վառարանը, որում Նաբուգոդոնոսոր թագավորը փորձում էր այրել դավանափոխ լինելուց հրաժարվող երիտասարդներին: Քանդակագործը նրանց ներկայացրել է այն պահին, երբ արդեն ազատագրվել են հնոցից:

Դանիելն առյուծների գբում պատկերաքանդակի մոտ ևս կա արձանագրություն: Առջևի թաթերի վար կանգնած երկու առյուծները լիզում են օրանտի դիրքով իրենց մեջտեղում կանգնած Դանիելի ոտքերը: Առյուծների ուղղահայաց պատկերումով վարպետը, տեղի խնայողություն կատարելով, միաժամանակ գբի խորության պատրանք է ստեղծել¹: Ձախ կողմի առյուծից վեր՝ մեդալիոնի մեջ, պատկերված է մի հրեշտակ, որը բռնել է մորուքավոր մեկ այլ մարդու մագերից: Սա Ամբակուն մարգարեն է, ով օդի միջով հրեշտակին (որը հաճախ ներկայացվում է որպես Միքայել հրեշտակապետ) իր հետ վերցրած ուտելիքներով տանում է առյուծների գուբը²: Ըստ արձանագրության՝ Դանիելից աջ՝ մեդալիոնի մեջ, ներկայացված է Ամոս մարգարեն:

Աղթամարի տաճարի բարձրաքանդակների առաջին գոտում բացի թեմատիկ տեսարաններից ներառված են մի շարք խորհրդաբանական, դիցաբանական-կենդանական պատկերներ, որոնք, անշուշտ, ունեն իրենց նշանակությունը: Այդ խորհրդանշաններն առավել հաճախադեպ են աշխարհիկ կերպարների մոտ: Քանդակագործն Արծրունյաց տան ներկայացուցիչներին առաջին գոտու այլ աշխարհիկ եւ աստվածաշնչ-

¹ И. Орбели, Избранные..., стр. 102.

² Պատկերագրական այս տիպը ձևավորվել է Վիշապի եւ Բելի ապոկրիֆ (պարականոն) գրույցի համաձայն (տե՛ս Дж. Холл, Словарь сюжетов..., стр. 180):



խոյ-թռչուն

յան հերոսներից առանձնացնում է կենդանա-կերպ տոհմանշաններով¹, որոնք շրջանցում են շինությունը բոլոր կողմերից²: Ներկայացված են բազմաթիվ կենդանիներ՝ թե՛ առանձին-առանձին, թե՛ զույգերով՝ եղնիկներ, արմավենու երկու կողմերում կանգնած այծեր, վզերով միմյանց փաթաթված սիրամարգեր, ուղտ, մեծամարտող արջեր, առյուծներ, որսին հոշոտող արծիվներ, ցուլին հոշոտող առյուծ եւ այլն: Բոլոր կենդանիները պատկերված են ոճավորված իրաններով, կտուցներից օղակներ, եւ թաթերն ու պոչերը ժապավեններով ու վարդյակներով զարդարված: Առավել մեծ ուշադրության են արժանի այդ պատկերներից մի քանիսը, որտեղ շեշտված է կերպարի երկակի բնությունը: Հարավարևելյան պատին արծվի գլխով թևավոր առյուծ է՝ գրիֆոն՝ անգղառյուծ՝ ոճավորված թևերով եւ պոչով, իսկ թաթերին՝ սրբազանություն խորհրդանշող վարդյակներով: Նույն

¹ Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 48:
² Պահպանիչ խորհրդանշանների պատկերումը հին արևելյան ավանդույթ է, եւ Հայաստանում հայտնի է դեռևս IV դարից (Աղցի դամբարան), սակայն զուտ տոհմանշանները, որպես տվյալ նախարարական տան խորհրդանիշ, Աղթամարում հանդիպում են առաջին եւ վերջին անգամ (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 48):

հարավարևելյան պատին տեղակայված է մեկ այլ դիցաբանական կերպար՝ խոյ-թռչունը, որը ևս ոճավորված է, ոտքերին զարդարուն օղակներ են քանդակված եւ ժապավեններ¹: Հյուսիսարևելյան հատվածում է տեղակայված կնոջ գլխով եւ թռչնիկան կերպար՝ հուշկապարիկ, որը պոչի տակ ունի ոճավորված փետրափունջ: Հուշկապարիկի պատկերագրությունը ևս լայն տարածում ուներ վաղ միջնադարում՝ հատկապես Արևելքում:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՏԻ.

Տաճարի քանդակների այս գոտին ներկայացված է առաջին՝ հիմնական, եւ երրորդ՝ որթազալարի գոտիների միջև: Այն ներառում է ուժեղ ելուստով ներկայացված 42 կենդանաքանդակներ եւ մեկ մարդկային գլխաքանդակ: Շարքի նշանակության մասին կան բազմազան, երբեմն իրարամերժ կարծիքներ՝ միջագետքյան եւ հելլենիստական շրջանի ավանդույթների ընդօրինակում (Ի. Ստրժիգովսկի), ասորական քանդակների հնավանդ ձևերի արձագանքներ (Հ. Լինչ), թագավորական պալատի պատերի վրա կախված իրական որսորդական ավարների քարե վերարտադրություններ (Հ. Օրբելի) եւ այլն: Այն ամբողջովին տարբերվում է թե՛ կատարման տեխնիկայով, թե՛ ոճով: Այս գոտու մասին Լ. Դուրնովոյի եւ Աս. Մնացականյանի ենթադրությունն է, որ սրանք այն պատկերներն են, որոնք եղել են Կոտոմից բերված քարերի վրա եւ ներկայացնում են հայկական հին հեթանոսական քանդակներ²: Դրան հակառակ՝ Ստ. Մնացականյանն այդ քանդակները համարում է կառույցին ժամանակակից³:

¹ Ժապավենները Սասանյան արքաների հագուստի անբաժանելի մասն էին, իսկ հայ Արշակունի արքաների համար այն «պատվի» խորհրդանիշ էր, ինչը շնորհում էին նրանց, ովքեր իրավունք էին ստանում մուտք գործել պալատ (И. Орбели, Избранные..., стр. 114):
² Л. Дурново, Очерки ..., стр. 73, Աս. Մնացականյան, Նոր փորձ ..., էջ 150:
³ Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 112:



Չարթային եւ գոռելիեֆային մշակմամբ կենդանաբանդակներ. հատված

Չ. Օրբելին, քանդակները տեղում զննած լինելով, նշում է, որ դրանք ներկված են եղել, իսկ աչքերի բիբերը՝ ազուցված բազմագույն խճիկներով: Նրանցից 9-ը հարթային մշակում ունեն, 14-ը կլոր քանդակի սկզբունքով մշակված գլխաքանդակներ են, 5 պրոտոմներ եւ 13 գոռելիեֆներ, որոնք միայն մի փոքր ելուստով են կպած պատի հարթությանը:



Չարթային եւ գոռելիեֆային մշակմամբ կենդանաբանդակներ. հատված

Քանդակները տաճարի ճակատներում խիստ անհավասար են բաշխված. արևմտյան ճակատում՝ 2, արևելյանում՝ 8, հարավայինում՝ 15, իսկ հյուսիսայինում՝ 17: Նրանք անկախ են միմյանցից, չունեն ետնախորք կամ երիզ: Ներկայացվածները վայրի կենդանիներ են՝ հովազ, խոյ, ձի, արծիվ, կապիկ, առյուծ, քարայծ, եղնիկ, սիրամարգ, ձկներ, ցիռեր եւ այլն: Առկա են երեք տեսակի կրկնվող խմբեր. առաջինը՝ քարայծեր, եղջերուներ, երկրորդը՝ առյուծներ, հովազներ, երրորդը՝ թռչուններ, որոնց մեջ գերակշռում է արծվի պատկերը (յուրաքանչյուր խմբում նշված կենդանիներից ներկայացված է 9-10 օրի-



Արևմտյան ճակատի երկրորդ գոտի. խաչաբանդակներ եւ կենդանագրություններ



Աղամս իր կողմից անվանակոչած կենդանիներով

նակ): Այս կենդանիների պատկերումը տարածված էր հայ արվեստում, սակայն ձկների, կապիկների, եգիպտահավերի պատկերումը եզակի է այս հուշարձանում:

Չնայած կենդանաքանդակների տեղադրության որևէ հստակ համակարգ չի նշմարվում, սակայն վարպետները կարողացել են այնպես անել, որ միևնույն կենդանու պատերաքանդակները միմյանց շատ մոտ չգտնվեն: Արևմտյան կողմում՝ երկու կենդանագլուխների կողային հատվածներում, երեք խաչեր են, որոնք տարբերվում են առաջին գոտում ներկայացված հավասարաթև խաչից: Չարավային ճակատին՝ զանգակատան արևելյան հատվածում, ներկայացված է մորուքավոր մարդու գլուխ¹: Արևելյան ճակատին՝ խաչաթևի կենտրոնական լուսամուտից վեր, մեծ մեդալիոնի մեջ, զետեղված է առանց լուսապսակի մի ֆիգուր, որի աջ կողմում գրված է Ադամ², իսկ ձախ կողմում՝ արձանագրություն է աստվածաշնչյան հետևյալ խոսքերով. «ԵՒ ԿՈՉԵԱՑ ԱՂԱՄ ԱՆՈՒԱՆՍ ԱՄԵՆԱՅՆ ԱՆԱՄՆՈՑ ԵՒ ՊԱՁԱՆԱՑ»: Որպես բացատրություն այս գրությանը՝ Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է,

¹ Ստ. Մնացականյանը գտնում է, որ այս կերպարը գալիս է դեռևս հեթանոսական ժամանակներից: Այն իր տեղն է ունեցել ժողովրդական բանահյուսության մեջ՝ հանդես գալով որպես չար ուժերի դեմ պայքարող հերոսի մարմնացում եւ որպես այդպիսին տեղ գտել սույն քանդակաշարում (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 121):

² Կերպարն ունի ուսերին ալիքվող երկար մազեր եւ հանդերձավորված է նույն ճակատի որթագալարի գոտու Գագիկ արքայի հագուստի նմանությամբ: Ս. Տեր-Ներսեսյանն Ադամի այս պատկերում տեսնում է Քրիստոսի առաջին «դիմանկարը», որը պատկերագրական ոճով մոտենում է Քրիստոս Ամենակալ (Պանտոկրատոր) պատկերագրական տիպին (Ս. Տեր-Ներսեսյան, Չայ արվեստը ..., էջ 87), Ստ. Մնացականյանը, համոզված լինելով, որ բարձրաքանդակի մոտ եղած արձանագրությունը համաժամանակյա չէ քանդակին, նշում է, որ այստեղ պատկերված է Խուրանը՝ Արծրունյաց նահապետը, ում, ըստ Թովմա Արծրունու, մկրտել է Թադեոս առաքյալը (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 102):



Գագիկ թագավորի օթյակի բազրիքը

որ այստեղ ներկայացված են Ադամի անվանակոչած կենդանիները¹:

Կենդանաքանդակներ եղել են նաև տաճարի ներսում՝ Գագիկ արքայի օթյակի այժմ ավերված բազրիքի վրա: Կամարաշարի ստորին հատվածում մանրամասն մշակմամբ ներկայացված են եղել երկու ցուլ, երկու քարայծ, արջ եւ փիղ: Նրանց գլխա-

վերևում բարձրանում են նռան թփեր, որոնք զարդարել են բազրիքն ամբողջությամբ:

Աղթամարի կենդանաքանդակների մի մասը հնարավոր է, որ արձագանքն է տոտեմական ժամանակաշրջանի մշակույթի: Նման պատկերներ հանդիպում են նաև ուրարտական եւ խեթական արվեստում: Չի բացառվում, որ նման «պահպանիչ» մշանակություն է ունեցել նաև աղթամարյան քննարկվող քանդակաշարը:

ՈՐԹԱԳԱԼԱՐԻ ԳՈՏԻ.

Աղթամարի տաճարը բոլորող երրորդ գոտին որթագալարի կամ որթատունկի գոտին է, որը գրեթե չունի ընդհատումներ: Ոճական միասնականության շնորհիվ այն ամբողջական տպավորություն է թողնում: Թեմատիկ առումով ներկայացված են առանձին-առանձին տեսարաններ, որոնք իմաստային տեսանկյունից չեն շարունակում մեկը մյուսին, սակայն հորինվածքային առումով որթագալարները շարունակական շղթա են կազմում: Մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ այստեղ ներկայացված է գյուղական-այգեգործական, բերքառատ ու երջանիկ կյանքի ամբողջական պատկեր եւ խորհրդանշում է Գագիկ արքայի ստեղծած «կատարյալ» երկիրը: Այստեղ

¹ Ա. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 87:



Լյգու պահպաններ, արջի եւ մարդու մենամարտեր

տեղ են գտել այգու պահպանությանը (մենամարտ արջերի, առյուծների հետ)¹, մշակմանն ու խնամքին (հող փորող եւ փխրեցնող այգեգործներ)², բերքահավաքին (կողովներով բեռնված մարդիկ, խաղողաքաղ), բերքը վայելելուն (խաղող ուտողներ ու կենդանիներ), զինու պատրաստմանը նվիրված (հնձանում խաղող ճզմող տղամարդիկ) եւ զվարճության (ըմբշամարտ, զինարբուք) տեսարաններ, հովիվներ կենդանիների հետ, զանազան ալեգորիկ կենդանիներ եւ այլն:

Որթագալարի տարբեր հատվածներում ոճավորված եւ գալարուն որթերին միահյուսված երևում են մարդկային գլխաքանդակներ (հիմնականում տղամարդկանց՝ բեղերով եւ մորուքով): Դրանք այգու պահպաններն են, որոնք միաժամանակ ուժ են հաղորդում եւ սնունդ որթը: Հա-



Հնձանի պատկերը

¹ Գերակշռող է արջի պատկերը (այն հանդիպում է յոթ անգամ՝ հինգ անգամ մարդու հետ մենամարտելիս, երկու անգամ իր քթոթքների հետ եւ պտուղը համտեսելիս): Հանդիպում են նաև մարդու մենամարտեր առյուծի եւ վարազի հետ:

² Ըստ Հ. Օրբելու՝ հյուսիսային ճակատի բաժով հողը փորող մարդկային երկու ֆիգուրները զբաղված են հողի եւ որթի մաքրման աշխատանքներով (И. Орбели, Избранные ... , стр. 137): Ըստ մեկ այլ տեսակետի՝ վերոհիշյալ ֆիգուրի մոտ գետեղված մկնառնետի քանդակը ժամանակի անցողիկության խորհրդանշան է, եւ ողջ հատվածն այլաբանական ներկայացումն է այն բանի, որ այս դրախտային այգին հավիտենական չէ, եւ ժամանակը, ի դեմս բաժով մարդկանց, ավերում է այն (Հ. Պետրոսյան, Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական աշխարհի ..., էջ 427):



Գագիկ Արծրունին
եւ իր որդիները
որթագալների
մեջ արեւելյան ճակատ

րավային պատին ներկայացված է ճարտարապետական մի շինութ-
յուն՝ զույգ կամարներով, որոնց
ներքո երկու տղամարդ՝ երիտա-
սարդ եւ միջին տարիքի (մար-
մինները կիսամերկ, տաբատնե-
րը բարձրացված մինչև ծնկնե-
րը), ոտքերով խաղող են ճզմում:
Դա հնձանն է՝ այն վայրը, որտեղ
խորհրդաբանորեն կենաց ծառի
պտուղները վերածվում են կենաց
հեղուկի: Յնձանը քրիստոնեական

խորհրդաբանության մեջ ունի իր նշանակությունը, համեմատվում է այն խաչի հետ,
որի վրա խաչվել է Քրիստոս¹:

Արևելյան ճակատի կենտրոնական հատվածն այս ողջ հորինվածքի հանգուցալու-
ծումն է: Այստեղ ներկայացված է բարձերի վրա ծալապատիկ նստած Գագիկ Արծրու-
նին: Արքայի հագուստն ու թագը, ի տարբերություն արևմտյան ճակատի հանդերձան-
քի, բավականին համեստ է: Նա աջ ձեռքով բռնել է գինու գավաթը, իսկ ձախով խաղող
է պոկում գլխավերևում գալարվող որթից: Արքայի երկու կողմերում նրա որդիներն են՝
ներկայացված որպես սպասավորներ²: Նրանք կրում են երկար հագուստ, որն ամրաց-

¹ Պատահական չէ, որ վաղ միջնադարյան մի շարք քանդակներում խաղողի այգու կենտրոնում, որտեղ
սովորաբար ենթադրվում էր հնձանի առկայությունը, պատկերվում էր խաչ (Աղց, Քասախ, Ջվարթնոց եւ
այլն) (Յ. Պետրոսյան, Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական աշխարհի ..., էջ 418):
² Արքայական խնջույքի նման պատկերագրությունը լայն տարածում ուներ Սասանյանների, ապա
Աբբասյանների շրջանում, ինչպես նաև Միջին Արևելքի երկրներում: Նման պատկերագրությունը



Գագիկ Արծրունին
եւ իր որդիները
որթագալների
մեջ. հատված

ված է եռակախիկ դրվագազարդ գոտիով, ինչպիսին տեսնում ենք առաջին գոտում
պատկերված Սահակ Արծրունու եւ Սավուղ արքայի քանդակներում¹: Չախակողմ-
յան ֆիգուրը նշան թփի մոտ է, իսկ աջակողմյանը՝ որթագալարի ներքո: Նշան թուփը,
որ խորհրդանշում է Դրախտն ու Կենաց ծառը, որթագալարի գոտում երկու անգամ
է հանդիպում՝ արևելյան այս հատվածում եւ արևմտյան ճակատի կենտրոնում՝ Գա-
գիկ արքայի կտիտորական տեսարանի անմիջապես վերևում²: Արևելյան ճակատին
պատկերված է մի հեծյալ զինվոր, որը շրջված նետահարում է արջին³:

Այգեկութի պահին խաղողի այգուն գտնվող արքայական տեսարանի մոտ ներկա-
յացված են մի շարք իրական եւ առասպելական, երևակայական կերպարներ: Որթա-
գալարի գոտին ներկայացնում է Գագիկ արքայի կողմից ստեղծված երկրային դրախ-
տը, որտեղ նա հանդես է եկել որպես «բարի այգեպան», ուն առջև փռված է իր այգին՝
խորհրդանշելով երկիրը՝ խաղաղ ու բարեկեցիկ ժողովրդով: Այս անձնավորված այգի-
աշխարհը խորհրդանշում է Դրախտը՝ երկնային Երուսաղեմը երկրի վրա⁴, որը կառու-
ցել է Գագիկ Արծրունին եւ որով պիտի արժանի լինի փրկության:

գերակշռում էր մինչև VIII դարի վերջը (Յ. Բ. Маршак, В. Распопова, Восточные элементы в рельефах
Ахтамара, Четвертый международный симпозиум по армянскому искусству (Тезисы докладов) ,
Ереван, 11-17 сентября, 1985, стр. 181).

¹ Ոճական տեսանկյունից եւ հատկապես հագուստների ու զինատեսակների առումով մեծ է Իրանի
ազդեցությունը:
² Յ. Акопян, Символоческий образ Небесного Иерусалима ..., стр 103.
³ Ուսումնասիրողները, հեծյալի պատկերագրությունից, հագուստի եւ սաղավարտի ձևերից ելնելով, այն
կարծիքին են, որ դա հետագա ավելացման արդյունք է (И. Орбели, Избранные ... , стр. 159, Ս. Տեր-
Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 84, Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 122):
⁴ Երկնային Երուսաղեմը մի գաղափար էր, որ ծնված էր կրոնական պատկերացումներից եւ մշտապես
առաջնորդում էր միջնադարյան մարդուն: Այն խորհրդանշում էր Դրախտը եւ նույնանուն Փրկության,
Հավերժության գաղափարների հետ: Ուստի միջնադարյան մարդու համար չկար առավել վեհ
գաղափար, քան Երկնային կամ Նոր Երուսաղեմին արժանանալու ձգտումը:



Կենդանավազքի տեսարանները ճակտոնային եւ թմբուկի քիվերի վրա

ԴԵՄՔ-ԴԻՄԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԱՎԱԶՔԻ ԳՈՏԻՆԵՐ.

Հայկական եկեղեցիներում քիվերը սովորաբար մշակվում են երկրաչափական եւ բուսական զարդաձևերով: Միայն եզակի հուշարձաններում կարելի է քիվերի վրա հանդիպել կերպարային քանդակներ, որոնցից մեկն Աղթամարն է:

Տաճարի քանդակաչարի չորրորդ գոտին երիզում է կառույցի բոլոր հատվածները՝ աշտարակածն ելուստներն ու ճակտոնապատերի թեքադիր լանջերը ողջ երկայնքով: Այն իր մեջ ներառում է կենդանապատկերներ եւ մարդկային դեմքեր կամ դիմակներ: Հինգերորդ գոտին, որ ամբողջովին երիզում էր թմբուկի քիվը, ներկայացնում էր կենդանավազքի դիմամիկ հորինվածք: Այս երկու գոտիները նման են միմյանց թե՛ կատարման ոճով, թե՛ ընդհանուր կառուցվածքով, ուստի նպատակահարմար է դրանք դիտարկել միասին:

Չորրորդ գոտին բաղկացած է հարթաքանդակային երեք հիմնական մասերից՝ հիմնական նիստերի վրա զետեղված դեմք-դիմակների շարք եւ հանգիստ վիճակում ներկայացված կենդանիներ ու թռչուններ, իսկ ճակտոնապատերի քիվերին ներկայացված է կենդանավազքի դիմամիկ շարքը, որտեղ շարժումն ուղղված է դեպի վեր:



Դեմք դիմակների շարքը հարավային ճակատ

Դիմապատկերները բավական մեծ խումբ են կազմում. արևմտյան ճակատին տեղադրված են երկու, հարավային ճակատին՝ տասնմեկ, իսկ հյուսիսայինին՝ տասը դիմապատկերներ¹: Դիմակների մշանակության մասին կարծիքները բազմազան են եւ հաճախ իրարամերժ²: Հյուսիսային ճակատի տասը դիմաքանդակներից հինգը կին է, հինգը՝ տղամարդ, ընդ որում կանանցից մեկը եւ տղամարդկանցից երեքը լուսապսակ ունեն³:

¹ IX-X դարերում հայտնի է Տաթևի վանքի լուսամուտի վրայի դիմաքանդակները: Ռուսական արվեստում ևս տարածված էր դիմաքանդակների պատկերումը, սակայն դրանք ուշ շրջանում են հանդիպում (Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը ..., էջ 93):
² Ստ. Մնացականյանի կարծիքով այստեղ ներկայացված են Վասպուրականի Արծրունյաց նախարարական տան հետ համագործակցող իշխանական տների ներկայացուցիչները, իսկ արևմտյան ճակատի երկու դեմքերը ներկայացնում են Գագիկ Արծրունու մորը՝ իշխանուհի Սեդային եւ արքայի կնոջը՝ Մլքե թագուհուն (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 136): Գ. Վազները Վլադիմիրյան XII դարի Աբ. Աստվածածնի Ծածկոց (*Покров*) տաճարի վրա զետեղված կանանց նմանօրինակ դիմակները դիտարկում է որպես ժողովրդի սիմվոլիկ պատկերման ակնարկ, որն առաջացել էր ժողովրդական ավանդույթների ազդեցությամբ (Г. Вагнер, Скульптура Древней Руси, Москва, 1969, стр. 142):
³ Մնացականյանը գտնում է, որ այս դեմքերը ներկայացնում են աշխարհիկ մարդկանց, իսկ լուսապսակները վկայում են նրանց սրբացված լինելու մասին (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 137):



Որթագալար.
ընդհանուր տեսք



Կենդանավազքի
գոտի. հատված

Դիմաքանդակներին հաջորդում են մի շարք կենդանիների պատկերներ՝ կենաց ծառի երկու կողմերում կանգնած այծեր, ցուլի եւ եղջերուի հետ մենամարտող առյուծ, «համբուրվող» թռչուններ, եղջերուներ, օձերի հետ մենամարտող թռչուններ եւ այլն: Կենդանապատկերները զարդարված են սասանյան կապերով եւ օղակներով, ինչպիսիք տեսնում ենք առաջին՝ թեմատիկ գոտում՝ պահպանիչ խորհրդանիշների օրինակներում¹: Չորրորդ գոտում պատկերված են նաև ոճավորված արմավենիներ, ծառեր, ինչն իսպառ բացակայում է վերջին գոտում: Դրանց միջոցով բաժանվում են չորրորդ գոտում տեղ գտած դիմապատկերները, հանգստի ու վազքի մեջ գտնվող կենդանիները:

Տաճարի խաչաթևերի ամենաարտահայտիչ մասում՝ քիվերի վրա է զետեղված կենդանավազքի թեման արծարծող պատկերաշարը, որն անփոփոխ շարունակվում է թմբուկի վրա՝ հինգերորդ գոտում: Գակտոնապտերի վրա շարժումն ուղղված է դեպի

¹ Ստ. Մնացականյանը մեծ կապ է տեսնում առաջին գոտու հերալդիկ կենդանապատկերների եւ քննարկվող հարթաքանդակների միջև՝ համարելով, որ դրանք դիմակի տեսքով պատկերված իշխանական տների ներկայացուցիչների տոհմանշաններն ու զինանշաններն են (Ստ. Մնացականյան, Աղթամար, էջ 140):




Երկրորդ
եւ չորրորդ գոտիների
ընդհանուր տեսքը

վեր: Ներկայացված են հովազներ, եղջերուներ, քարայծեր, նապաստակներ, աղավնիներ, կաքավներ, երկու անգամ հանդիպում է շուն եւ այլն¹: Ներկայացված է կենդանավազքի՝ այն է որսի տեսարան, ինչն այդքան սիրված մոտիվ էր Արևելքում: Թովմա Արծրունու շարունակողը հիշատակում է Գագիկ արքայի՝ Վասպուրականի տարածքում՝ ճվաշուտ գավառի Գետն ավանի մոտ հիմնած որսատեղիի մասին²: Բոլոր կենդանիները ներկայացված են սրընթաց վազքի պահին, ինչն աշխուժություն է հաղորդում գոտիներին: Չնայած այն բանին, որ կենդանիները ոճավորված չեն եւ ներկայացված են այնպես, ինչպես իրական որսի ժամանակ, այնուամենայնիվ կենդանավազքի տեսարանը հանդես է գալիս որպես զարդապատկերային տարր եւ թերևս, թեմատիկ բնույթ չի կրում:

Ընդհանուր գծերով այսպիսին են Աղթամարի պատկերաքանդակները, որոնք եկեղեցու արտաքին պատերը դարձրել են մի ինքնատիպ ու բազմիմաստ «պատկերագիրք» եւ շնորհիվ իրենց ոճական եւ խորհրդաբանական յուրահատկությունների՝ դեռ երկար ժամանակ կմնան ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում:

¹ Զ. Օրբելին այստեղ տեսնում է իշխանական որսի տեսարան, սակայն բացակայում է հորինվածքի առաջին մասը՝ որսորդները, իսկ կենդանիները ներկայացված են որսորդներից փախչելու պահին (Մ. Օրбели, Избранные ..., стр. 179)s
² Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց ... , էջ 143:



ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1045 թվականին Անիի գրավմամբ բյուզանդացիները վերացրեցին Բագրատունյաց թագավորությունը, իսկ մեկ տարի անց քաղաքից հեռացրեցին նաև Հայոց կաթողիկոսական աթոռը, եւ ինչպես պատմիչ Վարդան Արեւելցին է գրում. «վերացուցին ի նմանէ (Անիից – Կ. Ս.) զերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան...»¹: Որոշ ժամանակ անց բյուզանդացիները դիմեցին ծայրահեղ քայլի՝ Հայոց կաթողիկոսությունն ընդհանրապես վերացնելու. նպատակով արգելեցին նոր կաթողիկոսի ընտրությունը: Մեծ ճիգերի գնով միայն հայ ազնվականությանը հաջողվեց 1066թ. իրականացնել նոր կաթողիկոսի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդի Վահրամ-Գրիգորի (Վկայասեր) ընտրությունը, որին, սակայն, չթույլատրվեց Հայաստանի սահմաններում նստավայր ունենալ: Գրիգոր Բ Վկայասերը (1066-1105) կաթողիկոսության վարչական գործերից հեռու անձնավորություն էր՝ ամբողջովին տարված սուրբգրական ու վարքագրական գործերի՝ հունարենից հայերեն թարգմանելու աշխատանքով: Նաև այս էր պատճառը, որ Գրիգոր Վկայասերի օրոք հանդես եկան միանգամից չորս հակաթոռ կաթողիկոսներ (նախկինում չտեսնված մի բան), որոնց ձեռնադրությանը նա չի ընդդիմանում²:

Աղթամարի կաթողիկոսության առաջացումը հակաթոռության այս միտումի մի դրսևորումն է, որը տեղի ունեցավ ավելի ուշ՝ 1113 թվականին: Այդ ժամանակ Կիլիկիայի սահմանամերձ Քեսունի Կարմիր վանքում Բարսեղ Ա Անեցին (1105-1113), Գրիգոր Վկայասերի կամքը կատարելով, կաթողիկոս է ձեռնադրում վերջինիս քրոջ

¹ Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 104: Անիի կաթողիկոսության պատմության մասին տես Կ. Մաթեոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, Երևան, 2010, էջ 9-57, 121-125:

² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1494-1496, 1515-1518, 1521-1525, 1532-1534: Գրիգոր Վկայասերի ժամանակ առաջացած հակաթոռներին հնագանդեցնում է կաթողիկոսի քրոջ որդին՝ Բարսեղ Ա Անեցին, որին նա նույնպես արտոնել էր կաթողիկոս ձեռնադրվել:

թռանը՝ Գրիգորին, որը հայտնի է Գրիգոր Գ Պահլավունի անունով, եւ այդ ժամանակ, տարբեր աղբյուրների համաձայն, 15 կամ 17 տարեկան էր: Գրիգորի՝ այդքան վաղ տարիքում կաթողիկոս ընտրվելուց դժգոհ Վասպուրականի Դավիթ եպիսկոպոսն իրեն կաթողիկոս է հռչակում՝ հիմք դնելով Աղթամարի կաթողիկոսությանը¹: Յետաքրքիր է, որ իր կաթողիկոսության օրինականացման համար նա առաջին հերթին դիմում է անեցիներին, բայց մերժում ստանում, ինչպես այդ մասին նշում է Վարդան Արեւելցին. «Դավիթ... ոչ եղև ընկալեալ, թէև շատից եղև աշխատ ընծայիւք եւ աղաչանաւք՝ մանաւանդ ի յԱնույ գլխաւորացն»²: Սակայն նրան ընդունում են սյունեցիները եւ Թադեոս առաքյալի աթոռ համարվող Արտազը, բնականաբար, նաեւ Վասպուրականցիները: 1114թ. Կարմիր վանքում գումարվում է եկեղեցական ժողով, որն անօրինական է ճանաչում Դավթի կաթողիկոսանալը եւ բանադրանքի է ենթարկում նրան:

Հարկ է նշել, որ Դավիթն Աղթամարում կաթողիկոսական աթոռի հաստատումը հիմնավորում էր նաեւ նրանով, որ այն գտնվում է բուն Հայաստանում՝ մի վայրում, որը նախկինում եղել է թագավորական եւ կաթողիկոսական նստավայր³: 1118թ. մի հիշատակարանից երեւում է, որ Հայաստանի որոշ շրջաններում դեռ հստակ չէին կողմնորոշվել, թե ով է օրինական աթոռակալը⁴:

¹ Աղթամարի կաթողիկոսության մասին մատենագիտությունը տես Յ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երեւան, 1959, էջ 603-609:

² Վարդան Արեւելցի, էջ 120:

³ Աղթամարում հավանաբար 15-րդ դարում ավանդույթ է ձեւավորվել, ըստ որի Աղթամարի աթոռի հաստատողը եղել է Սուրբ Գրիգոր Նարեկացին (տես Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երեւան, 1958, էջ 308), որը, իհարկե, պատմական հիմք չունի:


⁴ «Գրեցաւ ի ՇԿԷ (1118) թուականս Հայոց, ի գեւղս որ կոչի Մարմետ... ի հայրապետութեանն տեանն Դաւթի Հա(յ)ոց կաթողիկոսի, յորում կայր եւ այլ կաթողիկոս ի ներքին երկիրն, մերձ ի յԱնտիոք: Արդ, եթէ ո՞ր ճշմարիտ է կամ ո՞ր սուտ, գայն Աստուած գիտէ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 153, «կաթողիկոսի» բառից հետո հետագայում ավելացվել է «ի Վասպուրական»):

Դրանից հետո՝ 1150-ական թվականներին, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխվում է Հռոմկլա (մինչեւ 1293թ.), ապա Սիս, 1441-ին՝ Վաղարշապատի Սբ. Էջմիածին: Մի քանի տարի անց Սսում վերականգնվում է կաթողիկոսական աթոռը (փաստորեն հակաթոռ): Ամենայն Հայոց կաթողիկոսության, Սսի (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության), Ինչպես նաեւ Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի Հայոց պատրիարքական աթոռների, Սյունյաց մետրոպոլիտոսության եւ Աղթամարի աթոռի փոխհարաբերությունների պատմությունը մի ծավալուն նյութ է, որին անդրադառնալը դուրս է մեր նպատակից: Միայն նշենք, որ այդ հարաբերությունները ժամանակ առ ժամանակ փոփոխվել են, ոչ միայն հակառակության ու մրցակցային բնույթ են կրել, այլ ավելի հաճախ հանդուրժողականության եւ գործակցության:



Աղթամարի առաջին կաթողիկոսը՝ Դավիթը (մահ. մոտ 1165թ.), որդին էր Ամյուկ ամրոցի տեր Աբդլմսեհ կյուրապաղատի, որը որդին էր Խեղենիկ (Խեղենեկ) Արծրունու թոռ Թոռնիկի¹, այսինքն սերում էր Արծրունիներից ծագող մի տոհմից: Թեեւ Դավթի պապի անունը Թոռնիկ է, որի պատճառով հավանաբար նրան հաճախ կոչում են «Թոռնիկյան» մականունով, սակայն դա ճիշտ չէ, քանի որ այդ նույն ժամանակ Սասունում իշխող Թոռնիկյան հայտնի տոհմը միանգամայն այլ ծագում ունի՝ Մամիկոն-

¹ Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 34:



յանների շառավիղ է¹: Դավիթն ինքն էլ իրեն Արծրունի է համարել, ինչպես երեւում է Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունից²:

Աղթամարի աթոռն Աբղլնսեհ Արծրունու տոհմի կաթողիկոսների ձեռքին մնաց մինչեւ 1272թ., որից հետո այն անցավ Սեֆեդինյան տոհմին, որը մայրական գծով ազգակից էր նույն Արծրունիներին, եւ կաթողիկոսական աթոռն իրենց ձեռքում պահեցին մինչեւ 16-րդ դարի վերջերը:

Աղթամարի կաթողիկոսների գործունեությանը չենք կարող անդրադառնալ տեղի սղության պատճառով, մանավանդ որ այդ մասին առկա է Ներսես Ակինյանի արժեքավոր աշխատությունը³, միայն նշենք, որ այս աթոռը շատ մեծ դեր կատարեց Վան-Վասպուրական, Տարոն աշխարհների ու ողջ ծովեզրյա գավառների հայության հոգեւոր եկեղեցական կյանքը կազմակերպելու, ժողովրդի քրիստոնեական կորովը պահպանելու համար: Հայ եկեղեցու պատմությունից հայտնի է, թե ինչ բազմապիսի հակասություններ էին ծագում բուն Հայաստանի հոգեւորականության (հյուսիսային եւ արեւելյան շրջանների) եւ Կիլիկիայում գտնվող Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի միջեւ՝ հիմնականում պայմանավորված լինելով վերջինիս որդեգրած դավանաբանական զիջողականությամբ

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երեւան, 1976, էջ 482-486, տե՛ս նաեւ Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 402-404, Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 251:

² «Դավիթ, որ ապստաբեալ նստաւ յԱղթամար, զինքն ասէր յԱրծրունեաց...» (Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Երեւան, 1956, էջ 343):

³ Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920 (200 էջ): Աղթամարի կաթողիկոսության պատմության մասին այժմ նոր ուսումնասիրություն է պատրաստում պատմական գիտությունների դոկտոր Վրեժ Վարդանյանը:

◀
 ?????????? ??????
 □□□□□□□□

(նախ հույներին, ապա Կաթոլիկ եկեղեցուն), որն ուներ քաղաքական դրդապատճառներ: Աղթամարն այդ վեճերից մեկ կողմ էր կանգնած եւ մեծ հավակնություններ չցուցաբերելով՝ զբաղված էր իր հոտի ներքին գործերով ու հոգեւոր խնդիրներով: Քաղաքական իրավիճակն էլ այստեղ համեմատաբար բարդ էր: Եթե Կիլիկիայում կար անկախ թագավորություն, Դյուսիսային Հայաստանն ու Սյունիքն էլ Ջաքարյանների շրջանում կրոնական իմաստով ազատ ու ինքնիշխան էին, ապա Աղթամարի աթոռի ենթակայության շրջանները գտնվում էին մահմեդական իշխանավորների տիրապետության տակ, որոնց հետ կաթողիկոսները պիտի հարաբերվեին որպես տեղի հայ հավաքականության ներկայացուցիչ՝ հանդես բերելով զգուշավորություն եւ շրջափակվածություն:

Միշտ չէ, որ հաջողվում էր զսպել շրջակա մահմեդական իշխանավորների կողոպտչական ու կրոնական կրքերը: Հայտնի է, որ 1393թ. Ոստան քաղաքում մահմեդական մոլեռանդ ամբոխը քարկոծելով սպանում է Աղթամարի Ջաքարիա Բ (1369-1393) կաթողիկոսին¹: 1431-ին Աղթամարը գրավում է ոմն Փիրի բեկը եւ ավերի ու ավարի մատնում՝ վանքի միաբաններին երկու տարի փախստական դարձնելով²: Որոշ ժամանակ անց՝ Ջաքարիա Գ Աղթամարցու (1434-1464) ժամանակ, քրդական Ռոժիկ ցեղի առաջնորդը փորձում է լաստանավերով իր հրոսակներին Աղթամար հասցնել, բայց աղթամարցիները կարողանում են լաստանավերը գրավելով այդ ծրագիրը խափանել: Ավելի ուշ՝ 1523-26թթ., քրդերին կրկին հաջողվում է ներխուժել Աղթամար եւ կողոպտել այն, իսկ բանաստեղծ կաթողիկոս Գրիգորիս Ա Աղթամարցին (1512 - մոտ 1544) փախչում եւ մի քանի տարի աստանդական կյանք է վարում³:

¹ Այս մասին տե՛ս Գրիգոր վարդապետ Խլաթեցու ողբը (Ա. Մաթեոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 95, 153-154):

² Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 74-75:

³ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երեւան, 1972, էջ 43, 527:

Սակայն չնայած այս եւ բազում այլ փորձություններին՝ Աղթամարի կաթողիկոսությունը լիովին կատարում է իր եկեղեցական ու մշակութային դերը: Այստեղ ստեղծվել են հարյուրավոր ձեռագիր մատյաններ, որոնցից մի քանիսը եզակի նմուշներ են: Դրանց թվում է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի խնդրանքով 1303թ. Աղթամարում կատարված Թովմա Արծրունու Պատմության ընդօրինակությունը, որը պարունակում է այս գործի՝ մեզ հասած միակ ամբողջական բնագիրը (Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. թիվ 10451)¹: Հայտնի է նաեւ, որ Ռշտունյաց աշխարհում հայտնված աղանդավորներին սաստելու համար Աղթամարի Դավիթ Գ (1393-1433) կաթողիկոսը սբ. Գրիգոր Տաթևացուն պատվիրել է նրանց մոլորությունը բացահայտող հակաճառական երկ գրել: Գրական եւ ստեղծագործական շնորհով են օժտված եղել կաթողիկոսներից ոմանք, ինչպես Գրիգորիս Ա Մեծը (Գրիգորիս Աղթամարցի, այժմ ավելի շատ որպես բանաստեղծ ճանաչված), շատերն զբաղվել են գրչությամբ (ինչպես Ստեփանոս Դ Տղան) եւ այլն: Ոմանք շինարարական ձեռնարկներ են իրականացրել ոչ միայն Աղթամարում, այլեւ գավառներում ու այլ վանքերում: Օրինակ՝ 1305թ. Ջաքարիա Ա Սեֆեդիյան (1296 -1336) կաթողիկոսը Սբ. Խաչի մոտ կառուցել է ամառային եւ ձմեռային ժամատներ, որից հետո Լիմի վանահայր Հովհաննես եպիսկոպոսի գործակցությամբ հիմնովին վերաշինել տեղի Սբ. Գեւորգ եկեղեցին, կրոնավորների բնակատեղիները, նվիրել է կալվաքծներ: Կաթողիկոս Գրիգորիս Գ Փոքրը (1595-1605) 1602թ. Աղթամարում զգալի նորոգչական աշխատանքներ է կատարել եւ ձիթանք կառուցել²:

¹ ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 13:

² «Նորոգեաց զձըմրռան ժամատուն եւ զամառան եւ զՍ. Ստեփանոսի զլուխն սալեց եւ ձիթաղաց մի կորտէ շինեաց յարեւելից կուսէ՝ հանդէպ Կարմիր եկեղեցւոյն...» (Հայերեն ձեռագրերի ժե դարի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1974, էջ 61):

Աղթամարի մշակութային դերի մասին խոսելիս պետք է նշել, որ այն արդյունավոր է եղել ոչ միայն արտաքինապես, օրինակ՝ այստեղ գրված մատյանների մեծ թվով, այլև այստեղ ի հայտ եկած առաջադիմական միտումներով: Հատկանշական է, որ Վասպուրական աշխարհում եւ այս կողմերում գրված մատյանների մեջ հենց աղթամարյան ձեռագրերում առաջին անգամ վերածնվեցին Կիլիկիայի հայկական մանրանկարչության ավանդներն ու պատկերագրական որոշ ձևերը, որոնք ընկալվում էին ոչ միայն որպես զուտ արվեստի գործեր, այլև պետականության խորհրդանիշ երկրամասի եւ պետական մտածողության ժառանգություն¹:

Աղթամարի կաթողիկոսության վերելքի շրջանը կարելի է համարել 15-րդ դարի 60-80-ական թվականները, երբ Ջաքարիա Գ Աղթամարցին եւ նրա եղբորորդին՝ Ստեփանոս Դ-ն, այնքան զորություն ունեցան, որ կարճ ժամանակով գրավեցին Սբ. Էջմիածնի աթոռը՝ փաստորեն միավորելով երկու աթոռները (այդ մասին ավելի հանգամանորեն կնշվի հաջորդ ենթաբաժնում):

Հաջորդ դարերն Աղթամարի աթոռի համար եղել են համեմատաբար ավելի դժվար ժամանակներ, կաթողիկոսները երբեմն հալածական են դարձել: Նրանց մեծ մասը նվիրյալ հոգեւորականներ էին, աթոռի եւ հավատացյալ հոտի խնդիրներով մտահոգ, սակայն եղել են նաեւ իրենց կոչմանն անհամապատասխան անձեր, ինչպես Բաղդասար Բաղիշեցին (1735-1743), որն աթոռը դրել է ծանր պարտքերի տակ եւ որին հարկադրված աթոռանկ են արել²:

15-րդ դարից մինչեւ իր աթոռակալության ժամանակներն Աղթամարի եւ Էջմիածնի աթոռների հարաբերությունների մասին պատմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Սի-

¹ Այս մասին տե՛ս E. Vardanyan, *Un Mastoc' d'Ordination et de Sacre Royal du XVe siecle*, *Revue des ntudes Armeniennes*, Tome 29, Paris 2003-2004, p. 207-210.

² Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, էջ 127-128:

մեոն Ա Երեւանցին (1763-1780)՝ մասնավորապես ներկայացնելով 16-17-րդ դդ. երկու աթոռների միջեւ թեմական վիճակների եւ սահմանների շուրջ ծագած վեճերը¹:

Աղթամարում սրբալույս մեռնոյի օրհնությունը կատարվել է սբ. Թովմա առաքյալի Աջով, ինչպես այդ մասին նշված է Երեմիա Չելեպիի 17-րդ դարի քարտեզի բացատրագրում²:

Մինչեւ 18-րդ դարի վերջն Աղթամարի կաթողիկոսությունն ունեցել է 14 թեմ: Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում պաշտոնապես երկրի ողջ տարածքի հայ քրիստոնյաների լիազոր ներկայացուցիչ է ճանաչվել Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքը: Հետեւաբար, Աղթամարի կաթողիկոսությունը հայտնվել է այդ պատրիարքական աթոռի ենթակայության ներքո: Սակայն հարաբերությունները պահպանվել են նաեւ Սբ. Էջմիածնի հետ, որի գերակայությունն Աղթամարի կաթողիկոսությունը վերջնականապես ընդունել է 18-րդ դարի երկրորդ կեսին:


Աղթամարի կաթողիկոսական աթոռը լուծարվել է 1895 թվականին, երբ ուներ երկու թեմ՝ 302 գործող եկեղեցիներով եւ 58 վանքերով, որոնք այդ ժամանակ անցան Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությանը:

Աղթամարի կաթողիկոսների գավազանագիրքը ներկայացվում է գրքի վերջում:

¹ Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երեւան, 2003, էջ 127-135: Այն հատվածում, որտեղ Սիմեոն Երեւանցին նշում է Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի՝ Աղթամարի աթոռի նկատմամբ եղած բանադրանքը վերացնելու եւ օրհնության մասին ու խոսքը եզրափակում, «ինչպես պատմում է Թովման» բառերով, թարգմանիչը փակագծում ավելացրել է «(Արծրունի)» (էջ 129), մինչդեռ խոսքը Թովմա Մեծփեցու մասին է (այս մասին տե՛ս հաջորդ ենթաբաժնում):

² G. Ulohogian, *Un' Antica mappa dell' Armenia*, Ravenna, 2000, p. 119.

ՀԱՅՈՑ ՎԵՐՋԻՆ ԹԱԳՎՈՐԱԿԱՆ ՕԾՈՒՄ ԱՂԹԱՄԱՐՈՒՄ



«ԵՒ յԱՅՈՑԱՆ ՕԾԵՅԻՆ ԶՊԱՐՈՆ ՍԱՐԱՏ՝ ԹԱԳԱՒՈՐ,
ՈՍ ԱՆՆՆԵԱՅ ԻՐՈՅ ԳԱԳԱՅ, ՉԻ Ի ՎՊՈՒՅ ԱՆՏԻ
ԱՉԳԱ ՀԱՅՈՅ ՉԻՐ ՏԵԱՆԱՅ ԹԱԳԱՒՈՐ»:

1465թ. ՀՐԵՏԱՄԱՐԱՆՈՅ

Հայոց ավանդական արարողակարգով վերջին թագավորական օծումը տեղի է ունեցել Աղթամարում Կիլիկիայի Հայոց թագավորության անկումից ուղիղ 90 տարի անց: Հիշյալ իրադարձությունը պատմագրության մեջ դիտարկվել է զուտ պատմաքաղաքական տեսանկյունից, եւ քանի որ վերոհիշյալ օծմամբ թագավոր հռչակված Արծրունյաց տոհմի շառավիղ հանդիսացող Սմբատն իրական թագավորական իշխանություն չի ունեցել, այդ դեպքը, կարելի է ասել, իսպառ անտեսվել է: Մինչդեռ այդ իրադարձությունը պետականազուրկ հայության ընկճված ոգին բարձրացնելուն կոչված մի ուշագրավ ձեռնարկ էր: Այն նախաձեռնողները, իհարկե, այնքան միամիտ չէին, որ կարծեին, թե հնարավոր է մահմեդական աշխարհակալ տերությունների «կենտրոնում» իրական քրիստոնեական իշխանություն հռչակել: Բայց այնուամենայնիվ կատարեցին այդ քայլը, մեր կարծիքով, Հայոց անկախության վերականգնման հույսն արթուն պահելու նպատակով:

Բուն դեպքը ներկայացնելուց առաջ համառոտ անդրադառնանք 15-րդ դարի 40-60-ական թվականների իրավիճակին եւ Աղթամարի երկու նշանավոր կաթողիկոսների՝ Ջաքարիա Գ Աղթամարցուն (1434 – 1464) եւ Ստեփանոս Դ Տղային (1465 – 1489), որոնցից առաջինն այս ձեռնարկի ճարտարապետն էր, երկրորդը՝ իրականացողը: Վերելում արդեն նշեցինք, որ նրանք իրենց համարում էին Արծրունի, Գագիկ Արծրունու սերունդ եւ գործում էին որպես պարոն-տեր, այսինքն նաեւ աշխարհիկ իշ-

◀ Թագավորի օծում (ՄՄ, ձեռ. թիվ 5702, 212բ)

խանութիւն ունեցող: Պատահական չէ, որ նաեւ զինված թիկնազոր էին պահում եւ անհրաժեշտութեան դեպքում կռվի դիմում: Բնութագրական է 1459թ. տեղի ունեցած դեպքը, երբ քուրդ ցեղապետ Սեիդ Ալին ծովեզերքի հայկական գյուղերը թալանելուց հետո մտադրվում է երկու մեծ լաստով անցնել Աղթամար, բայց, ինչպես այդ ժամանակ գրված մի հիշատակարան է վկայում, Ջաքարիա կաթողիկոսը, անձամբ գլխավորելով աղթամարցիներին, նախահարձակ է լինում, գրավում լաստերը եւ խափանում քրդերի ներխուժումը. «Տէր Ջաքարիա կաթողիկոսն... իբրեւ քաջ զօրական եղեալ եւ արհացեալ ի շնորհացն Աստուծոյ եւ զօրութեամբ Սուրբ Խաչին, ելեալ գնաց ընդդէմ անօրինացն ի պատերազմ եւ առեալ զերկու փուռն (լաստ – Կ. Մ.) եւ կալեալ եբեր յԱղթամար, եւ փրկեցան քրիստոնէայքն ի յանօրինաց եւ անօթալից եղեալ գնացին ի տեղիս իւրեանց, եւ մնաց ի խաղաղութեան Աղթամար զօրութեամբ Սուրբ Խաչին եւ արհութեամբ Տէր Ջաքարիայի կաթողիկոսին»¹:

Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր կարակոյունլու թուրքմենների տիրապետության տակ, որոնց գլխավորում էր Ջհանշահ փաղիշահը (բուն իշխանությունը՝ 1436-1467թթ.): Նրա տիրապետության ժամանակաշրջանը բնութագրվում է արտաքին եւ ներքին բազմաթիվ պատերազմներով, որոնցից հիմնական տուժողը երկրի անպաշտպան հայ բնակչությունն էր: Սակայն հանգամանքների բերումով հենց այս շրջանում հայ եկեղեցական կյանքը մեծապես աշխուժանում է, որի խթանիչն է դառնում 1441թ. Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի՝ Սսից Աբ. Էջմիածին փոխադրումը: Այդ թվականին Էջմիածնում կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Վիրապեցին (1441-1443), որը թեեւ Խոր Վիրապ վանքի միաբան էր, բայց ծնունդով վասպուրականցի: Նրա կարճատեւ աթոռակալությունը նշանավորվում է բազմաթիվ դրական գործերով²,

¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 117:
² Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, «Էջմիածին», 1991, է-Ը, էջ 5-17:

որոնցից մեկն էլ Աղթամարի առաջին աթոռակալ Դավթի եւ ողջ աթոռի վրայից նախկինում դրված բանադրանքի վերացումն ու օրինությունն էր: Ինչպես դեպքերին ժամանակակից Թովմա Մեծփեցին է գրում. «Հայրապետն զՏեր Կիրակոս... արձակեաց զԱղթամար ի զուր եւ յանպատշաճ անիծիցն, զոր վասն փառամոլութեանն արարին կիլիկեցիքն...»¹, իսկ մեկ այլ հեղինակ ավելացնում է. «...Ախթամարցիք հնազանդեալ Սուրբ Աթոռոյն Էջմիածնայ՝ ընկալան օրհնութիւն ի Կիրակոսէ կաթողիկոսէն Հայոց²»: Սակայն երկամյա աթոռակալությունից հետո Կիրակոս Վիրապեցին իր դեմ լարված խարդավանքների պատճառով հրաժարվում է աթոռից եւ վանք քաշվում, իսկ նոր կաթողիկոս է դառնում այդ աթոռանկության կազմակերպիչներից մեկը՝ Գրիգոր Ջալալբեկյանց Մակվեցին (1443-1465):

Աղթամարի այդ ժամանակի կաթողիկոսը՝ Ջաքարիա Գ-ն, Կիրակոս Վիրապեցու հեռացումը դիտում է որպես բռնարարք եւ Գրիգոր Մակվեցու կաթողիկոսությունը համարում ոչ կանոնակարգ: Նա մտադրվում է Ջհանշահի հետ ունեցած իր լավ հարաբերություններն օգտագործել Էջմիածնի գործերին միջամտելու համար: Շուտով ներկայանում է պատեհ առիթը: 1461 թ., երբ Ջհանշահը հեռավոր արշավանքի էր մեկնել, Էջմիածնի եպիսկոպոսներից մեկը՝ Սարգիս անունով (հետագայում Սարգիս Բ կաթողիկոս, որին Մաղաքիա Օրմանյանը «Աջատար» մականունն է տվել), վանքից գողանում է Հայ Եկեղեցու գլխավոր սրբություններից մեկը՝ սբ. Գրիգոր Լուսավորչի Աջը, առանց որի անհնար էր կաթողիկոսական ձեռնադրությունը, եւ բերում Թավրիզ, որպեսզի Աջն ունենալով եւ փաղիշահին ընծաներ մատուցելով նրա արտոնմամբ դառնա Էջմիածնի կաթողիկոս: Այդ մասին իմանալով՝ Ջաքարիան կանխում է Սարգիսին,

¹ Թովմա Մեծփեցի, Պատմագրութիւն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 289:
² Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, էջ 606:



Եպիսկոպոսական ձեռնադրություն
(ՄՄ, ձեռ. թիվ 4997, 11բ)

մեկնում է Թավրիզ եւ առավել ճոխ ընծաներով դիմավորում հաղթական արշավանքից վերադարձող Ջհանշահին: Սարգսի նախաձեռնությունը ոչ միայն տապալվում է, այլեւ Ջհանշահն Աջը տալիս է Ջաքարիային եւ հրամայում աթոռակալել Էջմիածնում: Փաստորեն տեղի է ունենում Էջմիածնի եւ Աղթամարի աթոռների միավորում, ինչպես Ջաքարիան ինքն է գրում. «եւ բոլոր ազգս մի(ա)բանեցան եւ եղեն մի հաւտ եւ մի հովիւ»:

Դրանից մի քանի ամիս անց Ջաքարիան դիվանագիտական հմտությամբ կանխում է Ջհանշահի սարսափազու պատժիչ արշավանքը Բաղեշ, որով մեծ հռչակ է ձեռք բերում շրջանի թե՛ հայ եւ թե՛ մահմեդական բնակչության շրջանում: Հավանաբար այս աննախադեպ հաջողություններն են Ջաքարիայի մոտ համոզմունք ձեւավորում, որ հնարավոր է հայության համար ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ իշխանավոր ունենալ, թեկուզեւ նանամավիայդ կողմերում եղած

մահմեդական բազմաթիվ իշխանիկներին, որոնք բոլորն էլ ենթակա էին Ջհանշահին: Ջաքարիայի այս մտահղացման անուղղակի վկայությունն է Էջմիածնում գտնված ժամանակ 1461-ին նրա պատվիրած մի ծիսամատյանը՝ «Մաշտոց եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ թագաւորի օծման» (ՄՄ, ձեռ. թիվ 4997): Հայոց արքունական մատյանների ստեղծման ավանդույթներով ոսկեգօծ մանրանկարներով շքեղորեն հարդարված այս ձեռագրում պատկերված է նախ Ջաքարիան ինքը՝ որպես եպիսկոպոս ձեռնադրող կաթողիկոս (թերթ 11բ), այնուհետեւ մի տեսարան, որը ներկայացնում է թագավորի օծման արարողությունը: Ընդհանրապես Հայոց թագավորության անկումից հետո գրված մաշտոցներում թագավորի օծման կարգին վերաբերող հատվածը բացակայում է, իսկ այստեղ այն առկա է ոչ պատահականորեն: Հենց այս «Մաշտոցով» էր Ջաքարիան նախատեսում կատարել իր եղբորորդու՝ Սմբատի օծումը: Սակայն վերահաս մահվան պատճառով չկարողացավ այն իրականացնել՝ այդ գործը թողնելով Սմբատի եղբորը եւ իր հաջորդին՝ Ստեփանոս Դ կաթողիկոսին: Ուշագրավ է, որ այս մատյանի գրությունից ուղիղ 10 տարի անց Ստեփանոսն Աղթամարում պատվիրում է նույն Մաշտոցի մեկ այլ ընդօրինակությունը (ՄՄ, ձեռ. թիվ 5702), որտեղ արդեն համապատասխան մանրանկարներում որպես կաթողիկոս նկարել է տալիս իր պատկերը (կաթողիկոսական ձեռնադրության մանրանկարի տակ ուղղակիորեն գրված է. «զՏէր Ստեփաննոս կաթողիկոս», թերթ 70բ), իսկ թագավորի օծման տեսարանում՝ Սմբատի օծումն իր ձեռքով (թերթ 212բ): Սա այն դեպքերից է, երբ արվեստի ստեղծագործությունը պատմական փաստի արժեք է ստանում:

Ավելորդ չէ մի քանի բնութագրական մեջբերում կատարել այս մատյանների հիշատակարաններից: 1461 թվականի Մաշտոցում Ջաքարիայի մասին ասվում է. «ի բարի արմատոց շառաւիղ ընդրեալ շնորհաւքն Քրիստոսի, յազգէ թագաւորին

Գագկայ՝ Չայոց Մեծաց Տէր Ջաքարիայի կաթողիկոս եւ պատրիարք Վաղարշապատու մեծ քաղաքի...»: Հիշատակարանի վերջում Ստեփանոս գրիչը՝ նույն ինքը՝ ապագա Ստեփանոս Դ կաթողիկոսը, խնդրում է հիշել Ջաքարիային՝ «հանդերձ ծնաւղաւք եւ ամենայն թագազարմ նախնեաւքն եւ պայազատ իշխանաւքն»: Տասը տարի անց՝ 1471 թ., Ստեփանոսն արդեն նախորդ մատյանից ընդօրինակվող Մաշտոցի ստացողն է, իսկ գրիչը՝ նրա եղբայր Ներսես եպիսկոպոսը, որն ստացողի մասին գրում է. «ի բարի յարմատոց շառաւիղ ընտրեալ շնորհաւքն Քրիստոսի, յազգէ թագաւորին Գագկայ՝ Չայոց Մեծաց Տէր Ստեփանոս կաթողիկոս եւ պատրիարգ ամենայն հայկազեան արեղական սեռի եւ Աղթամարայ առաքելադիր սուրբ աթորոյ...», քիչ անց նաեւ ավելացնելով՝ «ի նոր թագաւորիս մեր պարոն Սմբատի...»:

Բայց մինչեւ Սմբատի թագադրությանն անդրադառնալը վերադառնանք Ջաքարիայի կյանքի վերջին տարիներին: Նրա դեմ էջմիածնում դավեր են նյութում Գրիգոր Մակվեցին, նրա աթոռակից Արիստակեսը, նրանց միացած Սարգիս եպիսկոպոսը (Աջատար), որին ժամանակ անց Գրիգորը նույնպես աթոռակից դարձրեց: Նրանք, օգտագործելով Ջհանշահի՝ նոր արշավանքի մեկնելու առիթը, վերջինիս Չասան Ալի անունով ավազակաբարո որդուն կաշառելով ու Ջաքարիա կաթողիկոսի հարստության մասին հրապուրիչ պատմություններով փորձում են նրան կորստի մատնել: Սակայն մինչ Չասան Ալին Վաղարշապատ կհասներ, Ջաքարիան, այդ մասին տեղեկանալով, 1462 թ. ձմռանն իր հետ վերցնելով Լուսավորչի Աջը եւ մի քանի այլ կարեւոր սրբություններ՝ գաղտնի հեռանում է էջմիածնից եւ անցնում Վասպուրական՝ Արգելանի վանք, ապա Վանի վրայով դեպի իր ապահով հանգրվանը՝ Աղթամար: Ժողովուրդը ճանապարհին ցնծությամբ է դիմավորում նրան՝ ամեն կողմից երկրպագության գալով Սուրբ Աջին: Վանից մինչեւ Ոստանի նավահանգիստ Ջաքարիային ուղեկցում են «ամենայն

ազատագունդ խօջայքն Վանայ՝ ձիօք եւ ձիաւորօք սպառազինեալք»:

Տարին չբոլորած՝ Ջաքարիան, Լուսավորչի Աջը թողնելով Աղթամարում, վերադառնում է էջմիածին եւ եւս երկու տարի այստեղ աթոռակալում: Այդ ընթացքում նա եպիսկոպոս է ձեռնադրում իր եղբորորդուն՝ Ստեփանոսին, եւ հավանաբար նաեւ նրան հայտարարում է իր հաջորդը: Սակայն ի վերջո Ջաքարիայի թշնամիները, ծայրահեղ քայլի դիմելով, հասնում են իրենց նպատակին. 1464թ. թունավորելով սպանում են նրան, ինչպես ժամանակակիցն է գրում. «Տէր Ջաքարիա կաթողիկոսն էառ զէջմիածինն եւ երկու տարի ի տեղն նստաւ եւ դեղակուր եղել ի նոցանէ»¹:

Քանի որ այս շրջանի պատմությունը որեւէ պատմիչ չի շարադրել, եւ ժամանակի հիշատակարանների վկայություններն են միակ աղբյուրը, դժվար է ստույգ ասել, թե ինչ կերպ եւ հաջորդականությամբ են

¹ Տե՛ս Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 94:



Թագավորի օծում
(ՄՄ, ձեռ. թիվ 4997, 112բ)

զարգացել իրադարձությունները¹: Համենայն դեպս հայտնի է, որ Գրիգոր Մակվեցին էլ մահացել է 1465-ին, եւ նրան փոխարինել է առաջին աթոռակիցը՝ Արիստակեսը:

Սակայն Ստեփանոսն էլ մի կողմ քաշվելու պատճառ չուներ, քանի որ իր հորեղբոր նման վայելում էր Ջիանշահի հովանավորությունը: 1465թ. նա էջմիածնից գալիս է Աղթամար եւ այստեղ կաթողիկոս ձեռնադրվում (քանի որ այստեղ էր Աջը): Դեպքին ժամանակակից հիշատակագիրը գրում է. «Եւ ապա եկն յԱղթամար Տէր Ստեփանոս արհիեպիսկոպոսն եւ ամենեքին ծովեզերեայք ժողովեցան եւ ձեռնադրեցին զՏէր Ստեփանոս կաթողիկոս Ամենայն Հայոց, բազում եպիսկոպոսօք, կրօնաւորօք, քահանայիւք եւ ժողովրդեամբք»²:

Ստեփանոսը պահը հարմար է նկատում նաեւ Ջաքարիայի պատգամը կատարելու եւ Սմբատին թագավոր օծելու համար, եւ հենց նույն ժամանակ այդ բազմահավաք ժողովում էլ տեղի է ունենում Սմբատի թագադրությունը, որի մասին նույն հիշատակագիրը հայտնում է. «Եւ յայնժամ օծեցին զպարոն Սմբատ՝ թագաւոր, ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր»³:

Նույն 1465 թվականին Սմբատը մի ճառընտիր է ստացել, որի հիշատակարանում

¹ Մաղաքիա Օրմանյանը նույնպես, աղբյուրների պակասը զգալով, այս շրջանի մասին գրում է հաճախ ենթադրությունների վրա հիմնվելով, որոնք միշտ չէ, որ փաստարկված են: Մասնավորապես նա կարծում է, որ Ջաքարիան, երկրորդ անգամ էջմիածին գալով, ինչպես նաեւ Ստեփանոսը 1466-ին էջմիածին գնալով, իրենց հետ բերել են Աջը (առանց դրա չէին կարող գալ) (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2527, 2535): Մինչդեռ եւ Ջաքարիան, եւ Ստեփանոսն Աջը թողել են Աղթամարում, որտեղ այն ավելի ապահով էր, եւ այդ պատճառաբանությունը պիտի ընդունվեր էջմիածնում, քանի որ նրանց ժամանակ երկու աթոռները միացած էին: Պատահական չէ, որ Ստեփանոսը կաթողիկոս ձեռնադրվելու համար գալիս է Աղթամար, քանի որ այդտեղ էր Աջը: Որ այն 1462-ին Ջաքարիայի ձեռամբ Աղթամար բերվելուց հետո կղզուց դուրս չի բերվել մինչեւ էջմիածնի Հովհաննես է Աջակիր (1474-1484) կաթողիկոսի ժամանակը, երբեւն է նաեւ Առաքել Դավրիժեցու պատմությունից (Առաքել Դավրիժեցի, էջ 328-335):

² Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 111, հմմտ. Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 239:

³ Նույն տեղում:

կարդում ենք. «Ողորմած Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ամենայն հաւատա-
ցեալ քրիստոնէից, եւս առաւել ստացողի սուրբ գրոցս Սըմբատ թագաւորին եւ ծնո-
ղաց նորին՝ պարոն Գուռջիբեկին եւ Դունեա Խաթունին եւ հաւրեղբաւրն Տէր Ջաքա-
րիա կաթողիկոսին եւ կենակցին (Սմբատայ – Կ. Մ.)՝ Բեկի Խաթունին...»¹: Սմբատին
որպես թագավոր հիշատակում են այդ ժամանակաշրջանի վասպուրականյան մի
շարք գրիչներ²:

Հայ պատմաբանները սովորաբար հեզնական արտահայտություններ են օգտա-
գործում Սմբատի թագադրությունը հիշատակելիս՝ չնկատելով, որ այս օծումը ոչ այն-
քան իրավաքաղաքական ակտ էր, որքան թագավորական օծման ծիսական ավան-
դույթի պահպանմանը կոչված, քարոզչական եւ հոգեբանական նշանակությամբ մե-
կանգանյա ձեռնարկ, ինչը երբեւն է նաեւ դեպքին ժամանակակից հիշատակագրի
մեկնաբանությունից. «զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր»: Հատ-
կանշական է, որ Սմբատը չի կոչվում «թագաւոր Հայոց» կամ Վասպուրականի թագա-
վոր, այլ պարզապես թագավոր՝ թագ կրող մարդ: Պատահական չէ նաեւ, որ ոչ ոքի
մտքով չանցավ Սմբատից հետո թագավոր օծել նրա որդուն:

Զգիտենք, թե որպես տիտղոսակիր թագավոր՝ Սմբատն ինչ է արել (տվյալ դեպքում
կարելու էլ չէ. կարող էր առանձնապես ոչինչ չանել), բայց հայտնի է, որ երկու որդի է
ունեցել՝ Իսկենդեր եւ Ջաքարիա անուններով: Ջաքարիան դարձավ Ստեփանոս Դ-ին
հաջորդող կաթողիկոսը, իսկ Իսկենդերի որդիներից մեկը՝ Աղթամարի կաթողիկոսութ-
յան ամենապայծառ դեմքերից՝ Գրիգորիս Ա Մեծ կաթողիկոսը՝ շնորհալի Գրիգորիս
Աղթամարցին, որի գրական վաստակը ներկայացնելուց առաջ կենսագիրները նշում

¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 238:

² Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 113-114, Ժե դարի հայերեն ձեռագրերի
հիշատակարաններ, մասն Բ, էջ 237-239, 240, 249, 250, 309:



Ստեփանոս Գ կաթողիկոս
(ՄՄ, ձեռ. թիվ 5702,

են, որ «նա սերուն է Արծրունյաց թագավորական տոհմից, Սմբատ թագավորի թոռն է...»¹:

Ստեփանոս Գ-ի մասին խոսքն ամփոփելով՝ նշենք, որ 1466-ին նա որպես կաթողիկոս վերադառնում է Էջմիածին, իր Ջաքարիա հորեղբոր պես միավորում երկու աթոռները, սակայն հաջորդ տարի (1467) մահանում է Ջհանշահը՝ նրա հովանավորը, երկրում սկսվում է խառը վիճակ, եւ Ստեփանոսը վերադառնում է Աղթամար: Դրանով ավարտվում է աղթամարցիների՝ Էջմիածնի աթոռի նկատմամբ հավակնությունների ժամանակը, որը նաեւ Աղթամարի կաթողիկոսության առավելագույն վերելքի շրջանը պետք է համարել²: Այն բնութագրվում է երկու ազգակից կաթողիկոսների՝ Ջաքարիայի եւ Ստեփանոսի ընդարձակ գործունեությամբ, համարձակ քայլերով, դիվանագիտական ճկու-

¹ Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, աշխատասիրությամբ Մ. Ավդալբեգյանի, Երեւան, 1984, էջ 5: Այս նույն տոհմից սերող Գրիգորիս Գ Փոքր կաթողիկոսը 1603թ. մի հիշատակարանում կոչվում է «թագաւորագն» (Հայերեն ձեռագրերի ժե դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 112):
² Այդ ժամանակ Աղթամարը նաեւ տնտեսական վերելք է ապրել: Հայտնի է, օրինակ, որ 1463թ. Աղթամարի կաթողիկոսությունը 1000 թանկա վճարելով մի նոր գյուղ է գնել (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ, էջ 244, 261):

նությամբ եւ երկրի մահմեդական բռնակալների հետ լեզու գտնելու կարողությամբ: Նրանց հաջողություններն այս ասպարեզում, թեկուզ միայն Էջմիածնի աթոռին տիրելու փաստը նկատի ունենալով, անուրանալի են (այլ հարց է, որ այն չէր կարող վերջնական հաջողությամբ պսակվել, քանի որ բազմաթիվ էին խոչընդոտող հանգամանքները): Իսկ ինչ վերաբերում է 1465թ. Սմբատի թագավորական օժանդ, ապա այն պետք է դիտարկել միայն Աղթամարի այս երկու զորեղ հայրապետերի գործունեության համատեքստում: Դա մեր պատմության ուշագրավ դրվագներից է, որը վկայում է կորսված պետականությունը վերականգնելու հայ ժողովրդի անկասելի ձգտման մասին, ինչը պիտի իրականություն դառնար միայն դարեր անց:





«ԱՐՄԵՆԻԿ» ՔԱՂԱՔԸ

Մինչև այժմ մենք Աղթամարի մասին վկայաբերել ենք հայկական աղբյուրների տեղեկությունները, սակայն, բարեբախտաբար, պահպանվել են նաև Աղթամարի հայկական բնակավայրը հիշատակող 15-16-րդ դարի օտարազգի հեղինակների վկայություններ, մասնավորապես իտալացի մի քանի դեսպանների ու ճանապարհորդների ուղեգրություններ, որոնցից մեկում Աղթամարի ավան-քաղաքը կոչվում է Արմենիկ անունով:

Արմենիկի հիշատակման առիթ է դարձել հատկապես այն պատմությունը, ըստ որի Իրանի Սեֆյան հարստության հիմնադիր Իսմայիլը պատանի հասակում, երբ հորը սպանեցին, եւ նա մազապուրծ հալածական էր, չորս տարի ապաստանել է Աղթամարում՝ մի հայ քահանայի տանը:

Վենետիկի հանրապետության՝ աղկոյունլու տիրակալ Ուզուն Չասանի մոտ մեկնած դեսպաններից Կատերինո Ջենոն 1471-1474թթ. իր ճամփորդությունը նկարագրելիս Իսմայիլի մասին ասում է, որ նա փախել է «Աղթամարի (Attamar) լճում մի կղզի՝ բնակեցված հայ քրիստոնյաներով եւ կոչված Աստվածամոր անունով, ուր նա մնաց չորս տարի՝ թաքնված մի հայ քահանայի տանը, որի (Իսմայիլի - Կ. Ս.) մասին ոչինչ չգիտեին Պարսկաստանում»²:

¹ Իսմայիլի Աղթամարում ապաստանելու վերաբերյալ տեղեկություն կա նաև հայկական մի ժամանակագրության մեջ (Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Չակոբյան, Երեւան, 1956, էջ 427):

² Չ. Չակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երեւան, 1932, էջ 273 (իրատարակել է անգլիական Hakluyt ընկերությունը 1873-ին Travels of Venetians in Persia վերնագրով):

Մեկ այլ վեներտիկցի դեսպան՝ Ջիովան Մարիա Անջիոլելլո անունով, 15-րդ դարի վերջին նույն դեպքին անդրադառնալով, նշում է, որ Աղթամարում ապաստանել են Իսմայիլն ու իր երկու եղբայրները. «...պահեցին նրանց Աղթամարի (Astumar) լճի մի կղզում, ուր բնակվում են հայ քրիստոնյաներ: Այստեղ կա ավելի քան վեց հարյուր տուն եւ Սուրբ Խաչ անունով մի եկեղեցի, կա ավելի քան հարյուր վանական, որոնց կառավարում է մի պատրիարք»¹:


Իսկ վեներտիկցի մի վաճառական, որի անունը չի պահպանվել, բայց որի ուղեգրությունները՝ «Մի վաճառականի ճամփորդությունը Պարսկաստանում» վերնագրով, եվրոպայում հրատարակվել է դեռեւս 16-րդ դարի կեսերին, 1511-1520թթ. ժամանակամիջոցում այցելել է Աղթամար եւ հետեւյալ ուշագրավ նկարագրությունն է թողել:

«Դատվանի եւ Ոստանի միջեւ մի մեծ կղզի կա ծովում, ցամաքից երկու մղոն հեռու, ամբողջովին կարծր ժայռից, որի վրա կա մի փոքրիկ քաղաք՝ երկու մղոն շրջագծով. քաղաքն ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այս քաղաքը կոչվում է Արմենիկ (Arminig), շատ բազմամարդ է, եւ միայն հայ քրիստոնյաներ են բնակվում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի: Քաղաքն ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար, որոնցից Սբ. Յովհաննեսն ամենամեծն է եւ ունի մի զանգակատուն՝ շինված աշտարակի նման, այնքան բարձր, որ նայում է ամբողջ քաղաքի վրա, եւ զանգակների մեջ կա մեկը, որն այնքան մեծ է, որ երբ հնչում է, ձայնը լսվում է ցամաքի ամեն կողմից»²:

Շարունակելով խոսքը՝ վաճառականը տալիս է կղզու հանդիպակաց ափի նկարագրությունը, որը նույնպես հետաքրքրական է. «Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց՝ հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիս-

¹ Նույն տեղում, էջ 271:

² Նույն տեղում, էջ 300-301:




տոնյաներով, կան շատ մշակված հողեր ու գեղեցիկ պարտեզներ՝ ծառերով, որոնք տալիս են ամեն տեսակի պտուղ: Այս շրջանը հաճելի եւ առողջ կլիմա ունի, եւ շուրջը կան լեռներ՝ այնքան բարձր, որ թվում է, թե դիպչում են երկնքին...»¹:

Իր ուղեգրության հաջորդ բաժիններից մեկում հեղինակը պատմում է Իսմայիլի՝ Աղթամարում ապաստանելու մասին՝ գրելով. «(Շեյխ Յայդարի որդիները փախան, որոնցից երրորդը եկավ) մի կղզի, որ, ինչպես հիշատակել են նախապես, գտնվում է Վանի կամ Ոստանի լճում եւ իր մեջ ունի հայ քրիստոնյաների մի քաղաք: Այստեղ նա՝ Իսմայիլ անունով, որ 13 կամ 14 տարեկան մի ազնիվ պատանի էր, չորս տարի մնաց մի քահանայի տանը, որը մի քիչ ծանոթ էր աստղագիտությանը, որի միջոցով իմացավ, թե Իսմայիլը մի օր մեծ իշխան պիտի դառնա: Այդ պատճառով նա հատկապես բարի եւ ուշադիր էր նրա հանդեպ, նաեւ նրան դաստիարակում էր մեր սուրբ հավատքով եւ Աստվածաշնչով՝ ցույց տալով նրան մահմեդական կրոնի ունայնությունն ու դատարկությունը: Չորս տարի հետո Իսմայիլը վճռեց հեռանալ Արմենիկից եւ գնաց Գիլան...»²:

Այս հիշատակությունները հաստատում են հայկական աղբյուրների վկայությունները Աղթամարի միատարր հայ բնակչության մասին, միաժամանակ պարունակում որոշ

¹ Նույն տեղում, էջ 301:

² Նույն տեղում, էջ 317: Արմենիկի մասին տե՛ս նաեւ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ, էջ 243, 309, 653:



ուշագրավ մանրամասներ: Դրանցից է քաղաքի «Արմենիկ» անունը՝ որպես «Չայաքաղաք», որը թերևս միայն օտարագրիներն են օգտագործել, ընդ որում հավանաբար ոչ միայն քրիստոնյաները, այլև մահմեդականները: Չետաքրքրական է նաև կղզու՝ Սուրբ Աստվածածնի անունով հիշատակումը, որը կամ կղզու հարավարևելյան կողմում գտնվող Սբ. Աստվածածին փոքր եկեղեցու անունից է՝ կամ արձագանքն է Աղթամարի ունեցած սրբազան, «աստվածապահ» վայրի հռչակի²:

Ջիվան Մարիա Անջիոլելլոյի վկայությունը, որն աչքի է ընկնում ճշգրտությամբ, Սբ. Խաչ եկեղեցու եւ վանականների ղեկավար պատրիարքի հիշատակությամբ, կարելու է կղզում հայ բնակչության թվի մասին նշումով՝ 600 տուն, որը նշանակում է մի քանի հազար մարդու առկայություն: Չայկական աղբյուրները քաղաքի բնակչության թիվը չեն նշում,

¹ 1307թ. պարոն Նեքնեք անունով մեկն Ավետարան է նվիրել «Աստուածածնին Աղթամարա» եւ դրա դիմաց տեղի հոգեւորականներից չորս պատարագ ստացել՝ «...սպասաւորք Սուրբ Աստուածածնին յանձն առին յամեն տարի Դ (4) ար... պատարագել զՔրիստոս» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 48):

² Աղթամարյան ձեռագրերի հիշատակարաններում այն կոչվում է «Աստվածաբնակ կղզի», «Աստվածապահ կղզի», «Յանառիկ եւ Տիրախնամ կղզի» եւ այլն (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 20, 23, 45, 57, 92, 101, 127, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 63, 64, 74, 153, 191, 202, 211, 243-245, 284):

◀ Բնակելի տների հետքեր
Սուրբ Խաչի հարավ-արեւմտյան կողմում

սակայն դրանցում նույնպես կան ուշագրավ տվյալներ: Օրինակ՝ բնակչության կազմի մասին հպանցիկ տեղեկություններ կարելի է գտնել ձեռագրերի հիշատակարաններում: Այստեղ որպես ձեռագրերի ստացող հիշվում են մի շարք արհեստավորներ՝ Թումա եւ Պողոս հյուսները՝ 1471 եւ 1492 թվականներին (Մաշտոց, ՄՄ, ձեռ. թիվ 4775, Մաշտոց, ՄՄ, ձեռ. թիվ 4201), Մուրատշահ ոսկերիչը՝ 1490թ. (Ավետարան, ՄՄ, ձեռ. թիվ 7585), Գուլազիզ դարբինը՝ 1691թ. (Ավետարան, ՄՄ, ձեռ. թիվ 8888) եւ այլն: Էլ չենք ասում գրչության արվեստի հետ կապված բազմաթիվ մարդկանց մասին (գրիչ, մանրանկարիչ, կազմարար, մագաղաթ եւ թուղթ պատրաստող, կոկող եւ այլն): Վեներտիկցու նշած հոգեւորականների թիվը՝ 100, նույնպես չափազանցություն չէ՝ նկատի ունենալով Աղթամարի կաթողիկոսության գործունեության լայն շրջանակը, ինչպես նաեւ այստեղ գրչության խոշոր կենտրոնի առկայությունը, որտեղ գրչությամբ զբաղվողները հիմնականում հոգեւորականներ էին (նրանցից առավել հմուտները, որպես կանոն, աշակերտներ ունեին)¹: Տեղին է նշել, որ ոչ միայն Աղթամարը, այլեւ Վանա լճի մյուս մեծ կղզիները՝ Լիմը եւ Կտուցը, մեծաթիվ վանականություն ունեցող վանք-անապատներ էին, ուր հավաքված բազմաթիվ հոգեւորականներն իրենց համեմատաբար ապահով էին զգում, քանի որ լճում նավարկությունը գլխավորապես հայերի ձեռքում էր գտնվում:

Աղթամարի բնակչության առնչությամբ պետք է ավելացնել, որ այն նաեւ հալածված կամ այլեւայլ պատճառներով այստեղ ապաստանած մարդկանց կացարան էր:

¹ Հիշատակարաններից մեկում հետաքրքրական տեղեկություն է պահպանվել Աղթամարի վանքում կանավորաբար ծառայող մի խումբ մարդկանց մասին: Գրիչ Ջաքարիա Աղթամարցին 1371թ. խնդրում է հիշել. «...զմեր ընկերակիցքս՝ զԳրիգոր եւ զՍտեփանոս, զԹումայ եւ զԱստուածատուր, զԿոստանդ եւ զԻսաչիկ, զԱւետիս եւ զՏիրացու...: Արդ, սոքա զոր յիշեցաք, որ կան ի դուռն Սուրբ Խաչիս, են անմխիթար եւ անազնական յամենայն կողմանց, ո՛չ ժողովրդանէ առնուն եւ ո՛չ յայլոց, այլ դեռեւս զիրեանցն այլոց տան, եւ բազում աշխատանաք եւ չարչարանաք զհարկաւոր կերակրիկն պատրաստեն եւ են հնազանդեալ Քրիստոսի քաղցր լծոյն...» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 495-496):



Նրանցից էին, օրինակ, Թամար Մոկացին, նրա ամուսինն ու զավակները, որոնք, մի ժանտ քրդի հետապնդումից խուսափելով, Աղթամարում պատսպարվեցին 4-5 տարի¹: Իսկ 1460թ. Ստեփանոս հոգեւոր անունն ընդունած Ղարիպշահ մուղղուսին երախտագիտությանբ հիշում է Մինաս նկարչին եւ Աղթամարում ապրող մի ընտանիքի անդամներին, որոնք 4 տարի խնամել են իրեն²:

Աղթամար քաղաքի բնակչությունը հավանաբար նոսրացել է 17-18-րդ դարերում: Հայտնի է, որ մինչեւ Խաչատուր Մոկացի (մոտ 1844 – 1851) կաթողիկոսի ժամանակները կղզում դեռեւս եղել են «տունք աշխարհականաց սակաւք», որոնց այս կաթողիկոսը հեռացրել է եւ տեղափոխել Գավաշ գավառի գյուղերը³:

¹ Թամարն ու ամուսինը, մի անգամ անզգուշաբար թողնելով կղզին, գալիս են Ոստան, ուր տեղի մահմեդականները սադրանք հրահրելով եւ կեղծ մեղադրանքներով ձերբակալում, «դատում» եւ մահվան (քարկոծման) են դատապարտում Թամարին (1398թ.): Նրա վարքը շարադրել եւ Հայսմավուրքի մեջ է մուծել Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 159-162):

² «Աղաչէմ յիշել ի Տէր զսանահայրն մեր զԳուլով Կարապետն եւ զկենակիցն իւր զԳօհար-Սէլիք եւ զԲ (2) բարի գաւակ որդիքն՝ զՅովանէս եւ զԱլիամ, յիշեցէք եւ «Աստուած ողորմի» ասացէք, որ Դ (4) տարի նախախնամեաց մեզ յաստուածապահ կղզիս Աղթամար» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 137):

³ Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 277:

ԱՂԹԱՄԱՐԻ ՉԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Գրեցաւ... ի դառն եւ ի տարտարոս ժամանակի,
ի գեղեցիկ եւ յամուր կղզիս Աղթամար կոչեցեալ...»:

Դատարկ գրքի 1316թ. շրջանակապատճառ

Աղթամարի Աբ. Խաչ վանքը մեծ եւ ուրույն դեր է ունեցել հայ գրչության եւ մանրանկարչության արվեստների զարգացման գործում: Դարեր շարունակ վանքի աղոթասեր միաբաններն այստեղ ընդօրինակել են գրչագրեր եւ ծաղկել դրանք երփներանգ գույներով, մագաղաթ ու թուղթ կոկել, թանաք պատրաստել, զբաղվել կազմարարությամբ եւ այլն: Չեռագիր ստեղծելը մի բարդ գործընթաց էր, որին մասնակցում էին մի քանի գիտությունների, արվեստների ու արհեստների տիրապետող անձինք: Չեռագրի գրիչը պետք է նախ գեղեցիկ ու անսխալ գրել իմանար, ապա քաջատեղյակ լիներ ընդօրինակվելիք ձեռագրի բովանդակությանը՝ իմաստային սխալներ թույլ չտալու համար: Ուստի անհրաժեշտ էր, որ նա բանիմաց վարդապետների մոտ ուսանած լիներ: Աղթամարում մենք հանդիպում ենք հենց այդպիսի կանոնավոր ավանդներ ունեցող գրչության դպրոցի: Հատկապես 14-15-րդ դարերում այստեղ ձեռագրաստեղծման գործը շարունակական մի շղթա է կազմում, ուր գրչության արվեստը փոխանցվում է սերնդեսերունդ, վարդապետից աշակերտին, հանդես են գալիս գրիչների տոհմեր:

Գրչության արվեստին զուգահեռ զարգացել է նաեւ մանրանկարչության արվեստը: Երբեմն ձեռագրի գրիչն ու մանրանկարիչը նույն անձն է, երբեմն տարբեր անձինք են: Աղթամարյան մի քանի գրիչներ նաեւ ծաղկողներ են եղել՝ Ջաքարիա Աղթամարցին (14-րդ դ.), նրա եղբորորդի Դանիել քահանան, Գրիգոր քահանան, Թումա Մինասենցը, Կարապետ քահանան (15-րդ դ.) եւ ուրիշներ: Նրանք նկարզարդել են ոչ միայն իրենց,

◀ Դանիել քահանա, գրչության նմուշ,
ՄՄ, ձեռ. թիվ 5543, 14ա

այլեւ այլոց ընդօրինակությունները: Մանրանկարչության առումով Աղթամարը գրեթե չի տարբերվում Վասպուրականի մյուս դպրոցներից: Տերունական նկարները որպես կանոն զբաղեցնում են ձեռագրերի առաջին թերթերը: Պատկերագրության մեջ առկա են հնավանդ եւ ավանդական ձևեր, իսկ ոճին բնորոշ է ժողովրդական արվեստին հատուկ պարզությունը: Հիմնական արտահայտչամիջոցը գիծն է, որ կենդանություն է առնում վառ գույների համադրությունից: Ցայտուն արտահայտված են հատկապես դիմագծերը: Այնուհանդերձ 15-րդ դարից սկսած՝ մանրանկարչության արվեստն այստեղ ավելի է կատարելագործվում եւ դուրս գալիս ժողովրդական արվեստին բնորոշ պարզությունից: Պատկերները դառնում են ավելի մանրակրկիտ եւ նուրբ, գույները, որոնք նախկինում հիմնականում չորսն էին՝ կարմիրը, կապույտը, դեղինը, կանաչը, արդեն հարստանում են նոր երանգներով: Մանրանկարները սովորաբար ունեն պարզ պատմողական բնույթ, երբեմն ուղեկցվում են բացատրական գրություններով, որով ընթերցողին է փոխանցվում Ավետարանական դրվագն իր իմաստային ողջ խորությամբ: Ավետարանական թեմատիկ պատկերներն իրենց վրա կրում են նաեւ այլաբանական, պարականոն պատումների կնիքը:

Ձեռագրաստեղծման գործում անչափ կարեւոր էին թուղթ կամ մագաղաթ կոկողը՝ պատրաստողը, թանաք, ներկեր, գրելու գործիքներ պատրաստողները եւ ի վերջո ձեռագիրը կազմողը: Նրանք անպայման պետք է լինեին հմուտ մասնագետներ, այլապես ձեռագիրը շուտ կվնասվեր: Ուստիեւ գրիչները երախտագիտությամբ են հիշում կոկողներին, կազմողներին եւ առհասարակ իրենց օգնողներին: Չաքարիա Աղթամարցի գրիչն իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում երբեմն նշում է եղբորը՝ Հովհաննեսին, ով թուղթ էր կոկում. «զՅովհաննես, որ աշխատեցաւ ի կոկել թղթիս», 1390թ. գրչագրում՝ կազմողին. «ՁՍարգիս քահանայն, որ կապելոյն աւգնեաց եւ

աշխատեցաւ յիշեցէք ի Քրիստոս...»¹: Գրիգոր գրիչը 1355թ. իր մատյանում ընթերցողներին եւ վայելողներին խնդրում է «յիշել առ Քրիստոս... զձեռնասուն պատանեակս զՏաւնապետ, զի եւ սա բազում աշխատեցաւ ի կոկելն եւ ի սպասաւորելն»²: Գրիչ եւ մանրանկարիչ Թումա Մինասենցի աշակերտները՝ հետագայում հայտնի գրիչներ Հայրապետն ու Ներսեսը, նախ իրենց ուսուցչին օգնում էին ձեռագրերի թղթերը կոկելով. վարդապետը նրանց սիրով հիշում է «...նորաբողբոջ քըւերորդոյն իմոյ Հայրապետ կրանաւորի, որ աւգնական եւ ձեռննտու եղել սմա՝ կոկելով զնիւթ թղթիս», «...զՆերսէս սարկաւազն զսիրասնունդ աշակերտն իմ, որ աւգնական եղել ինձ՝ կոկելով զնիւթ սորա»³: Աղթամարում գրված ձեռագրերի նյութը հիմնականում թուղթն է, մի քանի դեպքերում են հանդիպում մագաղաթ, գիրը բոլորգիրն է՝ համաչափ ու գեղեցիկ:

Ձեռագիրը գրելիս կարեւոր էր նաեւ լավ եւ արժեքավոր գաղափար օրինակ ունենալը: Դանիել կրոնավորը 1309թ. ընդօրինակում է Պողոս առաքյալի թղթերը «ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ»⁴: Թումա քահանան 1499թ. ընդօրինակում է Մաշտոց «ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ, զոր սրբագրեաց եւ փարթամացոց հեռետորն Գրիգոր վարդապետն քաջն եւ արին»⁵:

Աղթամարի գրչության կենտրոնը հատկապես 14-15-րդ դդ. մեծ հռչակ է վայելել եւ այստեղ ձեռագրեր են պատվիրել ոչ միայն մոտակա գավառներում, այլեւ հեռավոր բնակավայրերում ապրողները: Ձեռագրերի պատվիրատուները հիմնականում հոգեւորականներ են, տանուտերեր, արհեստավորներ, հասարակ ժողովրդի ներկայացու-

¹ Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 554, 582:

² Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 414:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Ա, էջ 377, 584:

⁴ Ցուցակ հայերեն ձեռագրաց Աբ. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմ. Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, թիւ 3:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Գ, էջ 284-285:

ցիչներ: Դանիել գրչի՝ 1303 եւ 1306թթ. գրչագրերի պատվիրատուն Աղթամարի Ջաքարիա Ա կաթողիկոսն է, ուն գրիչն անվանում է «աստուածապատիւ եւ երջանիկ, երիցս երանեալ, ամենիմաստ հայրապետ... որ է յոյժ բարի եւ առատամիտ եւ աղքատասէր եւ աստուածային ձրիւքն բարգաւաճեալ»¹: 1378թ. Կարապետ գրչից Գրիգոր Նարեկացու Աղթագիրքն է պատվիրում Թումա կրոնավորը: 1460թ. Յակոբ գրչի ընդօրինակած եւ Կարապետ քահանայի ծաղկած Ավետարանի ստացողը մի բարեպաշտ կին է՝ Խոնձա խաթունը, ով, ստանալով ձեռագիրը, այն նվիրում է Արբերդի Սբ. Աստվածածին վանքին: 1492թ. Յայրապետ աբեղայի եւ Կարապետ քահանայի ընդօրինակած ու ծաղկած Մաշտոցի պատվիրատուն Պողոս հյուսնն է: Աղթամարյան ձեռագրերի մի մասը նախատեսված է եղել վանքի օգտագործման համար, ինչպես Թումա Մինասեցի 1445թ. ընդօրինակած Գանձարանը, իսկ մի զգալի մասն ունեցել է ստացողներ եւ նախատեսված եղել այլ եկեղեցիների կամ բարեպաշտ մարդկանց համար:

Յաճախ ստացողները դիմել են միջնորդի օգնությանը՝ բաղձալի ձեռագիրը ստանալու համար: Ուստի հիշատակարաններում հաճախ ենք հանդիպում երախտագիտական արտահայտություններ գրչի եւ ստացողի փոխհարաբերությունները կարգավորող, երկուսին էլ աջակցող միջնորդների մասին²: Քանի որ Աղթամարն ուներ գրչության կենտրոնի մեծ համբավ, ապա շատերն էին փափագում ստանալ ձեռագիր գրված այս կենտրոնում եւ դիմել են միջնորդների օգնությանը: Ստանալով ձեռագիրը՝ պատվիրատուներն այն կամ պահել են իրենց, կամ նվիրաբերել որեւէ եկեղեցու՝ բարի հիշատակ թողնելով: Դանիել քահանա գրիչը 1441թ. Սկրտիչի համար ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրում է. «ՁՅովանէս միջնորդ սուրբ Աւետարանիս յի-

¹ Տե՛ս Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 13:

² Տե՛ս Կ. Մաթեոսյան, Գրչի եւ ստացողի միջնորդը, Պատմաբանասիրական հանդես, 1990, թիվ 4, էջ 121-131:


շեցեք»¹: Թումա քահանա գրիչը 1476թ. Ծերենց Սաղադեի պատվերով գրում է ձեռագիր եւ հիշատակում միջնորդին՝ «զտէր Յովսէփն Շիրինեցն, որ յորդորիչ եւ միջնորդ եղել սուրբ Աւետարանիս»²: Նույն գրիչը 1499թ. ընդօրինակում է Մաշտոց Խանոշ խաթունի պատվերով, ով էլ այն նվիրում է Բատկանց գյուղի եկեղեցուն: Հիշատակարանում կարդում ենք միջնորդների անունները. «զաստուածասէր տանուտէրքն՝ զըռէս Խաչատուրն, եւ զՍտեփանոսն, եւ զմիւս Ստեփանոսն Բքոցն, եւ զորդին զԿարապետն, որ յորդորիչ եւ միջնորդ եղեն սուրբ գրոցս...»³: Նման օրինակները շատ են:

Ստորեւ մենք կփորձենք համառոտ ներկայացնել Աղթամարի գրչության կենտրոնի պատմությունը՝ ըստ գրիչների եւ մեզ հայտնի ձեռագրերի:

¹ Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Ա, էջ 525:

² Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Բ, էջ 407:

³ Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Գ, էջ 285:



Սիմեոն գրիչ, գրչության նմուշ, ՍՍ, ձեռ. թիվ 208, 156ա

Հարկավ, Աղթամարում ձեռագրեր են գրվել ավելի վաղ, հատկապես 1113 թվականից հետո, երբ Արծրունյաց Դավիթ եպիսկոպոսը հիմնեց տեղի կաթողիկոսական աթոռը, սակայն գրչության կենտրոնից մեզ հասած հնագույն ձեռագիրը 1277 թվականի է՝ ստեղծված Սիմեոն գրչի ձեռքով (ՄՄ, ձեռ. թիվ 208). «... գրեցաւ ծաղկազարդ եւ տիեզերալոյս Գործք սրբոց Առաքելոցն ձեռամբ յոգնամեղ ոգւոյ Սիմեոնի, ի խնդրոյ Խաչատուր քահանայի, ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչին»¹: Արդեն հաջորդ՝ 14-րդ դարում հանդիպում ենք աղթամարցի գրիչներ Դանիել, Կարապետ, Ջաքարիա կրոնավորներին, Կարապետ քահանային, Գրիգորին ու Ավագին:

Դանիել կրոնավոր: Դանիելը որպես իր ուսուցիչ է հիշում Սիմեոն պատվական եւ սրբասեր քահանային. վերջինս թերեւս վերը նշված Սիմեոն գրիչն է: Դանիել գրչի ծնողներն են Շահապը եւ Թամարը, որոնք 1306թ. արդեն վախճանվել էին: Գրիչն իր հիշատակարաններում նշում է նաեւ իր եղբայրներին ու քույրերին, հոգեւոր եղբայրներին՝ Ստեփանոս եւ Հովհաննես կրոնավորներին, որոնք օգնում էին ջանադիր գրչին թուղթ տրամադրելով: Դանիել գրչից մեզ հասած առաջին ձեռագիրը Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկն է 1303թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10451). ձեռագիրը գրվում է Ջաքարիա Ա Աղթամարցի Կաթողիկոսի պատվերով Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփաննոս Օրբելյանի համար: 1306թ. գրիչն ընդօրինակում է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց» երկը կրկին Ջաքարիա Աղթամարցի Կաթողիկոսի պատվերով, այս անգամ Լիմ անապատի համար (ձեռագիրը կորած է), 1307թ.՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկը (ՄՄ, ձեռ. թիվ 4881), 1309թ.՝ Պողոս առաքյալի թղթերը (ձեռագիրը կորած է), 1312թ.՝ Ճաշոց, որը 1371թ. հավելում է Ջաքարիա գրիչը (ՄՄ, ձեռ. թիվ 4687), 1312թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4801), 1313թ.

¹ Մայր ցուցակ հայրենէն ձեռագրաց Մաշտոցի անուան Սատենադարանի, հ. Ա, Երեւան, 1984, էջ 929-932: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 469-470:

Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4890), 1316թ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 976). ընդ որում հիշատակարանների վկայությամբ՝ 1316թ. նա արդեն եպիսկոպոս էր:

Կարապետ կրոնավոր: Դանիել եպիսկոպոսի աշակերտն էր նրա եղբոր՝ Թովմայի որդի Կարապետ կրոնավորը: Կարապետ գրչի ընդօրինակմամբ մեզ հայտնի են հետեւյալ չորս ձեռագրերը՝ Ճաշոց, 1319թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4738), Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոցը», 1333թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4674), Ավետարան, 1354թ. (ՄՄ, ձեռ. թիվ 2843), Ավետարան, 1358թ. (ձեռագիրը կորած է), որոնց ծաղկողը Ջաքարիան է: Կարապետ կրոնավորի աշակերտներն են Ջաքարիա եւ Կարապետ գրիչները: Ըստ Ջաքարիայի՝ 1371թ. ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանի՝ այս թվականին Կարապետ կրոնավորն արդեն վախճանվել էր:

Ջաքարիա Աղթամարցի: Աղթամարի գրչության կենտրոնի ամենաակնառու գործիչներից է Ջաքարիա կրոնավորը: Ջաքարիայի ծնողներն են Սկրտիչ քահանան եւ Թանկխաթունը, եղբայրներն են Կարապետ



Ջաքարիա Աղթամարցի, Մոգերի երկրպագությունը, ՄՄ, ձեռ. թիվ 2843, 3բ



Զաքարիա Աղթամարցի, Սուրբ Մտևոյ,
ՄՄ, ձեռ. թիվ 4923, 2բ

քահանան, Յովհաննեսը եւ Խաչիկը. ընդ որում Կարապետը եւս ընդօրինակում էր ձեռագրեր, իսկ Յովհաննեսը՝ թուղթ կոկում: Նրանց ուսուցիչը, ինչպես նշեցինք, Կարապետ կրոնավորն է: Գրիչ եւ մանրանկարիչ Ջաքարիան այնպիսի մեծ հեղինակություն է վայելել, որ նրան անվանել են «փիլիսոփայ», «վարպետ»: 1371 եւ 1385թթ. Ջաքարիան ընդօրինակել եւ ծաղկել է երկու ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4687, 4870), իսկ 1390թ.՝ Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4941), որի կազմողը Սարգիս քահանան է: 1393թ. Ջաքարիան ընդօրինակել եւ նկարազարդել է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4908), իսկ 1399թ. Ավետարանի (ՄՄ, ձեռ. թիվ 5510) ընդօրինակմանը մասնակցել է նաեւ Դանիել սարկավազը (տե՛ս ստորել՝ Դանիել քահանա), նկարազարդմանը՝ Թումա քահանան¹: Անթվական են Ջաքարիայի ընդօրինակած երկու Ավետարանները.

¹ Այս Թումա քահանան հիշատակվում է Ջաքարիա փիլիսոփայի հետ երեք ձեռագրերում՝ այս, մեկ այլ եւ 1355թ. Գրիգոր գրչի ընդօրինակած Ավետարաններում: Նա հավանաբար եղել է Ջաքարիայի օգնականը:

սրանցից առաջինի ծաղկմանը մասնակցել է նաեւ Թուման (ՄՄ, ձեռ. թիվ 10522), երկրորդ ձեռագիրը մեզ չի հասել: Ջաքարիա Աղթամարցին ծաղկել է Կարապետ գրչի՝ 1358թ., Գրիգոր գրչի՝ 1355թ. (Թումայի հետ միասին), Ավագ գրչի՝ 1377թ., Դանիել եւ Կարապետ քահանաների՝ 1403թ. Ավետարանները¹:

Յուրօրինակ ծաղկող է Ջաքարիան: Մի դեպքում տերունական պատկերը նա նկարում է՝ հետեւելով տեղական, ավանդական ձեւին, մեկ այլ ձեռագրում նույն պատկերը տեսնում ենք հավելումներով եւ խմբադրումներով՝ հաճախ հիմքում ունենալով պարականոն պատումներ: Դ. Դակոբյանը նկատում է. «Նկարիչը երբեմն յուրովի փոխում է այս կամ այն սխեմայի որե-

¹ Ջաքարիա փիլիսոփան ծաղկել է նաեւ ձեռագրեր՝ գրված այլ գրչության կենտրոններում. 1357թ. գրչի եղբայր Կարապետ քահանայի Վանում (ՄՄ, ձեռ. թիվ 5332), 1365/66թթ. եւ 1368թ. Խիզանում Ստեփաննոս գրչի (ՄՄ, ձեռ. թիվ 10829, 5347), 1371թ. Թումա քահանայի (ՄՄ 6422) եւ 1387/88թթ. Սանուկ Ս. Նշանում Պետրոս գրչի (ՄՄ, ձեռ. թիվ 5480) ընդօրինակած Ավետարանները (տե՛ս Ա. Գեւորգյան, Դայ մանրանկարիչներ. մատենագիտություն. IX-XIX, Գահիրե, 1988, էջ 189-197):



Զաքարիա Աղթամարցի, Ղազարոսի հարությունը,
Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, ՄՄ, ձեռ. թիվ 4923, 5ա

և է մասնիկը կամ նույնիսկ ամբողջական հատվածը: Ըստ էության, Ջաքարիան դրանով ձգտում է հնարավորին չափ աշխուժացնել, ավելի լայն մեկնաբանել թեմաները՝ խուսափելով միանման ձեւերից»¹: 1354թ. ձեռագրում Սբ. Ծննդյան երկու պատկեր կա. մեկում հովիվների այցն է, մյուսում՝ մոզերի երկրպագությունը: Մինչդեռ 1403թ. ձեռագրում այս երկու պատումները միացված են:

Կարապետ քահանա: Ջաքարիա գրչի եղբայրն է Կարապետ քահանան (կողակիցը՝ Դուռմելեք): Նրանից մեզ հայտնի առաջին ձեռագիրը գրվել է Վանում՝ Սբ. Գեւորգ վանքում 1357թ.: Այնուհետ Կարապետին հանդիպում ենք Աղթամարում: 1368թ. ընդօրինակում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 10116), 1373թ.՝ Թումա անունով արեղայի հետ՝ ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 2001), 1378թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մատենանոց գութան» աղոթագիրքը (ՄՄ, ձեռ. թիվ 5558), 1389թ.՝ ճառընտիր, 1392թ.՝ Ավետարան (այս երկու ձեռագրերը կորած են): Ջաքարիա կրոնավորի եւ Կարապետ քահանայի արվեստի շարունակողներն են Կարապետի որդիներ Դանիել եւ Թումա գրիչները, եղբորորդիներ Թումա կրոնավորը եւ Գրիգորը (նրանց մասին ստորել՝ 15-րդ դարի գրիչների հատվածում):

Գրիգոր գրիչ: Գրիգորի ծնողներն են Անդրեասը եւ Փառացը, վարժապետերը՝ Մխիթարը եւ Տիրատուրը: Գրիչը 1353-54թթ. ընդօրինակում է ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 5600), 1355թ.՝ Ավետարան, որը ծաղկում են Ջաքարիա փիլիսոփան եւ Թումա քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 4915):

Ավագ դպիր: Ավագ գրչից միայն մեկ Ավետարան է մեզ հասել՝ գրված 1377թ.: Վաղածամ մահվան պատճառով գրիչը չի հասցնում այն գլխագրել եւ ծաղկել, ուստի եւ նրա գործը շարունակում է Ջաքարիա փիլիսոփան (ՄՄ, ձեռ. թիվ 6402):

14-րդ դարի ձեռագրերի մասին խոսքն ավարտելով՝ ավելացնենք, որ ըստ պահ-

¹ Յ. Յակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, հ. Ա, Երեւան, 1976, էջ 77:

պանված վկայության՝ 1363թ. Աղթամարում ընդօրինակվել է եւս մի Ավետարան, որը, ցավոք, կորած է, անհայտ է նաեւ գրչի անունը: 15-րդ դարում Աղթամարում գրված ձեռագրերն ավելի մեծաքանակ են: Առաջին գրիչը, որին մենք հանդիպում ենք այս դարաշրջանում, Դանիել քահանան է:

Դանիել քահանա: Դանիելը վերը նշված Կարապետ քահանայի որդին է: Նա իր հորից եւ հորեղբորից՝ Ջաքարիա փիլիսոփայից է ուսանել գրչության եւ մանրանկարչության արվեստները: Դանիելի կրտսեր եղբայրը Թուման է, ով օգնում էր նրան թուղթ կոկելով եւ միաժամանակ եղբորից սովորում գրչության արվեստը: 1436թ. Դանիել գրիչն արդեն քահանա է: Այս թվականին ընդօրինակած իր գրչագրում նա հիշում է կնոջը՝ Շամսախաթունին, եւ իրենց զավակներին: 1441թ. Ավետարանում Դանիելի որդիներից Ստեփաննոսն արդեն նշված է որպես կրոնավոր, Հովհաննեսն ու Ջաքարիան օգնում են իրենց հորը թուղթ կոկելով: Ձեռագրում գրիչը սիրով տալիս է նաեւ վանքի միաբանների անունները՝ «զսպասաւորքս սուրբ տաճարիս՝ զմեծ փիլիսոփայքն զԹումայ, եւ զՍարգիս, եւ զԽաչիկ,



Դանիել քահանա, Ընծայումը տաճարին, Սկրտություն, ՄՄ, ձեռ. թիվ 5543, 2ա



Դանիել քահանա, Չարույթուն,
ՄՄ, ձեռ. թիվ 5543, 5ա

եւ զՈհաննէս, եւ զԱւետիս, եւ զՅերապետ, զՅովաննէս փակակալ, եւ զԲարսեղ, եւ զՅովաննէս, եւ զՅուսէփ, եւ զաշակերտքն մեր՝ զՈհաննէս եւ զՅերապետ, որ հանապազ աղօթեն բազկատարած մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխարհի»¹:

Դանիելից մեզ հայտնի վաղագույն ձեռագիրը 1403թ. Ավետարանն է, որը նա գրում է իր հոր՝ Կարապետ քահանայի հետ: Թուղթը կոկում է Թուման, նկարագարողում Ջաքարիա փիլիսոփան (ՄՄ, ձեռ. թիվ 4923): 1404թ. Դանիելն ընդօրինակում եւ նկարագարողում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4787), 1409թ.՝ ճառընտիր (ՄՄ, ձեռ. թիվ 994), 1412թ.՝ ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 9093), 1436թ.՝ Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5543), 1441թ.՝ Ավետարան, որը ծաղկում է Թումա Մինասենցը (ՄՄ, ձեռ. թիվ 5515), 1444թ.՝ ճաշոց (ձեռագիրը կորած է): Դանիել քահանան ծաղկել է իր եղբայր Թումայի 1418 եւ 1433թթ. ընդօրինակած Ավետարանները (ՄՄ, ձեռ. թիվ 5512, 4963)²:

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, մասն Ա, էջ 524:

² Տե՛ս Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն. IX-XIX դդ, Գահիրէ, 1998, էջ 154-156:

Դանիելի վրա մանրանկարչության բնագավառում մեծ է իր ուսուցչի՝ Ջաքարիա փիլիսոփայի ազդեցությունը: Թե՛ պատկերագրության եւ թե՛ ոճի առումով Դանիելի մանրանկարներն աչքի են ընկնում պարզությամբ եւ անմիջականությամբ:

Թումա կրոնավոր (որդի Կարապետի): Թումա գրիչը Դանիել գրչի կրտսեր եղբայրն է եւ աշակերտը, նրա հայրը Կարապետ քահանա գրիչն է, հորեղբայրը՝ Ջաքարիա փիլիսոփան: Թումայից մեզ հասել է մի Ավետարան՝ գրված 1418թ., որը մանրանկարում եւ կազմում է Դանիել քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5512): 1422թ. Թուման ավարտում է Վարագա վանքում սկսած Աստուածաշնչի ընդօրինակումը (ՄՄ, ձեռ. թիվ 207): 1426թ. Թուման ընդօրինակել է եւս մի Ավետարան¹:

Թումա կրոնավոր (որդի Խաչիկի): Թուման ու նրա եղբայր Գրիգոր քահանան Կարապետ եւ Ջաքարիա գրիչների եղբոր՝ Խաչիկի զավակներն են, նրանց մայրն Ազիզմելեքն է: 1421թ. Թումա կրոնավորը, ում կոչել են հռչակավոր քարտուղար, գրում եւ ծաղկում է ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4695):

Աղթամարի վանքում գրված, սակայն կորած երեք ձեռագրերի մասին եւս տեղեկություններ ունենք, որոնցից յուրաքանչյուրի գրիչն իրեն անվանում է Թումա կրոնավոր: Սրանցից առաջինն Ավետարան է եւ գրվել է 1418թ., երկրորդը՝ ճաշոց (1419թ.), երրորդը՝ Հայսմավուրք (1442թ.): Պահպանված համառոտ հիշատակարանները հիմք են տալիս ենթադրելու, որ սրանցից առաջին երկուսը պատկանում են երկրորդ Թումա կրոնավոր գրչին, իսկ երրորդը՝ Դանիել գրչի եղբայր Թումա կրոնավորին:

Գրիգոր քահանա: Խաչիկի որդին եւ Թումա կրոնավորի եղբայրն է արդյունավոր գրիչ եւ մանրանկարիչ Գրիգոր քահանան: 1444թ. նա ընդօրինակել է Հայսմավուրք

¹ 1433թ. Ուրանց գյուղում Թուման ընդօրինակում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4963), որը ծաղկում է նրա եղբայրը՝ Դանիել քահանան: Այս ձեռագրի հիշատակարանում Թուման նշում է, որ պատերազմի հետեւանքով իրենք փախստական են եղել Աղթամարից:



Գրիգոր քահանա, Քրիստոս պատարագելիս,
ՄՄ, ձեռ. թիվ 4830, 4ա

(ՄՄ, ձեռ. թիվ 3806), նույն թվականին՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4846), 1449, 1452, 1454 թթ.՝ երեք Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4928, 4830, 9274): 1461 թ. Գրիգորը գրում է ճառընտիր (ձեռագիրը կորած է):

Գրիգոր քահանայի որդին է Թումա քահանան, որը նախապես օգնում էր հորը՝ ձեռագրերի թղթերը կոկելով: Մեզ են հասել նաև երեք ձեռագրեր՝ գրված նրանց երկուսի կողմից, երբ Թուման արդեն քահանա էր: 1461 թ. նրանք ընդօրինակում են Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 7846), 1462 թ.՝ Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 7632), 1463 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 2788): Հնուտ լինելով մանրանկարչության արվեստի մեջ՝ Գրիգորն ինքն է նկարագրողել իր բոլոր ընդօրինակությունները, նաև 1453 թ. Ստեփաննոս գրչի ընդօրինակած Ավետարանը (ՄՄ, ձեռ. թիվ 5513): Գրիգորի մանրանկարներն թե՛ պատկերագրությամբ եւ թե՛ ոճով աչքի են ընկնում վասպուրականյան դպրոցին հատուկ պարզությամբ եւ միմյանց նմանությամբ:

Թումա քահանա (որդի Գրիգորի): Թուման իր հորից՝ Գրիգոր քահանայից է սովորել գրչության արվեստը եւ նրա հետ ընդօրինակել առաջին ձեռագրերը: 1499 թ. իր հիշատակարանում նշում է նաև իր հորեղբորը՝ Թումա կրոնավորին, եւ ասում, որ նա հռչակավոր քարտուղար էր՝ Կոռճով մականունով: 1463 թ. Թուման ընդօրինակում է Մաշտոց (ձեռագիրը մեզ չի հասել), 1471 եւ 1476 թթ.՝ երկու Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 2632, 5333), որոնք մանրանկարում է Կարապետ քահանան՝ գրչի համշիրակ եղբայրը, այնուհետեւ 1484 թ.՝ Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 4767), 1494 թ.՝ Ավետարան (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 403), 1499 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 6326), որը նկարագրում է Հովսեփ ծաղկողը¹: Անթվական է Թումայի ընդօրինակած Ավետարաններից մեկը, որի ծաղկողը Մինասն է (ՄՄ 5519):

Թումա Մինասենց: Գրիչ, մանրանկարիչ եւ ժամանակագիր Թումա Մինասենցին առաջին անգամ հանդիպում ենք 1420 թ.՝ Ավետարան ընդօրինակելիս, վերջին անգամ՝ 1455 թ. մի հիշատակարանում, ուր նշվում է նրա մահվան մասին²: Թումայի ծնողներն են Սիմեոնը եւ Արղունը, քույրերը՝ Ոսկետիկինը եւ Անղալատը: Նա երախտագիտությամբ է հիշում իր քեռուն եւ ուսուցչին՝ Թումա Միայնակյացին. «...եւ թողութիւն մեղաց խնդրել ի Քրիստոս ինձ, եւ ծնաւոցս իմոց՝ Սիմեոնի եւ Արղունի... այլեւ երախտաւոր քեռոյն իմոյ եւ ուսուցչին՝ Թումա Միայնակեցին»³: Թումա Միայնակյացն Աղթամարի Ջաքարիա Բ նահատակ (1369 – 1393) եւ Դաւիթ Գ (1393 – 1433) կաթողիկոսների եղբայրն է⁴: Թումա Մինասենցը հիշում է նաև իր հորեղբորը՝ Վարդանին, եւ նրա որ-

¹ Հովսեփ ծաղկողը նկարագրողել է նաև Մատթոս գրչի երեք ձեռագրերը (տե՛ս ավելի վար):

² Թուման կազմել է նաև մի «Տարեգրություն», որն սկսվում է 1412 թվականին վերաբերող տեղեկությամբ, որից կարելի է ենթադրել, թե նա իր գրական, մատենագրական եւ գրչական գործունեությունն սկսել է հենց այս ժամանակից:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, մասն Ա, էջ 377, տե՛ս նաև էջ 564, 584:

⁴ Ն. Ակինեան, Գաւազանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 110:



Թումա Մինասենց, Համբարձում,
ՄՄ, ձեռ. թիվ 4829, 4ա

դուն՝ Սկրտիչ կրոնավորին: Վերջինս 1425թ. նկարագարդում է Թումայի ընդօրինակած ձեռագիրը, իսկ 1428 թ. Թուման իր ձեռագրում հիշում է նրան ննջեցյալների շարքում: Ժամանակակիցների կողմից «մեծ փիլիսոփայ» կոչված Թուման նաեւ բանուսույց վարդապետ է. նրա աշակերտներից է քրոջ՝ Ոսկետիկինի որդի Հայրապետ սարկավազը (հետագայում՝ արքեպիսկոպոս), ով սկզբնական շրջանում ուսուցչին օգնում էր ձեռագրերի թղթերը կոկելով: 1445 թ. իր Գանձարանում Թուման նշում է մեկ այլ աշակերտի եւս՝ Ներսես սարկավազին: Հետագայում, արդեն եպիսկոպոս, Ներսեսն իր հիշատակարաններում խորին ակնածանքով է հիշատակում իր ուսուցչին Թումային:

1420թ. Թուման ընդօրինակում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5514), 1425թ.՝ եւս Ավետարան, որը ծաղկում է նրա հորեղբորորդին՝ Սկրտիչ կրոնավորը (ՄՄ, ձեռ. թիվ 5542), 1428թ. գրում եւ մանրանկարում է հերթական Ավետարանը, որի համար թուղթ պատրաստելիս օգնում է նրա

քրոջ որդին՝ Հայրապետ սարկավազը (ՄՄ, ձեռ. թիվ 6324): 1442թ. Աղթամարի վանքի գրիչներից Թումա կրոնավորն ընդօրինակում է Հայսմավուրք եւ հիշատակարանում նշում, որ սկիզբը գրել է Թումա Մինասենցը¹: 1444 թ. Թուման իր աշակերտ Հայրապետ արեղայի հետ միասին ընդօրինակում է Ավետարան, ապա ինքը ծաղկում եւ կազմում է այն. ի դեպ, նկարում է նաեւ ստացողներին՝ եղբայրներ Ծերուն արեղային եւ Թումային (ՄՄ, ձեռ. թիվ 4829), 1445թ.՝ Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 5521), նույն թվականին՝ Մաշտոց (ձեռագիրը կորած է): 1447 թ. Մովսես Ուրանցու խնդրանքով գրում, նկարագարդում եւ կազմում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4436)՝ հիշատակարանում նշելով, որ ինքը ծերացած եւ տկարացած էր, սակայն չցանկանալով մերժել ձեռագրի պատվիրատուին՝ Մովսես քահանային, ընդօրինակում է մատյանը. «Եւ արդ, ես՝ ...Մինասենց Թումայս, անուամբ եւեթ արեղայ՝

¹ Ղ. Փիրղալենեան, Նօտարք հայոց, Կ. Պօլիս, 1888, էջ 128, թիւ 137: Ձեռագիրը կորած է:



Թումա Մինասենց, Հորեղբայրայն աթոռ եւ իոզեգալուտ,
ՄՄ, ձեռ. թիվ 4829, 4բ



Թումա Մինասենց, Դժոխքի ավերումը,
ՄՄ, ձեռ. թիվ 6324, 8ա

եղկելի ոգիս, տեսի զփափագ եւ զսէր Մովսէս քահանային, զոր ունէր առ հոգեւորսն, եւ ինով ծերացեալ անձամբս եւ տկարացեալ մարմնովս յանձն առի զըծագրել զսա ինով իսկ մեղսամած մատամբս, եւ ամենակարող զարութեամբն Աստուծոյ կատարեցի զաստուածախօս կըտակս զայս յաստուածապահ կըղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գերահռչակ եւ երկնանման Սուրբ Խաչ տաճարիս, եւ Սուրբ Փրկչիս, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Սարգիս Զաւրավարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի... (1447)»¹: 1452 թ. գրիչն ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը (ձեռագիրը կորած է): 1455 թ. սկսում է մի ճաշոց ծիսամատոյանի ընդօրինակությունը (ՄՄ, ձեռ. թիվ 9216), սակայն վախճանվում է ձեռագիրը ավարտին չհասցրած: Այն շարունակում է Հայրապետ արեղան:

Թումա Մինասենցը ինչպես գրչության արվեստի, նույնպես եւ մանրանկարչության

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Ա, էջ 608-609:

հիանալի գիտակ է¹: Նրա մանրանկարչական արվեստի մասին Զ. Հակոբյանը գրում է. «Բացառությամբ «Ավետումն», «Պատարագի մատուցում», «Ուտնվա», «Դժոխքի ավերումը» եւ «Սբ. Հոգու գալուստը» նկարների, որոնք պատկերագրական նոր ձեւ են ներկայացնում, մյուս բոլոր սխեմաները գրեթե նույնությամբ վերցված են Աղթամարի նախորդ նկարիչների ստեղծագործություններից»²: «Վերջին ընթրիք» պատկերի փոխարեն Քրիստոս պատարագ է մատուցում աշակերտներին: «Դժոխքի ավերումը» թեմայում պատկերված է խավար ու սեւ դժոխքը, ուր իջել է Տերը՝ ծանր խաչափայտը ձեռքին: Նրա մի կողմում նախաստեղծերն են՝ Ադամը, Եվան, Աբելը, մյուս կողմում՝ Դավիթ եւ Սողոմոն թագավորը, Հովհաննես Մկրտիչը: Աղթամարում իրենց հորինվածքային դասավորություններով առանձնահատուկ այս պատկերները, այնուհանդերձ, բազմիցս պատկերված են այլ գրչության կենտրոնների վարպետների գործերում: Զաքարիան մեծ հմտությամբ է գծագրել նաեւ լուսանցազարդերն ու զարդագրերը:

Հայրապետ արեղա: Հայրապետ գրիչը Թումա Մինասենցի քրոջ որդին է եւ աշակերտը: Նրա ծնողները խաչատուրն ու Ոսկետիկինն են, եղբայրը՝ Հովհաննեսը: Հովհաննեսի որդի Կարապետ քահանան Հայրապետ գրչի աշակերտն է: Նա նաեւ մանրանկարիչ է եւ ծաղկել է ուսուցչի գրչագրերը: Առաջին ձեռագիրը Հայրապետը գրել է իր ուսուցիչ Թումա Մինասենցի հետ 1444թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4829): 1446 թ. Թումայի պատվերով Հայրապետն Ավետարան է ընդօրինակել (ձեռագիրը կորած է): 1455 թ. նա ավարտին է հասցրել իր ուսուցչի սկսած վերջին մատյանը (ՄՄ, ձեռ. թիվ 9216).

¹ Բացի իր վերոնշյալ ձեռագրերից՝ Թումա Մինասենցը ծաղկել է նաեւ Դանիել քահանայի 1441թ. Ավետարանը (ՄՄ, ձեռ. թիվ 5515), Ցիպնա վանքում Հովհաննես կրոնավորի Ավետարանը (ՄՄ, ձեռ. թիվ 5535) (տես Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն. IX-XIX, էջ 242-245):
² Զ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, հ. Ա, էջ 105: Խոսքը 1428թ. ընդօրինակված Ավետարանի մասին է (ՄՄ, ձեռ. թիվ 6324):



Կարապետ Աղթամարցի, Խաչելություն,
ՄՄ, ձեռ. թիվ 7585, 6բ

«...զընտրեալ փիլիսոփայն զՄինասենց Թու-
նայն՝ զքեռին իմ, որ զգիրքս զայս ի Ծննդե-
նէն մինչ ի Ծառզարդարն նա է զծագրեալ
եւ յայսմ ամի դառն կըսկծանաւք մարմնոյն
փոխեցաւ առ Քրիստոս: Վասն որոյ յերես
անգեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր՝ բոլոր
սրտիւ ու ուղիղ մտօք Աստուած ողորմի ասա-
ցէք Մինասենց Թունին...»¹: 1459 թ. ընդօրի-
նակուն է Ավետարան, որը ծաղկուն է իր եղբո-
րորդին՝ Մուրատ սարկավազը (հետագայում՝
Կարապետ քահանա) (ՄՄ, ձեռ. թիվ 5417),
նույն թվականին՝ մեկ Ավետարան եւս (ծեռա-
գիրը կորած է), 1467 թ.՝ ճառընտիր (ծեռագի-
րը կորած է), 1470 թ.՝ Ավետարան (ՄՄ, ձեռ.
թիվ 8928), 1471 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ
4775), 1476 թ.՝ ճառընտիր (ծեռագիրը կորած
է), 1478 թ.՝ Ավետարան (Նոր Ջուղա, ձեռ. թիվ
527), 1480 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 5581),
1484 թ.՝ Ավետարան (ծեռագիրը կորած է),
1490 թ.՝ Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 7585): Հայ-
րապետ արեղայի ձեռագրերի մեծ մասը ծաղ-
կել է նրա եղբորորդին՝ Կարապետ քահանան:

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար,
մասն Բ, էջ 57-58:

Նրանց համատեղ աշխատանքի արդյունքն է
նաեւ Հայրապետից հայտնի վերջին մատյա-
նը՝ 1492 թ. Մաշտոցը (ՄՄ, ձեռ. թիվ 4201):

Կարապետ քահանա: Կարապետ ծաղկողի
(մինչ քահանայություն՝ Մուրատ սարկավազ)
ծնողներն են Հովանեսն ու Շարմելիքը, հո-
րեղբայրը՝ Հայրապետ արեղան: Նրա ուսու-
ցիչը Մինասն է, ինչպես նշում է Հակոբ կոր-
նավորի՝ 1460թ. ընդօրինակած եւ իր ծաղկած
ձեռագրում (ՄՄ, ձեռ. թիվ 7627): Կարապետը,
որպես հմուտ նկարիչ, պատկերազարդել է
Հայրապետ արեղայից մեզ հասած գրեթե բո-
լոր ձեռագրերը¹, Ներսեսի ընդօրինակած մեկ
եւ Հակոբի՝ երկու գրչագրերը, Թունա քահա-
նայի՝ 1471 թ. եւ 1476 թ. ընդօրինակություննե-
րը²: Մեզ հասել է Մաշտոց, որը նա 1492թ. ըն-
դօրինակել է Հայրապետ արեղայի հետ, ապա
ծաղկել եւ կազմել է (ՄՄ, ձեռ. թիվ 4201): 1496
եւ 1498թթ. Կարապետը գրում եւ ծաղկուն է

¹ ՄՄ, ձեռ. թիվ 8928, 4775, 7585, Նոր Ջուղա, ձեռ. թիվ
527:

² ՄՄ, ձեռ. թիվ 5702, 7627, 9233, 2632, 5333: ՄՄ, ձեռ.
4955. այս ձեռագրի գրչության վայրը Աղթամարը չէ,
սակայն ծաղկողը մեզ հայտնի Կարապետ Աղթա-
մարցին է:



Կարապետ Աղթամարցի, Նարություն,
ՄՄ, ձեռ. թիվ 7585, 8ա

եւս երկու Մաշտոց (առաջինը կորած է, երկրորդը՝ ՄՄ, ձեռ. 5181), 1501թ.՝ Մայր Մաշտոց (ձեռագիրը կորած է): Կարապետ ծաղկողը նկարագարողել է նաեւ այլ գրչության կենտրոններում գրված ձեռագրեր¹:

Ներսես արքեպիսկոպոս: Ներսես գրչի ծնողներն են Գուռջիբեկն ու Էմնա խաթունը, ուսուցիչը՝ Թումա Մինասենցը, իսկ եղբայրը՝ Ստեփանոս Դ կաթողիկոսը: Ներսես գրիչը տիրապետում է նաեւ մանրանկարչության արվեստին. նրան են վերագրվում իր իսկ ընդօրինակած որոշ ձեռագրերի նկարագարումները (ՄՄ ձեռ. թիվ 3848, 5544)²:

1449թ. Ներսես գրիչն ընդօրինակել է Ավետարան (ձեռագիրը կորած է): Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1457թ. Ներսես արքեղան եւս երկու Ավետարան է ընդօրինակել, մեկ ուրիշը՝ 1461թ., սակայն դրանք նույնպես մեզ չեն հասել: Պահպանված ձեռագրերից են 1458 եւ 1460թ. Ավետարանները (ՄՄ, ձեռ. թիվ 3848, 5544): 1470թ. Ներսեսն արդեն եպիսկոպոս է եւ ընդօրինակում է Մաշտոց, որը ծաղկում է Կարապետ քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5702): 1475թ. Ներսես գրիչը, արդեն արքեպիսկոպոս, ընդօրինակում է Ավետարան, որի հիշատակարանում նշում է ծնողներին, նաեւ եղբորը՝ Ստեփանոսին, որն արդեն Աղթամարի Կաթողիկոսն էր (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 409): 1489թ. Ներսեսն ընդօրինակում է Հայսմավուրք (ՄՄ, ձեռ. թիվ 4728), որի հիշատակարանում թեւ գրչության վայրը նշված չէ, սակայն պարզ է, որ Աղթամարի վանքն է: Այդտեղ Ներսեսը դառնը կսկիծով գրում է, որ նույն այդ թվականին վախճանվեց իր եղբայրն ու Աղթամարի կաթողիկոս Ստեփաննոսը:

¹ Օրինակ՝ 1463թ. Բերդաձոր վանքում Մարգարե գրչի (ՄՄ, ձեռ. թիվ 4837), 1474թ. Հիզանում Հովսեփ գրչի (ՄՄ, ձեռ. թիվ 5738), 1498թ. Առնաց գյուղում Յովաննես գրչի (ՄՄ, ձեռ. թիվ 4955) ընդօրինակած Ավետարանները եւ այլ մատյաններ (ՄՄ, ձեռ. թիվ 10128, 6355) (տե՛ս Ա. Գեւորգյան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, էջ 285-291):

² 1474թ. Ներսես եպիսկոպոսը ծաղկում է խիզանում Հովհաննես քահանայի ընդօրինակած ձեռագիրը (ՄՄ, ձեռ. թիվ 4779) (տե՛ս Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն, էջ 585-586):

Թումա կրոնավոր (Ներսեսի սան): Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1495թ. Աղթամարում Թումա անունով կրոնավորն ընդօրինակում է Ավետարան: Հիշատակարանում նշում է, որ իր ուսուցիչը Ներսես արքեպիսկոպոսն է՝ Ստեփանոս Կաթողիկոսի եղբայրը: Ցավոք, նրա գրչագիրը մեզ չի հասել:

Հակոբ կրոնավոր: Հակոբի ծնողներն են Հովսեփը եւ Փաշամելիքը, ուսուցիչներն են Հայրապետ կրոնավորը (հավանաբար մեզ հայտնի Հայրապետ գրիչը), Հովհաննես կրոնավորը եւ տեր Թուման: 1458թ. Հակոբ գրիչն ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 959): 1460թ.՝ Ավետարան, որը ծաղկում է Մուրադ սարկավազը (իմա՝ Կարապետ քահանա ծաղկողը) (ՄՄ, ձեռ. թիվ 7627): 1484թ. ընդօրինակում է Ավետարան, որի ծաղկողը եւս Կարապետն է (ՄՄ, ձեռ. թիվ 9233): Այս ձեռագրի օրինակը նրան շնորհում է իր վարպետ Հովհաննես կրոնավորը: 1493թ. գրիչն ընդօրինակում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4937), որը ծաղկում է Պարսամը¹:

Մատթեոս արքեղա: Մատթեոս գրչի ծնողներն են Կարապետը եւ Խոնձախաթունը, նրա հորեղբայրը Հովհաննես եպիսկոպոսն է, ուսուցիչը՝ Հակոբ կրոնավորը (հավանաբար մեզ հայտնի Հակոբ գրիչը): Մատթեոսից մեզ է հասել երեք Ավետարան եւ մեկ Շարակնոց: Շարակնոցը գրվել է 1491թ. (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1741): Երեք Ավետարանների ծաղկողն էլ Հովսեփ կրոնավորն է, երկուսի կազմողը՝ Աբրահամ Արծկեցին: Ձեռագրերից առաջինը գրվել է 1496թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10956), մյուս երկուսը՝ 1497թ. (ՄՄ, ձեռ. թիվ 158, 3534):

Գրիգոր արքեղա: Գրիգորի ծնողներն են Սեթը եւ Խալ խաթունը (Սարգիս եւ Խալիմ), ուսուցիչն է Թումա քահանան (թերեւս Գրիգոր գրչի որդի Թումա քահանա գրիչը):

¹ Պարսամի 1491թ. նկարագարո՞ած մեկ Ավետարան եւս ունենք, որում, սակայն, գրչության վայրը եւ գրիչը նշված չեն՝ ՄՄ, ձեռ. թիվ 9660 (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, մասն Գ, էջ 184):



Յովսէփ կրօնավոր, Այլակերպություն,
ՄՄ, ձեռ. թիվ 158, 3բ

Գրիգոր արեղայից մեզ է հասել երկու Ավետարան՝ գրված 1470 եւ 1497թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 4970, Օքսֆորդ, 9), իսկ 1479թ. գրված Ավետարանը համարվում է կորած:

Հովհաննես արեղա: Հովհաննես գրիչը 1484 եւ 1485թթ. ընդօրինակել է երկու Շարակնոց (ՄՄ, ձեռ. թիվ 1585, երկորորդ կորած է), 1489թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը (ՄՄ, ձեռ. թիվ 5177):

Մկրտիչ գրիչ: Մկրտչի ծնողներն են Թուման եւ Շահլբաթը: Նրանից մեզ է հասել երկու ձեռագիր. Մաշտոց՝ ընդօրինակված 1460 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5470), եւ Գանձարան՝ 1466 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5376):

Ստեփաննոս արեղա: Ստեփանոսի ծնողներն են Մկրտիչն ու Գոհարմելեքը, նա հիշում է նաեւ իր եղբայրներին եւ քրոջը: Այս գրչից մեզ հասել է երեք Ավետարան՝ գրված 1452թ. (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 55), 1453թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5513), երրորդը կորած է, եւ հայտնի չէ

նաեւ գրչության թվականը: Հավանաբար նրան է պատկանում նաեւ 1447թ. Աղթամարում ընդօրինակված ճաշոցը:

1467թ. Աղթամարում Կիրակոս Ջոշկանցը ավարտին է հասցնում մի ճառընտիրի ընդօրինակություն, որն սկսել էր Բաղեշում (ձեռագիրը կորած է): Կիրակոս գրիչը որպէս իր ուսուցիչներ նշում է նշանավոր գրիչ Հովհաննես Մանկասարենցին եւ տեր Թումային: 1492թ. անանուն գրիչը Թումա Մինասենցի Գանձարանից ընդօրինակություն է կատարում (ՄՄ, ձեռ. թիվ 4782): Ձեռագրում թեւ գրչության վայրը նշված չէ, սակայն Թումա Մինասենցի հիշատակարանից գիտենք, որ նա իր Գանձարանն ընդօրինակել էր Աղթամարի Սբ. Խաչի միաբանների համար (ՄՄ, ձեռ. թիվ 5521), ուստի եւ կարող ենք ենթադրել, որ անանուն գրչի ընդօրինակությունը եւս Աղթամարում է եղել: 1494թ. Աղթամարում գրվել է Ավետարան, որը մեզ չի հասել, պահպանված հիշատակարանը չի տալիս գրչի անունը, այլ միայն ստացողինը՝ Հովհաննես:

16-17-րդ դդ. Աղթամարում գրված քիչ թվով ձեռագրեր են հասել մեզ: Հովսէփ գրիչն ընդօրինակել է Ժողովածու 1503 թվականին (ՄՄ, ձեռ. թիվ 2033) եւ երեք Շարակնոց. առաջինը՝ 1504թ., մյուսները՝ 1512թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 10741, Վենետիկ ձեռ. թիվ 770, 1365): 1511թ. Հովհաննես քահանան ընդօրինակում է Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 5226), 1526թ. Հակոբ գրիչը՝ Աղվեսգիրք (ձեռագիրը կորած է), 1560թ. Գրիգոր քահանան Ավետարան (ՄՄ, ձեռ. թիվ 4848), 1592թ. Սելքեսեթ գրիչը՝ Սաղմոսարան (ՄՄ, ձեռ. թիվ 5986):

1691թ. Թումա քահանան Ավետարան է ընդօրինակել (ՄՄ, ձեռ. թիվ 8888), 1666թ. Հայրապետ գրիչը՝ Աստվածաշունչ, որը հետագայում 17-րդ դարում գրված անթվական մեկ Աստվածաշունչի հետ դրվել է մեկ ընդհանուր կազմի մեջ (ՄՄ, ձեռ. թիվ 6753): Պահպանվել է նաեւ Ժողովածու, որի գրիչը տեր Սուքիասն է (ՄՄ, ձեռ. թիվ 10065): 17-րդ դարին վերագրվող մեկ այլ Ավետարանի գրչության թվականն ու գրիչն անհայտ

են (ՄՄ, ձեռ. թիվ 5578): 18-րդ դարից միայն մեկ ձեռագիր է հասել՝ Մաշտոց ձեռնադրության՝ գրված 1741թ. (ՄՄ, ձեռ. թիվ 6011):

Աղթամարյան վեց ձեռագիր էլ ունենք 19-րդ դարից: 1824թ. Հովհաննես Ե Կաթողիկոս Շատախցու (1823-1843) պատվերով Ղազար Խալիֆյանցը գրում է Աղթամարի Աթոռի պատմությունը (ՄՄ, ձեռ. թիվ 5467): 1887-1893թթ. Եզնիկ Ներկարարյան Մոկացու հեղինակած Քարոզգիրքը պատվիրել է Հովսեփ վարդապետ Թովմասյանը, ծաղկել Գեորգ վարդապետ Եղեսյանը (ՄՄ, ձեռ. թիվ 5264): 1889թ. Մատթեոս վարդապետ Խիզանցին ընդօրինակում է «Բուրաստան հոգեւոր» խորագրով Քարոզգիրք՝ նույնպես Հովսեփ վարդապետի համար (ՄՄ, ձեռ. թիվ 5270): Մխիթարյան միաբանության անդամ Ներսես վարդապետ Սարգիսյանն Աղթամարում ընդօրինակում է երկու ձեռագիր՝ Հովհան Ոսկեբերանի աշխատությունները՝ 1848/9թթ. (Վենետիկ, ձեռ. թիվ 652), «Հաւաքումն բանից նախնեաց»՝ 1849թ. (Վենետիկ, ձեռ. թիվ 678): Այս երկու ձեռագրերը մասամբ գրվել են Աղթամարի մոտակա գրչության կենտրոններում՝ Վան, Լիմ, Կտուց, Վարագ: Աղթամարի վերջին՝ Խաչատուր Բ Շիրոյան Կաթողիկոսի պատվերով ընդօրինակվում են երկու Ձեռնադրության Մաշտոցներ, որոնց գրիչներն անհայտ են (ՄՄ, ձեռ. թիվ 5534, 5564):

Ամփոփելով կարող ենք ասել, որ Աղթամարի վանքից մեզ հայտնի են շուրջ 135 ձեռագրեր, որոնց մեծամասը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Չի բացառվում, որ կան նաև Աղթամարում գրված այլ մատյաններ, որոնք կան զրկվել են հիշատակարանից, կամ հիշատակարաններում չի պահպանվել գրչության վայրի անունը: Սակայն այն, ինչ հասել է մեզ, արդեն իսկ մի մեծ մշակութային ժառանգություն է եւ անհերքելի ապացույցն այն բանի, որ այսօր հայությունից ամայացած Աղթամարում ողջ միջնադարում կերտվել է տոհմիկ հայկական մշակույթ:

Ավելացնենք, որ Աղթամարը, ինչպես նաև Վանա լճի մյուս կղզիները՝ Լիմ եւ Կտուց անապատներով, եղել են նաև ձեռագրապահպանման խոշոր կենտրոններ եւ չնայած Առաջին աշխարհամարտի տարիներին եղած ձեռագրական մեծ կորուստներին՝ այս վանքերից մի քանի հարյուր ձեռագիր է փրկվել ու տեղափոխվել Սուրբ Էջմիածին, իսկ այնտեղից՝ Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարան:

Աղթամարում գրված հայտնի ձեռագրերի ցանկը ներկայացնում ենք գրքի վերջում:



Զաքարիա Աղթամարցի, Սուրբ Սարգիս եւ Սուրբ Թեոդորոս, ՄՄ, ձեռ. թիվ 10522, 11բ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

«Արոյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝
Տեսնել Մանսի գլխին մի դրոճակ,
Եւ անն Կոռաթ Պաւտոս շաքար
Դիւել դե՞ր յոռոյնն սիրուն շարունիք»:

Րաֆֆի

Մեր գրականության փառքի կաղնի՞ն՝ Րաֆֆին, «Ձայն տուր, ո՞վ ծովակ...» հայրենասիրական հանրահայտ բանաստեղծության վերոնշյալ տողերը գրել է Աղթամարում 1857 թվականին՝ պատմական վայրի հիշատակներից ոգեշնչված եւ Հայաստանի լուսավոր գալիքի հույսով: Աղթամար կղզուն այդ ժամանակից ի վեր վանականներն այցելուներին ցույց են տվել մի քար, որի վրա նստած հիշյալ բանաստեղծությունն է գրել սիրված գրողը, եւ այդ քարն անգամ ստացել է հատուկ անուն՝ «Րաֆֆու քար»²:

Աղթամարը, որպես կաթողիկոսանիստ, Վասպուրականի եւ Վանա լճի շրջակա գավառների հայության համար հոգեւոր կենտրոն եւ ուխտավայր է եղել նաեւ նոր ժամանակներում: Պահպանված եզակի լուսանկարներից մեկը, որը պատկերում է Խաչվերացի տոմնի նշումն Աղթամարում 1895 թվականին, պատկերացում է տալիս, թե այստեղ ինչ բազմամարդ են եղել եւ ինչպիսի շուքով կատարվել տաղավար տոները, հատկապես Խաչվերացը, որն Աղթամարի ուխտի օրն էր: Լուսանկարի կենտրոնում Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյանն է, որը մահացել է այդ նույն թվականի դեկտեմբերի 22-ին եւ հողին հանձնվել վանքի գերեզմանոցում³: Այժմ ավերված այդ գերեզմանոցի տապանաքարերին պահպանված վաղազույն արձա-



Խաչվերացի տոնը
Աղթամարում 1895 թ.

¹ Գրող, ազգային-պետական գործիչ Ավետիս Ահարոնյանի խոսքերն են Րաֆֆու մասին:

² Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 69:

³ Տապանաքարի արձանագրությունը տե՛ս Յ. Ոսկեան, Վան-Վասպուրականի վանքերը, էջ 131-132:



Աղթամարյան կաթողիկոսական կոնդակ (1818 թ.)

նագրությունները 1348, 1364, 1376 թվականներից են (բոլոր արձանագրությունները հրատարակել է Ե. Լալայանը)¹:

Ցավոք ոչնչացել կամ կորել է Աղթամարի կաթողիկոսական դիվանը: Աղթամարյան երկու կոնդակի սեւագիր (Ստեփանոս Դ-ի ժամանակ կազմված) եւ մի օրինության գիր (Ջաքարիա Գ-ի ժամանակից) մեզ են հասել հատվածաբար՝ որպէս ձեռագրերի պահպանակներ²: Կաթողիկոսական կոնդակի մի եզակի օրինակ, գրված Չարություն կաթողիկոսի (մահ. մոտ 1823թ.) կողմից «ի գերահրաշ Սուրբ Աթոռս Աղթամարայ», Չայոց ՌՄԿԷ (1267+551), փրկչական 1818 թվականին, որը հանգանակության դիմում-շրջաբերական է, 1915թ. հայ կամավորներից գնել է Չակոբ Կարանյանցը, իսկ 1916-ին Ալեքսանդրապոլում այն տեսել, լուսանկարել եւ տեքստի հետ էջմիածնում հրատարակել է Մեսրոպ

¹ Ե. Լալայան, Վասպուրական..., էջ 17-20:
² Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ, էջ 261, 262:

վարդապետ Մաքսուդյանցը¹: Կոնդակի վերին աջ անկյունում խորքում, պատկերված է Սուրբ Էջմիածնի տաճարը, իսկ կենտրոնում՝ կղզու վրա՝ Սբ. Խաչը՝ հոգեւորականներով շրջապատված: Քիչ հեռվում նկարված է նաեւ Առտեր կղզին՝ փոքրիկ եկեղեցու եւ Մանկանը գրկած Աստվածամոր պատկերով:

Սբ. Էջմիածնի կաթողիկոսական դիվանում (այժմ՝ Մատենադարանում) պահվում է մի ուշագրավ ցանակ, որով Աղթամարի միաբանները («վիճակալինքս Աղթամարու Սրբոյ Աթոռոյն՝ հոգեւորականքս եւ մարմնականքս») դիմում են Ամենայն Չայոց կաթողիկոսին՝ խնդրելով ընտրված եւ Կ. Պոլսում իշխանության կողմից պաշտոնապես ճանաչված Գաբրիել արքեպիսկոպոսին հաստատել որպէս Աղթամարի կաթողիկոս (խոսքը 1851-1857թթ. Աղթամարի կաթողիկոս Գաբրիել Շիրոյանի մա-

